

**ՀՀ ԳԱԱ ՓԻԼԻՍՈՓԱՅԻՆՈՒԹՅԱՆ, ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ԵՎ ԻՐԱԿՈՒՆՔԻ
ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ԷՄԻԼ ՕՐԴՈՒԽԱՆՅԱՆ

ՀԱՅԿ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

**ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

ԵՐԵՎԱՆ - 2012

Գիրքը երաշխավորվել է տպագրության ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ:

**Հեղինակներ՝ քաղ. գիտ. թեկնածու Է.Հ. Օրդուխանյան
քաղ. գիտ. թեկնածու Հ.Հ. Սուքիասյան**

**Գիտական խմբագիր՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, սոց. գիտ.
դոկտոր, պրոֆեսոր Գ.Ա. Պողոսյան**

Գրախոս՝ քաղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Լ.Ղ. Շիրինյան

Տպաքանակը՝ 200 օրինակ

ISBN 978 - 9939 - 69 - 019 - 3

Գիրքը նվիրված է Հայաստանում քաղաքական մշակույթի առանձնահատկությունների բացահայտմանը և վերլուծությանը:

Գրքի առաջին գլխում ներկայացված են քաղաքական մշակույթի վերաբերյալ որոշ տեսական մոտեցումներ, ինչպես նաև սույն հետազոտության հիմնական հասկացությունները (քաղաքական խոսույթ, տեղեկատվական հասարակություն, քաղաքական գիտակցություն, քաղաքական վարքագիծ և մասնակցություն):

Գրքի երկրորդ գլխում ուսումնասիրվել են քաղաքական մշակույթի վերոհիշյալ տարրերը հայ հասարակությունում, որի արդյունքում բացահայտվել և վերլուծվել են 1991-2012թթ. Հայաստանում կայացած ընտրությունների ժամանակ ընտրազանգվածի մասնակցության դինամիկան, երիտասարդների քաղաքական ակտիվության և քաղաքական մասնակցության, քաղաքական բանավեճերի հիմնախնդիրները, քաղաքական ուժերի գաղափարական առանձնահատկությունները:

Գրքի երրորդ գլխում ուսումնասիրվել և վերլուծվել են քաղաքական մշակույթի առանձնահատկությունները տեղեկատվական հասարակության համատեքստում, բացահայտվել են էլեկտրոնային ժողովրդավարության առավելությունները և թերությունները, ներկայացվել են տեղեկատվական հասարակության զարգացման ցուցանիշները Հայաստանում:

Գիրքը կարող է օգտակար լինել քաղաքագետների, սոցիոլոգների, քաղաքական գործիչների, ինչպես նաև քաղաքական մշակույթի հիմնախնդրով հետաքրքրվող մասնագետների լայն շրջանակի համար: Այն կարող է նաև ծառայել որպես ձեռնարկ բուհերում հատուկ դասընթացներ կազմակերպելու համար:

Սույն հետազոտությունը իրականացվել է «Բարեպաշտ Սերունդ» հիմնադրամի կողմից տրամադրված դրամաշնորհի շրջանակներում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ	4
ԳԼՈՒԽ 1. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	6
1.1. Քաղաքական մշակույթ	6
1.2. Քաղաքական խոսույթ	15
1.3. Տեղեկատվական հասարակություն	18
1.4. Քաղաքական գիտակցություն	20
1.5. Քաղաքական վարքագիծ և քաղաքական մասնակցություն	21
ԳԼՈՒԽ 2. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹԻ ՀԱՍԱՏԵՔՍՏՈՒՄ.....	23
2.1. Ընտրությունները որպես քաղաքական մշակույթի տարր	23
2.2. Երիտասարդների քաղաքական մասնակցությունը քաղաքական խոսույթի համատեքստում	33
2.3. Քաղաքական բանավեճը որպես քաղաքական մշակույթի տարր	42
2.4. Քաղաքական ուժերի գաղափարական առանձնահատկությունները Հայաստանում	45
2.5. Քաղաքական մշակույթի առանձնահատկությունները Հայաստանում ..	57
ԳԼՈՒԽ 3. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ.....	71
3.1. Քաղաքական մշակույթի առանձնահատկությունները տեղեկատվական հասարակությունում	71
3.2. Ժողովրդավարությունը տեղեկատվական հասարակությունում	78
3.3. Էլեկտրոնային ժողովրդավարություն. առավելությունները և թերությունները	80
3.4. Տեղեկատվական հասարակության զարգացման ցուցանիշները Հայաստանում	90
ԱՄՓՈՓՈՒՄ	93

ԱՌԱՋԱԲԱՆ

Ժամանակակից աշխարհում այսօր տեղի են ունենում լայնածավալ և դինամիկ փոփոխություններ, որոնք իրենց ազդեցությունն են թողնում հասարակության քաղաքական համակարգի, կողմնորոշումների, դրանց փոխակերպումների և զարգացման գործընթացի վրա: Արդի աշխարհը թեև կոմպլեքս է նոր դարաշրջան, որտեղ վերոհիշյալ փոփոխությունները տեղի են ունենում գերարագ տեղեկատվական հոսքերի ազդեցության ներքո, ինչը պահանջում է դրանց ընկալման, վերլուծության և արձագանքման ավելի հստակ և կայուն մեխանիզմների մշակում: Այս ամենը, միանշանակ, վկայում է այն մասին, որ արդի փոփոխությունները ներգործում են նաև քաղաքական մշակույթի վրա:

Այս առանցքային գործընթացներից ամմասն չի մնում նաև Հայաստանը, քանի որ 1991թ. անկախացումից հետո մեզանում ևս հետխորհրդային շրջանում տեղի են ունենում բազմաթիվ հասարակական-քաղաքական կերպափոխումներ, որոնք ներգործում են հասարակության քաղաքական մշակույթի վրա, ինչը կարևորագույն նախապայման է պետության քաղաքական կայունության, անվտանգության ապահովման և ամրապնդման գործում:

Հայաստանում քաղաքական մշակույթը լի է բազմապիսի խնդիրներով, ինչը պահանջում է համապատասխան գիտագործնական ուսումնասիրություն և վերլուծություն, քանի որ դրանք արժևորում և ընդգծում են ազգի ինքնությունը և ինքնատիպությունը համաշխարհային մակարդակում:

Հետխորհրդային շրջանում հասարակական կարգի փոխակերպման արդյունքում առաջ եկան սկզբունքորեն նոր սոցիալ-հումանիտար փոփոխություններ, որոնք ունեցան տարբեր դրսևորումներ քաղաքական մշակույթի վրա: Քաղաքական վարչակարգերի փոփոխությունը հանգեցրեց նոր քաղաքական գաղափարախոսության ձևավորմանը՝ հիմնված ազատական-ժողովրդավարական արժեքների վրա: Քաղաքական դաշտ մուտք գործած նոր

քաղաքական ուժերն առաջարկեցին նոր գաղափարներ, որոնք դարձան նոր քաղաքական մշակույթի ձևավորման հիմքը:

Հասարակական կարգի փոփոխումը սոցիալիստականից կապիտալիստականի, ինչպես նաև քաղաքական վարչակարգի անցումը ամբողջատիրականից ժողովրդավարականի իրենց հետ բերեցին ոչ միայն դրական ձեռքբերումներ քաղաքական մշակույթում, այլև առաջացրեցին սկզբունքորեն նոր հակասություններ և խնդիրներ:

Քաղաքական մշակույթի առանձնահատկությունների և դրանց ուսումնասիրման մեխանիզմների մշակման համար կարևոր նշանակություն ունի քաղաքական խոսույթի ուսումնասիրությունը և վերլուծությունը, որը պարզաբանում է ոչ միայն քաղաքական ինստիտուտների փոխհարբերությունների տեսակը, դրանց առանձնահատկությունները, այլև մեծ ազդեցություն է թողնում քաղաքական մշակույթի ձևավորման վրա՝ լինելով նրա բաղկացուցիչ մասը:

Քաղաքական խոսույթի հետազոտությունը հնարավորություն է տալիս նաև չափել քաղաքացիական հասարակության, քաղաքական ինստիտուտների և գործընթացների, ժողովրդավարության զարգացման դինամիկան՝ պայմավորելով քաղաքական մշակույթը և նախանշելով նրա զարգացման հեռանկարները:

Ժամանակակից աշխարհում տեղեկատվական տեխնոլոգիաների բուռն զարգացումը և ներթափանցումը հասարակական կյանքի գրեթե բոլոր ոլորտներ որոշակիորեն ազդում են նաև քաղաքական մշակույթի վրա: Դրանց ազդեցությամբ քաղաքական մշակույթում առաջանում են նոր հասկացություններ, ինչպիսիք են՝ էլեկտրոնային ժողովրդավարությունը, էլեկտրոնային կառավարումը և էլեկտրոնային կառավարությունը և այլն՝ ստեղծելով նոր քաղաքական մշակույթի ձևավորման հիմքեր:

Այս տեսանկյունից քաղաքական մշակույթի ուսումնասիրության համար բազմաթիվ հայեցակարգերի շարքում կարևոր նշանակություն են ստանում արդիական այնպիսի գիտակարգեր, ինչպիսիք են՝ քաղաքական խոսույթի և տեղեկատվական հասարակության տեսությունները:

ԳԼՈՒԽ 1. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.1. Քաղաքական մշակույթ

Քաղաքական մշակույթը պատմականորեն ձևավորված և հարաբերականորեն կայուն քաղաքական գիտելիքների, գնահատականների և վարքագծի մոդելների, ինչպես նաև քաղաքական հարաբերությունները կարգավորող արժեքների, ավանդույթների և նորմերի ամբողջություն է: «Քաղաքական մշակույթ» հասկացությունն առաջին անգամ օգտագործել է 18-րդ դարի գերմանացի փիլիսոփա և լուսավորիչ Յ. Հերդերը, իսկ այս հասկացությունը քաղաքագիտություն է ներմուծել ամերիկացի քաղաքագետ Գ. Ալմոնդը 20-րդ դարի կեսին: Քաղաքական մշակույթն արտահայտվում է երեք մակարդակներում՝ անհատական, խմբային և հասարակական: Այն ընդգրկում է հանրային բնորոշ քաղաքական գիտակցության և քաղաքական վարքագծի նմուշները, գերիշխող պատկերացումները և արժեքային կողմնորոշումները, քաղաքական առասպելը, քաղաքական խորհրդանիշերը, քաղաքական մտակաղապարը, քաղաքական սոցիալականացումը և այլն: Քաղաքական մշակույթի ձևավորման կարևորագույն գործոնը քաղաքական գիտելիքներն են, որոնց ծավալը, խորությունը, ընկալելիությունը և ճշգրտությունը վերջին հաշվով պայմանավորում են քաղաքական գիտակցությունը և քաղաքական վարքագիծը: Քաղաքական մշակույթի նյութականացված արտահայտությունը քաղաքական ինստիտուտներն են, քաղաքական վարչակարգը, քաղաքական խորհրդանիշերը և այլն: Քաղաքական մշակույթը քաղաքական գիտակցության միջոցով առնչվում է քաղաքական գաղափարախոսության հետ:

Քաղաքական մշակույթը բազմաշերտ և բազմատարր երևույթ է: Դրա պատճառը հասարակության սոցիալական, էթնիկ և քաղաքական շերտավորումն է: Հետևաբար հասարակության մեջ միաժամանակ կարող են գործել մի քանի քաղաքական մշակույթներ՝ տիրապետող, քաղաքական ենթամշակույթներ և քաղաքական

հակամշակույթ: Տիրապետողում արտացոլվում են զանգվածների քաղաքական գիտակցությունը և վարքագիծը բնութագրող առավել բնորոշ հատկանիշներ: Քաղաքական ենթամշակույթը որևէ սոցիալական, էթնիկական, ժողովրդագրական խմբին բնորոշ տիրապետողից տարբերվող քաղաքական արժեքների և կողմնորոշումների ամբողջությունն է: Քաղաքական հակամշակույթը արմատապես տարբերվում է տիրապետող քաղաքական մշակույթից և հակադրվում է վերջինիս: Քաղաքական հակամշակույթը բնորոշ է դասակարգային հասարակությանը, որտեղ հակասություններն անչափ սրված են: Ըստ հասարակական արժեքների՝ տարբերում են բարձր, էլիտար, արխայիկ /հնամենի/, «շուկայական», բյուրոկրատական կամ պետական քաղաքական մշակույթ: Քաղաքական մշակույթն իրականացնում է կողմնորոշման, սոցիալականացման, հաղորդակցման, ճանաչողական, ինտեգրման և այլ գործառույթներ:¹

Քաղաքական գիտության ուշադրությունը քաղաքական մշակույթի նկատմամբ պայմանավորված է բազմաափսի հանգամանքներով: Առանց այս սոցիալական երևույթի ուսումնասիրության անհնար է տալ յուրաքանչյուր հասարակության քաղաքական կյանքի, ինչպես նաև գործող քաղաքական համակարգի ընդհանուր բնութագիրը: Քաղաքական մշակույթի, դրանում տեղի ունեցող փոփոխությունների հետազոտությունը թույլ է տալիս բացահայտել վերջինիս դերը քաղաքական գործընթացների զարգացման և ուղղվածության տեսանկյունից, կանխատեսել վերջինիս ընկալումը քաղաքական լուծումներ առաջարկող տարբեր սոցիալական ուժերի կողմից: Այս խնդրի արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ քաղաքական մշակույթը ներազդում է մարդու վրա հասարակության քաղաքական կյանքում իր տեղը և դերը որոշելիս:

Քաղաքական մշակույթի տեսության վերաբերյալ համակարգված ուսումնասիրությունները սկիզբ են առել արևմտյան ավանդական

¹ Պողոսյան Վ., Միրումյան Կ., Բաբաջանյան Ա., Աստվածատուրով Ա. Քաղաքագիտություն հանրագիտական բառարան, Երևան 2004, էջ 195-196:

քաղաքական գիտության շրջանակներում 20-րդ դարի 50-60-ական թվականներին: Շնորհիվ Գ. Ալմոնդի, Ս. Վերբայի, Ջ. Պաուելի, Կ. Ստրոմի, Ռ. Դալտոնի, Մ. Դյուվերթի² և այլ գիտնականների աշխատությունների՝ ձևավորվում է քաղաքական մշակույթի տեսությունը՝ դառնալով ուսումնասիրության ինքնուրույն առարկա և հետազոտության բնագավառ:

Ընդհանուր մշակույթի համատեքստում քաղաքական մշակույթը հանդես է գալիս որպես քաղաքականության ոլորտում հարաբերությունների որոշակի մոդել, որը բնութագրում է քաղաքական մտածողության և քաղաքական գործունեության միջև կապը: Արդյունքում, քաղաքական մշակույթի միջոցով մենք կարողանում ենք պատկերացում կազմել և դատել քաղաքական ինստիտուտների կազմակերպվածության մակարդակի, դրանց գործառնության բնույթի և միջոցների և, վերջապես, ամբողջ հասարակության քաղաքական կյանքի վերաբերյալ:

«Քաղաքական մշակույթ» հասկացությունը կիրառելի է ինչպես ամբողջ հասարակության, նրա դասերի, շերտերի և խմբերի, այնպես էլ՝ անհատի մակարդակում: Վերջինիս օգնությամբ նկարագրվում է սոցիալական սուբյեկտի՝ որպես քաղաքական սուբյեկտի գոյությունը:

Երբ խոսքը վերաբերում է հասարակությանը, ապա այս պարագայում քաղաքական մշակույթը ներառում է առավել կայուն և բնորոշ նախանշանների ամբողջությունը, որոնք հատուկ են սոցիալական սուբյեկտների ճնշող մեծամասնությանը, այսինքն՝ բնակչության հիմնական զանգվածի գիտակցությանը և վարքագծին:

Մասնագիտական գրականության մեջ առավել տարածված է Գ. Ալմոնդի և Ս. Վերբայի դասակարգումը, որի հիմքում ընկած են երկրների և տարածաշրջանների առանձնահատկությունները: Այս

² *Almond G., Verba S. The Civic Culture: Political Attitudes and Democracy in Five Nations. Princeton, 1963, 562 pages, Алмонд Г., Пауэлл Дж., Стром К., Далтон Р. Сравнительная политология сегодня, Издательство: Москва "АспектПресс", 2002, 537 с., Duverger M. La Démocratie sans le peuple, Paris, Editions du Seuil, 1967, 251 pages.*

առունով նրանք տարբերում են քաղաքական մշակույթի երեք մաքուր ձև՝ նահապետական, հպատակային և ակտիվ (մասնակցության կամ քաղաքացիական մշակույթ):³

Նահապետական քաղաքական մշակույթը բնութագրվում է տեղական արժեքների կարևորմամբ (ցեղի, ազգի, կլանի արժեքներ) և կարող է դրսևորվել տեղական պատրիոտիզմի, ընտանիքի արժևորման և կոռուպցիայի տեսքով: Այս դեպքում անհատը սակավ ընկալունակ է գլոբալ քաղաքական մշակույթին և չի կատարում ստույգ քաղաքական դերեր (օրինակ՝ ընտրողի դեր): Քաղաքական մշակույթի այս տեսակը բնորոշ է նորանկախ պետություններին, որտեղ քաղաքական մշակույթը տեղական ենթամշակույթների շերտավորումն է:

Հպատակային քաղաքական մշակույթը ենթադրում է անհատի կողմից պասսիվ և մեկուսի վերաբերմունք քաղաքական համակարգի նկատմամբ: Անհատը կողմնորոշվում է ավանդույթներով՝ չնայած, որ քաղաքականապես գիտակից է: Ենթարկվելով իշխանությանը՝ անհատն ակնկալում է տարբեր բարիքներ (սոցիալական նպաստներ, երաշխիքներ և այլն) և զգուշանում է վերջինիս բռնապետության վերածվելուց:

Մասնակցության քաղաքական մշակույթը տարբերվում է քաղաքական ակտիվությամբ, ներգրավվածությամբ և ռացիոնալությամբ: Այս դեպքում քաղաքացիները ձգտում են ակտիվորեն ներագդել քաղաքական մշակույթի վրա, ուղղորդել վերջինիս գործունեությունը ազդեցության օրինական միջոցներով (ընտրություններ, ցույցեր և այլն):

Սակայն, հարկ է նկատել, որ գործնականում քաղաքական կողմնորոշման կատարյալ ձևեր չեն հանդիպում: Դրանք համագոյակցում են առանց միմյանց հեռացնելու: Օրինակ՝ Մեծ Բրիտանիայի քաղաքական մշակույթին բնորոշ է հպատակության՝ ի դեմս

³ *Алмонд Г., Верба С.* Гражданская культура и стабильность демократии // Полис.— 1992.— №4.— с.127–128.

միապետության ինստիտուտի մարմնավորման, և մասնակցության մշակույթի համադրումը:

Գ. Ալմոնդի և Ս. Վերբայի տեսության համաձայն՝ արևմտյան երկրների քաղաքական մշակույթն իրենից ներկայացնում է խառը մշակույթի հատուկ տեսակ, որը նրանք անվանել են քաղաքացիական մշակույթ: Այս քաղաքական մշակույթի առավել ներհատուկ գիծը քաղաքացիների ռացիոնալ-ակտիվ վարքագիծն է, որը համապատասխանում է ժողովրդավարական քաղաքական համակարգին: Քաղաքացիական մշակույթի կատարյալ տիպի բովանդակությունը Ալմոնդը և Վերբան բացահայտել են այն որակների հատըտրության միջոցով, որոնց տիրապետում է դրա կրողը՝ ազգային կառավարության գործունեության նկատմամբ ընդհանուր դրական գնահատական, կառավարության գործունեության նկատմամբ առավել բարձր հետաքրքրություն և այդ ոլորտում բարձր իրազեկվածություն, ազգային քաղաքական ինստիտուտների նկատմամբ հպարտության զգացում, քաղաքական հարցերը հրապարակայնորեն կամ ընկերական շրջապատում քննարկելու ցանկություն, ընդդիմադիր տրամադրությունների բացահայտ և լոյալ արտահայտում, համազգային քաղաքական միջոցառումների անցկացման հարցում բավարարվածության զգացում (օրինակ՝ նախընտրական քարոզարշավների ժամանակ), կառավարության կողմից իրականացվող քաղաքականությանը անձնապես աջակցելու պատրաստակամություն, հավատ այն բանին, որ մասնակցային ժողովրդավարությունը պետական կառավարման անհրաժեշտ և ցանկալի համակարգն է և այլն:

Սակայն, հարկ է նշել, որ Ալմոնդի և Վերբայի՝ քաղաքական մշակույթի էմպիրիկ հետազոտության արդյունքները ցույց տվեցին քաղաքականությանը քաղաքացիների համընդհանուր մասնակցության գաղափարի վերացականությունը: Այդ իսկ պատճառով քաղաքացիական մշակույթի մասին նրանց դատողությունները էապես ճշգրտվում են: Ինչպես գրում էին Ալմոնդը և Վերբան. «Քաղաքացիական կատարյալ մշակույթում քաղաքացիների ակտիվությունը և

ներգրավվածությունը պետք է կատարելագործվեն պասսիվության և չմասնակցության որոշակի չափաբաժնով»:⁴

Զնայած, որ «քաղաքական մշակույթ» հասկացությունը բավականին խորը ուսումնասիրվել է բազմաթիվ հետազոտողների կողմից՝ այնուամենայնիվ, մինչ օրս որևէ մեկին չի հաջողվել տալ այս սոցիալ-քաղաքական երևույթի համընդհանուր և բոլորի կողմից ընդունելի սահմանումը:

Քաղաքական մշակույթի ձևավորման գործոնները: Քաղաքական մշակույթը պայմանավորված է մի շարք օբյեկտիվ գործընթացներով, որոնք ներհատուկ են ստույգ հասարակական-քաղաքական օրգանիզմի զարգացմանը: Այս տեսանկյունից որոշիչ նշանակություն ունեն պետության տնտեսական զարգացումը և դրա հետ կապված նյութական և հոգևոր պահանջույթների բավարարվածության աստիճանը, պատմականորեն ձևավորված սոցիալ-դասակարգային կառուցվածքը, բնակչության էթնիկական կազմը, անցյալի ժառանգությունը, կրոնի ազդեցությունը, երկրաքաղաքական գործոնները և այլն: Սակայն քաղաքական մշակույթի դրսևորման ամբողջ բազմազանությունը չի կարելի անմիջականորեն բխեցնել վերոնշյալ գործոնների ուղղակի կամ անուղղակի փոխազդեցությունից, քանի որ շատ կարևոր է հաշվի առնել նաև հասարակության մեջ ձևավորված ավանդույթները, պետության կառավարման ձևերը և մեթոդները, այնպիսի սոցիալ-քաղաքական ինստիտուտների գործառնության առանձնահատկությունները, ինչպիսիք են՝ քաղաքական կուսակցությունները և շարժումները, հասարակական կազմակերպությունները, քաղաքական կարգը և կյանքը:

Հարկ է նշել, որ քաղաքական մշակույթի ձևավորման գործում էական նշանակություն ունեն տնտեսական, քաղաքական և իրավական գիտելիքները, ինչպես նաև պատմական գիտակցությունը և փորձը: Որպես այս գործոնների դրսևորման ձևեր՝ կարելի է առանձնացնել հասարակության մեջ լուրջ ազդեցություն ունեցող այնպիսի

⁴ Almond G., Verba S. The Civic Culture: Political Attitudes and Democracy in Five Nations. Princeton, 1963, p. 321.

ինստիտուտների գործունեությունը, ինչպիսիք են՝ կրթության և դաստիարակության համակարգը և զանգվածային լրատվության միջոցները, որոնք քաղաքական սոցիալականացման կարևորագույն գործակալություններն են:

Քաղաքական միջավայրում մարդու վարքագիծը չի պայմանավորվում միայն քաղաքական իրողություններով, քանի որ մարդու քաղաքական դիրքորոշումը և վարքագիծը փոքրիշատե պայմանավորվում են նաև հասարակության մեջ տարածված մոդելներով և առասպելներով: Մասնավորապես՝ քաղաքական առասպելները և դրանց հետ կապված կարծրատիպերը, աճելով բարենպաստ սոցիալ-քաղաքական պայմաններում, երկարատև են գործառնում: Դրանք կատարում են քաղաքական հարաբերությունների կարգավորչի ինքնատիպ դեր, քանի որ տիրապետում են համարկային (ինտեգրացիոն) որակների և հաճախ ձևավորում են քաղաքական կարծիքների, գնահատականների և համոզմունքների հիմքը:⁵

Այսպիսով՝ քաղաքական մշակույթը և քաղաքական համակարգը գտնվում են բարդ դիալեկտիկական փոխկապակցվածության մեջ, որոնց համապատասխանությունն ապահովում է հասարակության քաղաքական կյանքի կայունությունը և քաղաքական գործընթացների բնականոն ընթացքը:

Քաղաքական համակարգը իր գործառնության ընթացքում ձևավորում է քաղաքական մշակույթը: Ձևավորված քաղաքական մշակույթը դառնում է քաղաքական համակարգի հարաբերականորեն ինքնուրույն բաղադրատարրը: Դրանց միջև կապը և համագործակցությունն ապահովվում են այն հանգամանքով, որ քաղաքականությունը՝ իբրև քաղաքական համակարգի ինստիտուտների գործունեության արդյունք, հանդես է գալիս քաղաքական հարաբերություններում որպես ստույգ գործունեության ձև, իսկ քաղաքական մշակույթը հանդես է գալիս որպես այդ գործունեության որակական և բնութագրական կողմ:

⁵ <http://polituk.com/politicheskaja-kultura-i-politicheskaja/124-factory-formirovanija-politicheskoi-kultury.html>

Քաղաքական մշակույթի և քաղաքական համակարգի միջև հարաբերակցությունը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ՝

- քաղաքական մշակույթը ձևավորվում է քաղաքական համակարգը,
- տվյալ հասարակությունում փաստացի գործող քաղաքական համակարգն արտացոլում է վերջինիս քաղաքական մշակույթի պատմությունը՝ սկսած տվյալ հասարակության և պետության զարգացման ամենավաղ շրջաններից,
- քաղաքական մշակույթը հարաբերականորեն ինքնուրույն է՝ չնայած, որ դիտվում է որպես քաղաքական համակարգի բաղադրատարր:⁶

Քաղաքական մշակույթի գործառույթները: Քաղաքական մշակույթը ներգործում է քաղաքական համակարգի վրա որպես նրա գոյության և զարգացման տևական գործոն: Քաղաքական համակարգի նկատմամբ քաղաքական մշակույթի այս դերը բազմաբնույթ է, ինչը կարելի է բացահայտել հետևյալ գործառույթների առանձնացման միջոցով՝

- քաղաքացիների քաղաքական սոցիալականացում,
- հասարակության անդամների քաղաքական համարվում,
- քաղաքական գործողությունների կարգավորում ձևավորված քաղաքական համակարգի շրջանակներում,
- քաղաքական կողմնորոշում և ընտելացում փոփոխվող սոցիալ-քաղաքական պայմաններում,
- նույնականացում, այսինքն՝ սեփական անձի նույնականացումը մարդկանց լայն հանրույթի հետ՝ պետության, ազգի, սոցիալական դասի կամ խմբի, քաղաքական կազմակերպության կամ կուսակցության,
- քաղաքացիների քաղաքական հաղորդակցություն ինչպես՝ միմյանց, այնպես էլ իշխանության կառույցների հետ քաղա-

⁶ *Денисов А. Политическая культура // Международная жизнь.— 1990.— №10.— с. 79–90.*

քական լեզվի (քաղաքական խոսույթի), նշանների և նորմերի միջոցով:

Գծապատկեր 1.



Քաղաքական մշակույթի տարրերը: Քաղաքական մշակույթը հասարակության մեջ տեղի ունեցող սոցիալական և քաղաքական գործընթացների տարբեր մակարդակներում ունի բազմաձև կապեր: Այդ կապերը նախասահմանում են քաղաքական մշակույթի բարդ կառուցվածքը, որը բաղկացած է հետևյալ տարրերից՝

- ճանաչողական տարր, որը ենթադրում է քաղաքական երևույթների և գործընթացների (ճշմարիտ կամ կեղծ), քաղաքական համակարգի, հասարակության գործառնության դերի և նշանակության մասին գիտելիքներ, քաղաքացիների

կողմից քաղաքական իշխանության և քաղաքական հարաբերությունների մասին պատկերացում,

- հուզական (աֆֆեկտիվ) տարր, որը ներառում է քաղաքական ինստիտուտների, իշխանական կառույցների գործունեության հանդեպ զգացումներ, հույզեր, ինչպես նաև քաղաքական կյանքում ներգրավված քաղաքական առաջնորդների և քաղաքական այլ սուբյեկտների, քաղաքական գործընթացների ընկալում,
- արժեքաբանական տարր, որն արտահայտվում է քաղաքական երևույթների և գործընթացների վերաբերյալ մտորումներում, կարծիքներում, ինչպես նաև տվյալ անձի, սոցիալական խմբի կամ հասարակության կողմից ընդունված արժեհամակարգի գնահատման գործընթացում,
- վարքաբանական տարր, որը դրսևորվում է սոցիալական սուբյեկտի (անձի, սոցիալական խմբի, հասարակության) վարքագծային տիպերի տեսքով քաղաքական գործունեության ոլորտում:

Հետևաբար՝ անհատի քաղաքական մշակույթի մակարդակը որոշելու համար անհրաժեշտ է նրա քաղաքական գիտելիքների բնույթը և մակարդակը, քաղաքականության նկատմամբ նրա հուզական վերաբերմունքը դիտել որպես մեկ ամբողջություն և բացահայտել տվյալ անձի արժեհամակարգում վերջինիս գրաված տեղը և դերը: Հասարակության քաղաքական մշակույթի մակարդակի մասին կարելի է դատել ոչ միայն վերը նշված հանգամանքներից ելնելով, այլև՝ ուսումնասիրելով ձևավորված քաղաքական ինստիտուտները և հասարակական կյանքը կարգավորող սոցիալ-քաղաքական նորմերը:

1.2 Քաղաքական խոսույթ

Քաղաքական խոսույթը քաղաքական հաղորդակցության միջոց է, որը հիմնված է մարդկանց և նրանց տարբեր խմբերի հավաքական և անհատական պահանջների իրացման վրա:

Քաղաքական խոսույթի համապատասխան դրսևորումներ են համարվում քաղաքական գործիչների, կուսակցությունների, միավորների, շարժումների ելույթները (բանավոր և գրավոր), ՋԼՄ-ների կողմից լուսաբանվող քաղաքական նորությունները և իրադարձությունները, որոնք օժտված են հանրային գիտակցության վրա ազդեցության մեծ ներուժով:

Քաղաքական խոսույթի հետազոտությունը հիմնված է գիտության տարբեր ճյուղերի համադրման սկզբունքների վրա, որը պայմանավորված է խոսույթի ձևի, նրանում առկա խնդիրների և բովանդակության վերլուծությամբ: Գիտական այս ճյուղերից մեկը՝ քաղաքական բանասիրությունը, ուսումնասիրում է խոսույթի հատկանիշների հարաբերակցությունն այնպիսի հասկացությունների հետ, ինչպիսիք են՝ «իշխանությունը», «ազդեցությունը», «հեղինակությունը» և այլն: Ի տարբերություն քաղաքագետների՝ բանասերներն այս գործոնները դիտարկում են միայն խոսողի և մեկնաբանողի լեզվական առանձնահատկությունների տեսանկյունից, այնինչ քաղաքագետները փորձում են վերհանել համատեքստում թաքնված ընդհանուր բովանդակությունը: Քաղաքագիտական լեզվաբանությունը նախ և առաջ զբաղվում է քաղաքական խոսույթի շարահյուսական, իմաստաբանական և գործաբանական (պրագմատիկ) շարադրանքի վերլուծությամբ, ինչպես նաև՝ խոսույթի մեկնաբանության մոդելների մշակմամբ:⁷

Քաղաքական խոսույթի ուսումնասիրությունը քաղաքագիտության մեջ առաջին հերթին ուղղված է քաղաքական գործիչների քաղաքական մտածելակերպի վերլուծությանը լեզվական տվյալների միջոցով, որի իրագործման համար հետազոտողների մի մասն առաջարկում է համատեքստի վերլուծության, իսկ մյուս մասը՝ կոգնիտիվ պատկերավորման մեթոդները:

Համատեքստի վերլուծության մեթոդի նպատակը քաղաքական խոսույթում առկա բառերի և բառակապակցությունների միջոցով ընդհանուր տեքստի բովանդակության ստույգ վերհանումն է, որի

⁷Januschek F. Politische Sprachwissenschaft: Westdeutscher Verlag, 1985.

արդյունքում կարելի է տեքստի հեղինակի մտածելակերպի և գիտակցության յուրահատկությունների մասին դատողություններ անել:

Ինչ վերաբերում է կոգնիտիվ պատկերավորման մեթոդին, ապա այն թույլ է տալիս վերհանել քաղաքական տեքստերում առկա պատճառական (կազուալ) դատողությունները, որոնց հիման վրա հնարավորություն է ընձեռվում եզրակացություններ անել տեքստի հեղինակի մտածելակերպի և գիտակցության վերաբերյալ:

Նպատակահարմար չէ քաղաքական խոսույթը դիտարկել միայն լեզվական տեսանկյունից, քանի որ այդ դեպքում այն կարող է կորցնել իր նշանակությունը և նպատակը, այսինքն՝ քաղաքական խոսույթի միակողմանի դիտարկման պարագայում, ուղղակիորեն, քիչ հավանական են դառնում քաղաքական խոսույթի հեղինակի կողմից իր լսարանին հասցեագրված գաղափարների, նրանցում թաքնված իմաստների, տրամաբանական անցումների վերհանումն ու մեկնաբանումը: Մինչդեռ քաղաքական խոսույթը և նրա դրսևորման ձևերը հանրության քաղաքական կյանքում մեծ կարևորություն ունեն, ինչը ենթադրում է քաղաքագիտության մեջ քաղաքական խոսույթի ուսումնասիրության և վերլուծության անհրաժեշտություն: Քաղաքական խոսույթի ուսումնասիրությունը ոչ միայն լեզվաբանության, այլև քաղաքագիտության արդի խնդիրներից մեկն է, քանի որ մեր օրերում խիստ անհրաժեշտ է դարձել քաղաքական գործիչների խոսքի ուսումնասիրության և վերլուծության հիման վրա վերջիններիս քաղաքական գործողությունների մասին դատողություններ անելը: Այս պարագայում հարկ է նշել, որ այդ դատողությունները, մասնավորապես՝ նախընտրական քարոզարշավների ժամանակ թեկնածուների հասարակական-քաղաքական ելույթների ուսումնասիրության և վերլուծության արդյունքում կատարված եզրակացությունները, հետագայում, միանշանակորեն, կարող են քաղաքագիտական կանխատեսումների հիմք հանդիսանալ:⁸

⁸ *Օրդուխանյան Է.* Իշխանություն և ընդդիմություն. քաղաքական խոսույթի վերլուծություն, «Լիմուշ» հրատ., Երևան 2010, էջ 55:

1.3 Տեղեկատվական հասարակություն

Տեղեկատվական հասարակության, նրա բնույթի և կազմավորման խնդիրը ամենաքննարկվող թեմաներից է ժամանակակից հասարակական-քաղաքական գիտություններում: Խնդրի բարդությունը, ծավալը և ոչ միանշանակ լինելը այս թեմայի վրա է սևեռում աշխարհի տարբեր երկրների բազմաթիվ հետազոտողների և քաղաքագետների ուշադրությունը: Որպես նոր տեսական հարացույց՝ տեղեկատվական հասարակությունը ժամանակակից հասարակական-քաղաքական հետազոտությունների համար դարձավ գործիք և մեթոդաբանական հիմք:

Տեղեկատվական հասարակության տեսության առաջին դասականների աշխատությունների մանրակրկիտ վերլուծությունը ցույց է տալիս, որ առավելապես տեխնոլոգիական նոր հեղափոխությունների և տեսական գիտելիքի դերի բարձրացման խնդիրների կարևորումը դեռ լիովին չի բացահայտում տեղեկատվական հասարակության էությունը: Բացի այդ՝ դիտարկվում են նաև այլ հարցեր՝ նոր քաղաքական մշակույթը, ժողովրդավարության սկզբունքների զարգացումը, հասարակության մեջ նոր քաղաքական համակարգի ձևավորումը, էլեկտրոնային ժողովրդավարության, էլեկտրոնային կառավարման, տեղեկատվական մշակույթի, անձի նոր տեսակի ձևավորումը, վերջինիս անձնական դրդապատճառների և նպատակների փոփոխությունը և այլն: Այսօր այս բոլոր հարցերը ուղղակի կամ անուղղակի կերպով մեկնաբանվում են ըստ տեղեկատվական հասարակության տեսության կարևոր կանխադրույթների: Անադմուկ, սակայն բավականին վստահ քայլերով տեղեկատվական հասարակության տեսությունը դառնում է 21-րդ դար մուտք գործած հասարակությունների զարգացման հիմնական միտումները հետազոտող տեսական կարևորագույն գործիքներից մեկը:

Տեղեկատվական հասարակության տեսությունները հիմնվում են ժամանակակից մարդկության կյանքում տեղեկատվության և գիտելիքի նշանակության աննախադեպ աճի դրույթի վրա: Սա այն հասա-

րակությունն է, որը հիմնված է գիտելիքի և տեղեկատվության տիրապետության վրա:

Տեղեկատվական հասարակությունը կարելի է սահմանել որպես քաղաքակրթության զարգացման նոր պատմական փուլ, որտեղ հասարակական հարստության ստեղծման և արտադրության գլխավոր արդյունքները տեղեկատվությունն ու գիտելիքներն են: Տեղեկատվական հասարակության մեջ սոցիալ-տնտեսական և հոգևոր զարգացումը կապված է որակապես նոր հիմնային ռեսուրսի հետ: Այդ ռեսուրսը հասարակության անդամների միջև տեղեկատվության արտադրությունն է, վերամշակումը, պահպանումը և տարածումը: Տեղեկատվական հասարակությունում առաջին պլան է մղվում տեղեկատվայնացումը՝ որպես հասարակական փոխակերպումների գործընթացների բովանդակություն, իսկ արդյունաբերական դարաշրջանում գլխավորը արդյունաբերականացման գործընթացն էր: Հասարակության տեղեկատվայնացումը բազմաստիճան գործընթաց է, որտեղ տեխնիկա-տեխնոլոգիական, սոցիալական, տնտեսական-քաղաքական և մշակութային բաղադրիչները գտնվում են ներդաշնակ փոխներգործության մեջ՝ որակապես վերածնելով հասարակական օրգանիզմի ամբողջ հյուսվածքը: Տեղեկատվական հասարակության առաջացումը կանխանշում է արմատական վերակազմավորումներ սոցիալ-քաղաքական հարաբերություններում, ինչպես նաև փոփոխություններ մշակույթում, հոգևոր կյանքում և կենցաղում: Հենց այս նպատակով է անհրաժեշտ հասարակության տեղեկատվայնացումն ընկալել որպես տեղեկատվության արտադրության, կառավարման և զարգացման հիմնային ռեսուրսի վերածման գործընթաց:⁹

⁹ *Սուփասյան Հ.* Տեղեկատվական հասարակություն. սոցիալ-քաղաքական հիմնախնդիրներ, «Սարվարդ» հրատ., Երևան 2009, էջ 13-42:

1.4 Քաղաքական գիտակցություն

Քաղաքական գիտակցությունը քաղաքական կեցության արտացոլումն ու իմաստավորումն է սոցիալական սուբյեկտների՝ անհատների, խմբերի, դասակարգերի, հանրույթների գիտակցության մեջ: Քաղաքական գիտակցությունը քաղաքական կեցության պասսիվ արտացոլումը չէ, այն հարաբերականորեն ինքնուրույն է և կարող է առաջ անցնել քաղաքական պրակտիկայից, կանխատեսել հասարակական-քաղաքական գործընթացների զարգացման միտումները: Այն սերտորեն կապված է քաղաքական մշակույթի և քաղաքական վարքագծի հետ: Քաղաքական գիտակցության կառուցվածքային տարրերն են քաղաքական նորմերն ու արժեքները, քաղաքական համոզմունքներն ու պատկերացումները, տեսական և էմպիրիկ գիտելիքները: Այն ձևավորվում է անձի քաղաքական սոցիալականացման գործընթացում: Կառուցվածքային առումով բաղկացած է կայուն և փոփոխական բաղադրամասերից: Օրինակ՝ գաղափարախոսական ընտրության հիմքում ընկած են կայուն սոցիալ-քաղաքական արժեքներ՝ ժողովրդավարություն, ազատություն, մարդու իրավունքների պաշտպանություն և այլն: Քաղաքական գիտակցության փոփոխական տարրերը կապված են ընթացիկ պահի վերագնահատման հետ: Տարբերում են քաղաքական գիտակցության տեսական, էմպիրիկ և պետական, կենցաղային մակարդակներ: Քաղաքական գիտակցությունն իրականացնում է կարգավորման, ճանաչողական, արժեքավորման, հավաքագրման, կանխագուշակման, նորմատիվային և այլ գործառույթներ:

Կախված սուբյեկտից՝ տարբերում են անհատական, խմբային և զանգվածային քաղաքական գիտակցություն: Անհատական գիտակցությունը մեկնաբանվում է որպես քաղաքականությունը քիչ թե շատ ճիշտ ընկալելու, քաղաքական բնագավառում ճիշտ կոմնորոշվելու և նպատակամետ գործելու ունակություն: Խմբային գիտակցության կրողները հասարակական-քաղաքական կազմակերպություններն ու միավորումներն են: Այն պայմանավորված է քաղաքական համակարգում խմբի գրաված դիրքով և մեկնաբանվում է որպես կոնկրետ խմբի

քաղաքական ակտիվության բովանդակությունը և ուղղվածությունը պայմանավորող պատկերացումների ամբողջություն: Ջանգվային քաղաքական գիտակցությունը միջնորդավորված ձևով արտացոլում է հասարակական պահանջմունքների և սպասումների մակարդակն ու բովանդակությունը, ինչպես նաև հասարակական գիտելիքների ծավալը քաղաքական իրականության մասին:¹⁰ Հարկ է նշել, որ ժողովրդավարական վարչակարգերում քաղաքական գիտակցությունը գործնականում առավել ընդգրկուն ծավալով արտահայտվում է ընտրական գործընթացների ժամանակ:

1.5 Քաղաքական վարքագիծ և քաղաքական մասնակցություն

Քաղաքական վարքագիծը անձի, սոցիալական խմբի գնահատականներում, դիրքորոշումներում, որոշակի գործողություններում արտահայտվող առօրեական կոնկրետ քաղաքական գործողությունն է: Տարբերում են քաղաքական վարքագծի գիտակցված ձևեր՝ խարսխված արժեքային և ռացիոնալ դրդապատճառների վրա և չգիտակցված ձևերը, որոնց դրդապատճառները գիտակցված չեն: Քաղաքական վարքագիծը անձի ինքնաիրականացման, ինքնադրսևորման միջոց է և կարող է նպաստել քաղաքական իրականության պահպանմանը կամ փոփոխությանը: Այն լինում է կազմակերպված /մասնակցություն ընտրություններին, հանրաքվեներին և այլն/ և տարերային՝ ոչ մեկի կողմից չիրահանված:¹¹ Քաղաքական մասնակցությունը, լինելով քաղաքական վարքագծի կազմակերպված ձև, հիմք է ծառայել սույն հետազոտության համար: Քաղաքական մասնակցությունն իրենից ներկայացնում է քաղաքացիների ազդեցությունը քաղաքական համակարգի գործառնության, քաղաքական ինստիտուտների ձևավորման և քաղաքական որոշումների մշակման գործընթացների վրա: Քաղաքական մասնակցության ձևերից են՝

¹⁰ Պողոսյան Վ., Միրումյան Վ., Բաբաջանյան Ա., Աստվածատուրով Ս. Քաղաքագիտություն հանրագիտական բառարան, Երևան 2004, էջ 76-77:

¹¹ Սույն տեղում, էջ 395:

մասնակցությունն ընտրություններին, ընտրարշավների ընթացքում թեկնածուների և կուսակցությունների աջակցությանն ուղղված գործունեությունները, մասնակցությունը կուսակցությունների և շահերի խմբերի գործունեությանը և այլն: Տարբերում են քաղաքական մասնակցության լեզալ և ոչ լեզալ, ակտիվ և պասսիվ, ինքնավար /բնորոշ է ժողովրդավարական քաղաքական հանակարգերին/ և հարկադրական /բնորոշ է ամբողջատիրական քաղաքական համակարգերին/ և այլ ձևեր:¹²

¹² Պողոսյան Վ., Միրումյան Կ., Բաբաջանյան Ա., Աստվածատուրով Ս. Քաղաքագիտություն հանրագիտական բառարան, Երևան 2004, էջ 252:

ԳԼՈՒԽ 2.
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅՑԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹԻ
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

**2.1. Ընտրությունները որպես քաղաքական
մշակույթի տարր**

Քաղաքական գիտակցության, վարքագծի և մասնակցության խընդիրները միշտ եղել են քաղաքական մշակույթի բաղկացուցիչ տարրերը: Քաղաքական գործընթացներն առանց այս տարրերի պատկերացնելն ուղղակի անհնար է, քանի որ դրանք պայմանավորում են քաղաքական մշակույթը, որի էությունը քաղաքական կողմնորոշումների, իդեալների, հայացքների, համոզմունքների և հմտությունների, ավանդույթների, սովորույթների, քաղաքական լեզվի, խորհրդանիշների և քաղաքական կյանքի կարծրատիպերի ամբողջությունն է:

Ժողովրդավարական վարչակարգի պայմաններում է, որ հնարավոր է դառնում ապահովել հասարակության լայն զանգվածների մասնակցությունը քաղաքական գործընթացներին, մինչդեռ ամբողջատիրական և ավտորիտար քաղաքական վարչակարգերում այն խիստ սահմանափակ է և կրում է ձևական բնույթ: Քաղաքական մասնակցության լայն հնարավորությունները կարող են գործնականում դրսևորվել միայն ժողովրդավարական վարչակարգի շրջանակներում, որտեղ կարող է ձևավորվել քաղաքացիական հասարակություն, որը, լինելով զարգացած ժողովրդավարական պետության կարևոր նախապայման, մեծ դեր է կատարում, քաղաքական գիտակցության և վարքագծի ձևավորման, հետևաբար՝ նաև քաղաքական մասնակցության ապահովման գործում:

Երկրում տեղի ունեցող հասարակական-քաղաքական գործընթացները, միանշանակ՝ ՋԼՄ-ների միջնորդությամբ, իրենց ուրույն ազդեցությունն են թողնում քաղաքական գիտակցության և վարքագծի ձևավորման, քաղաքական մասնակցության, ինչպես նաև ամբողջ քաղաքական մշակույթի վրա: Այս ամբողջական գործընթացն էլ իր հեր-

թին պայմանավորվում է քաղաքական խոսույթով, որը հանդիսանում է քաղաքական հաղորդակցության միջոց:

Ժամանակակից Հայաստանում քաղաքական գիտակցության և վարքագծի, ինչպես նաև քաղաքական մասնակցության առանձնահատկությունների և զարգացման միտումների բացահայտման համար անհրաժեշտ է քաղաքական խոսույթի միջոցով վերլուծել անցած և ներկայիս քաղաքական իրադարձությունները և գործընթացները, մասնավորապես՝ ընտրազանգվածի մասնակցությունն ընտրական գործընթացներին:

Այսպես՝ ստորև բերված աղյուսակում, պաշտոնական տվյալների¹³ հիման վրա, ներկայացնենք 1991-2012թթ. ընտրազանգվածի քաղաքական մասնակցության պատկերը Հայաստանում (ՀՀ Նախագահի ընտրություններ, ԱԺ ընտրություններ, Սահմանադրության հանրաքվեներ):

¹³ ՀՀ Ազգային արխիվ 1. ՀՀ Գերագույն խորհրդի Պատգամավորների ընտրությունների կենտրոնական ընտրական հանձնաժողով, 1991թ. հոկտեմբերի 16-ի ՀՀ նախագահի ընտրության արձանագրություններ, ֆոնդ 1183, ցուցակ 1, գործ 52, 2. Վերլուծական տեղեկանք, ՀՀ ԱԺ ընտրությունների և ՀՀ Սահմանադրության հանրաքվեի արդյունքների ամփոփման մասին, ֆոնդ 1183, ցուցակ 1, գործ 31, 3. ՀՀ նախագահի ընտրությունների ընտրական հանձնաժողովների արձանագրություններ, ֆոնդ 1183, ցուցակ 3, գործ 97, 4. 1998թ. ՀՀ նախագահի արտահերթ ընտրությունների քվեարկության վերջնական արդյունքների մասին ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի ամփոփիչ արձանագրություններ, ֆոնդ 1183, ցուցակ 3, գործ 143, 5. 1999թ. մայիսի 30-ի ՀՀ ԱԺ ընտրությունների արդյունքներ, <http://elections.am/Default.aspx>, 6. 2003թ. փետրվարի 19-ի ՀՀ Նախագահի ընտրությունների 1-ին փուլի արդյունքներ, <http://elections.am/Default.aspx>, 7. 2003թ. մարտի 5-ի ՀՀ Նախագահի ընտրությունների 2-րդ փուլի արդյունքներ, <http://elections.am/Default.aspx>, 8. 2003թ. մայիսի 25-ի ՀՀ ԱԺ ընտրությունների արդյունքներ, <http://elections.am/Default.aspx>, 9. 2003թ. մայիսի 25-ի (ՀՀ Սահմանադրությունում փոփոխություններ կատարելու մասին նախագծի) հանրաքվեի արդյունքներ, <http://elections.am/Default.aspx>, 10. 2005թ. նոյեմբերի 27-ի (ՀՀ Սահմանադրությունում փոփոխություններ կատարելու մասին նախագծի) հանրաքվեի արդյունքներ, <http://elections.am/Default.aspx>, 11. 2007թ. մայիսի 12-ի ՀՀ ԱԺ ընտրությունների արդյունքներ, <http://elections.am/Default.aspx>, 12. 2008թ. փետրվարի 19-ի ՀՀ Նախագահի ընտրություններ, <http://elections.am/Default.aspx>, 13. 2012 թ. մայիսի 6-ի ՀՀ ԱԺ ընտրությունների արդյունքներ, <http://www.elections.am/proportional/>.

Աղյուսակ 1.


1991-2012թթ. ՀՀ-ում ընտրություններին քաղաքացիների մասնակցության պատկերը

Տարեթիվը	ՀՀ ընտրողների ընդհանուր թիվը ըստ ընտրողների ցուցակների	Քվեարկությանը մասնակցած ընտրողների թիվը՝ ըստ ստորագրությունների	Մասնակցության տոկոսը՝
1991թ. Ն.Ը.	2. 155. 698	1. 518. 090	70.4%
1995թ. Ս.Հ.	2. 189. 804	1. 217. 531	55.6%
1995թ. ԱԺ.Ը.	2. 461. 700	1. 283. 573	52.1%
1996թ. Ն.Ը.	2. 201. 999	1. 331. 029	60.4%
1998թ. Ն.Ը. I փուլ	2. 300. 816	1. 449. 004	62.9%
1998թ. Ն.Ը. II փուլ	2. 300. 816	1. 567. 702	68.1%
1999թ. ԱԺ.Ը.	2. 198. 544	1. 137. 660	51.7%
2003թ. Ն.Ը. I փուլ	2. 315. 410	1. 462. 383	63.1%
2003թ. Ն.Ը. II փուլ	2. 331. 507	1. 595. 702	68.4%
2003թ. ԱԺ.Ը.	2. 340. 744	1. 233. 757	52.7%
2003թ. Ս.Հ.	2. 339. 704	1. 215. 908	51.9%
2005թ. Ս.Հ.	2. 317. 462	1. 514. 545	65.3%
2007թ. ԱԺ.Ը.	2. 319. 722	1. 391. 540	59.9%
2008թ. Ն.Ը.	2. 311. 917	1. 671. 027	72.2%
2012թ. ԱԺ.Ը.	2. 522. 906	1. 572. 858	62.3%

Համադրելով և համեմատելով 1991-2012 թթ. ՀՀ-ում տեղի ունեցած համընդհանուր քվեարկություններին քաղաքացիների մաս-

նակցությունը ընտրացուցակներում նշված ընտրողների ընդհանուր թվի հարաբերակցությամբ՝ ստանում ենք հետևյալ պատկերը՝

Գծապատկեր 2.



Այսպիսով՝ 1991-2012 թթ. միջև ընկած ժամանակահատվածում ՀՀ-ում քաղաքական մասնակցության ուսումնասիրության և վերլուծության արդյունքում ակնհայտ է դառնում, որ ընտրական իրավունք ունեցող քաղաքացիների մասնակցության **ամենաբարձր** ցուցանիշը գրանցվել է 2008թ. փետրվարի 19-ի ՀՀ Նախագահի ընտրություններում (72.20%): **Երկրորդ** տեղում է 1991թ. հեկտեմբերի 16-ի ՀՀ Նախագահի ընտրություններում ընտրազանգվածի քաղաքական մասնակցության ցուցանիշը (70.40%): **Երրորդ** տեղում է 2003թ. մարտի 30-ին տեղի ունեցած ՀՀ Նախագահի ընտրությունների երկրորդ փուլում ընտրազանգվածի քաղաքական մասնակցության ցուցանիշը (68.40%), **իսկ չորրորդ** տեղում՝ 1998թ. մարտի 16-ին տեղի ունեցած ՀՀ Նախագահի ընտրությունների երկրորդ փուլում ընտրազանգվածի քաղաքական մասնակցության ցուցանիշը (68.10%): ՀՀ-ում ընտրազանգվածի քաղաքական մասնակցության

ամենացածր ցուցանիշները գրանցվել են 1999թ. մայիսի 30-ի ՀՀ ԱԺ ընտրություններում (51.70%) և 2003թ. մայիսի 25-ի (ՀՀ Սահմանադրությունում փոփոխություններ կատարելու մասին նախագծի) հանրաքվեում (51.90%):

Այժմ անդրադառնանք 1991-2012 թթ. ՀՀ-ում տեղի ունեցած համընդհանուր քվեարկություններին քաղաքացիների մասնակցությանը՝ առանց հաշվի առնելու ընտրացուցակներում նշված ընտրողների ընդհանուր թիվը: Այս տեսանկյունից իրականացվող վերլուծությունը թույլ կտա բացահայտել 1991-2012 թթ. Հայաստանում համընդհանուր քվեարկություններին մասնակցած քաղաքացիների փաստացի թիվը, հետևաբար՝ սույն թվականներին նրանց քաղաքական մասնակցության ակտիվությունը, որը քաղաքացիական մշակույթի կարևորագույն տարրերից է:

Ուշագրավ է, որ համընդհանուր քվեարկություններին քաղաքացիների մասնակցությունը դիտարկելիս՝ **ամենաբարձր** ցուցանիշը կրկին գրանցվել է 2008թ. փետրվարի 19-ի ՀՀ Նախագահի ընտրություններում (1. 671. 027 ընտրող): **Երկրորդ** տեղում է 2003թ. մարտի 30-ին տեղի ունեցած ՀՀ Նախագահի ընտրությունների երկրորդ փուլում ընտրազանգվածի քաղաքական մասնակցության ցուցանիշը (1. 595. 702 ընտրող): **Երրորդ** տեղում է 1998թ. մարտի 16-ին տեղի ունեցած ՀՀ Նախագահի ընտրությունների երկրորդ փուլում ընտրազանգվածի քաղաքական մասնակցության ցուցանիշը (1.567.702 ընտրող), իսկ **չորրորդ** տեղում՝ 2012թ. մայիսի 6-ին տեղի ունեցած ՀՀ ԱԺ ընտրություններում ընտրազանգվածի քաղաքական մասնակցության ցուցանիշը (1.572.858 ընտրող): ՀՀ-ում ընտրազանգվածի քաղաքական մասնակցության **ամենացածր** ցուցանիշները, առանց հաշվի առնելու ընտրացուցակներում ընդգրկված քաղաքացիների թիվը, կրկին գրանցվել են 1999թ. մայիսի 30-ին տեղի ունեցած ՀՀ ԱԺ ընտրություններում (1.137.660 ընտրող) և 2003թ. մայիսի 25-ի (ՀՀ Սահմանադրությունում փոփոխություններ կատարելու մասին նախագծի) հանրաքվեում (1.215.908 ընտրող):


Հարկ է նկատել այն օրինաչափությունը, որ 1991-2012 թթ. ՀՀ-ում տեղի ունեցած համընդհանուր քվեարկությունների ժամանակ մեր

կողմից իրականացված հետազոտությունը ցույց տվեց, որ երկու տարբերակներում էլ (1. հաշվի առնելով ընտրացուցակներում նշված ընտրողների ընդհանուր թիվը, 2. առանց հաշվի առնելու ընտրացուցակներում նշված ընտրողների ընդհանուր թիվը) ընտրազանգվածի քաղաքական մասնակցության ամենաբարձր և ամենացածր ցուցանիշները համընկնում են (*ամենաբարձրը՝ 2008թ. ՀՀ Նախագահի ընտրություններ –72.20% կամ 1. 671. 027 ընտրող, ամենացածրը՝ 1999թ. ՀՀ ԱԺ ընտրություններ – 51.70% կամ 1. 137. 660 ընտրող*):

Կարևոր է նաև արձանագրել, որ ՀՀ Նախագահի ընտրությունների ժամանակ, երբ դրանք անցկացվել են երկու փուլով, երկրորդ փուլում քաղաքացիների մասնակցության ցուցանիշները միշտ եղել են ավելի բարձր առաջին փուլի ցուցանիշներից: Սա փաստում է այն մասին, որ նախագահական ընտրությունների երկրորդ փուլում, երբ ընտրապայքարին մասնակցում են երկու թեկնածուներ, հասարակությունն առավել ակտիվությամբ է կատարում իր քաղաքացիական պարտքը, քանի որ այդ պարագայում անհատի համար ավելի հեշտ է ճիշտ կողմնորոշվել և իր ձայնը տալ նախընտրած թեկնածուին: Այս պարագայում քաղաքական խոսույթի ազդեցությունը հասարակության գիտակցության վրա ավելի է մեծանում, քանի որ երկրորդ փուլ անցած թեկնածուները հնարավորություն են ստանում իրենց ելույթների, բանավեճերի և խոսքային արտահայտման այլ միջոցների օգնությամբ դեպի իրենց կողմնորոշել ընտրազանգվածի մեծամասնությանը:

Ուշագրավ է նաև այն, որ 1991-2012 թթ. միջև ընկած ժամանակահատվածում ընտրազանգվածի քաղաքական մասնակցության ամենաբարձր ցուցանիշները ՀՀ-ում գրանցվել են նախագահական ընտրությունների ժամանակ (1991թ., 1996թ., 1998թ., 2003թ., 2008թ.), մինչդեռ ԱԺ ընտրությունների (1995թ., 1999թ., 2003թ., 2007թ., 2012թ.) և Սահմանադրության հանրաքվեների (1995թ., 2003թ., 2005թ.) ժամանակ ընտրազանգվածի մասնակցության ցուցանիշներն ընդհանուր առմամբ զիջել են նախագահական ընտրությունների ցուցանիշներին:

Գծապատկեր 3.



Ընտրազանգվածի մասնակցության այս հարաբերակցությունը կապված է տվյալ իրադարձությունների շուրջ հասարակական-քաղաքական քննարկումների հաճախակիության և դրանց հրապարակայնության հետ: Նախագահական ընտրությունների ժամանակ քաղաքական քննարկումների տիրույթը, տեղեկատվության տարածման ծավալները և հասարակության կողմից դրանց ուղղված արծագանքներն ավելի մեծ են, քան համընդհանուր քվեարկության մյուս դեպքերում, քանզի նախագահական ընտրությունների ժամանակ հասարակության գրեթե բոլոր շերտերը ցուցաբերում են քաղաքական բարձր ակտիվություն, շահագրգռվածություն, քանի որ իրենց շահերի, պահանջների բավարարման, սոցիալական խնդիրների լուծման հնարավորությունների իրականացումը կապում են ապագա նախագահի հետ: Վերոհիշյալ բոլոր գործոնները նպաստում են հասարակական-քաղաքական լայնածավալ քննարկումների կազմակերպմանը, ինչն էլ իր հերթին ձևավորում է համապատասխան քաղաքա-

կան խոսույթ, որը, ազդելով հասարակական գիտակցության վրա իր մանիպուլյացիոն գործառնությով, կարող է պայմանավորել ընտրազանգվածի քաղաքական մասնակցության ակտիվությունը: Ահա սա է պատճառը, որ նախագահական ընտրությունների ժամանակ ՀՀ-ում ընտրազանգվածի քաղաքական մասնակցության ցուցանիշներն ավելի բարձր էին, որն էլ պայմանավորված էր նախընտրական քարոզարշավների ընթացքում հասարակական-քաղաքական քննարկումների ավելի հաճախակի և ընդգրկուն լինելու հանգամանքներով:

1991-2012 թթ. ՀՀ-ում ընտրազանգվածի քաղաքական մասնակցության ցուցանիշները պայմանավորված են նաև քաղաքական խոսույթի դրսևորման ձևերով և դրա առանձնահատկություններով: Հարկ է նշել, որ քաղաքական խոսույթը ժողովրդավարացման գործընթացի սկզբնական շրջանում դրսևորվում է ավելի սեղմ ծավալներով, քանզի կոնֆլիկտային խոսույթի հաղթահարման համար դեռևս առկա չեն կայուն նախապայմաններ, որոնք թույլ կտան համաձայնության խոսույթի միջոցով հասնել առկա հասարակական-քաղաքական խնդիրների կոնսենսուսային լուծումներին: Այս պարագայում 1991թ. հոկտեմբերի 16-ի ՀՀ Նախագահի ընտրություններում գրանցված ընտրազանգվածի քաղաքական մասնակցության ցուցանիշը կարելի է համարել բացառիկ, քանի որ այն պայմանավորված էր ազգային արժեքների և հայոց անկախ պետականության վերականգնման մղումով: Այդ դեպքում ընտրազանգվածի քաղաքական մասնակցության այդպիսի բարձր ցուցանիշը պայմանավորված էր ոչ թե քաղաքացիական, այլ՝ ազգային գիտակցությամբ: Տվյալ ժամանակահատվածում քաղաքական խոսույթը պայմանավորված էր ոչ թե ներքաղաքական ուժերի բախումային գործողություններով, այլ՝ անկախության վերահաստատմանն ուղղված համաձայնության խոսույթով, որը հիմք հանդիսացավ ժողովրդի միասնական քաղաքական կամքի ձևավորման և դրսևորման համար:

Ինչ վերաբերում է 1998թ. մարտի 16-ին տեղի ունեցած ՀՀ Նախագահի ընտրությունների երկրորդ փուլում քաղաքական մասնակցության ակտիվությանը, ապա այս պարագայում միանշանակ անհրաժեշտ է անդրադառնալ քաղաքական խոսույթին, որը կրում էր

կոնֆլիկտային բնույթ, քանզի պայքարը իշխանության և ընդդիմության թեկնածուների միջև թեժ էր: Կոնֆլիկտային խոսույթի հետևանքով ընտրությունների առաջին փուլում ընտրազանգվածի ձայները բաժանվեցին հավասար մասերի՝ բացարձակ մեծամասնություն չտալով թեկնածուներից ոչ մեկին: Միևնույն երևույթը կրկնվեց նաև նախագահական հաջորդ ընտրություններում, երբ նորից անցկացվեց ընտրությունների երկրորդ փուլ (30-ը մարտի, 2003թ.): Փաստորեն, կարելի է արձանագրել, որ վերոհիշյալ դեպքերում քաղաքական խոսույթի ազդեցությունը հասարակական գիտակցության վրա բավականին մեծ էր, ինչը հիմք հանդիսացավ ընտրությունների երկրորդ փուլ անցկացնելու համար, որոնց ժամանակ գրանցվեցին քաղաքական մասնակցության ավելի բարձր ցուցանիշներ, քան ընտրությունների առաջին փուլերում: Այս ամենը պայմանավորված էր տվյալ քաղաքական իրադարձությունների նկատմամբ հասարակական բարձր ակտիվությամբ:

1999թ. մայիսի 30-ի ՀՀ ԱԺ ընտրությունների և 2003թ. մայիսի 25-ի (ՀՀ Սահմանադրությունում փոփոխություններ կատարելու մասին նախագծի) հանրաքվեի ընթացքում քաղաքական խոսույթը կրում էր համեմատաբար պասսիվ, սակայն նորից կոնֆլիկտային բնույթ: 1999թ. ԱԺ ընտրությունների ժամանակ քաղաքական խոսույթում նկատվում էին որոշակի կոնֆլիկտային դրսևորումներ, իսկ 2003թ. Սահմանադրությունում փոփոխություններ կատարելու մասին նախագծի վերաբերյալ քննադատությունները բազմաթիվ էին, ինչն էլ, ձևավորելով կոնֆլիկտային քաղաքական խոսույթ, նպաստեց քվեարկության արդյունքում վերջինիս տապալմանը: Տվյալ նախագծի տապալումը պայմանավորված էր նաև այդ խնդրի շուրջ հասարակության զգալի հատվածի անտարբերությամբ, որի հետևանքով գրանցվեց ՀՀ-ում ընտրազանգվածի քաղաքական մասնակցության ամենացածր ցուցանիշներից մեկը:

Ինչ վերաբերում է 2008թ. փետրվարի 19-ի ՀՀ Նախագահի ընտրությունների ժամանակ գրանցված ընտրազանգվածի քաղաքական մասնակցության ամենաբարձր ցուցանիշին, ապա այս դեպքում նշանակալի է քաղաքական խոսույթի դերը, որը, նախընտրական

քարոզարշավի ընթացքում կրելով կոնֆլիկտային բնույթ, հիմնական քաղաքական պայքարը ծավալեց իշխանության և ընդդիմության թեկնածուներից երկուսի միջև: Նախընտրական քարոզարշավի ընթացքում իշխանության թեկնածուի նկատմամբ ընդդիմադիր թեկնածուի խիստ քննադատական կեցվածքը հանգեցրեց քաղաքական պայքարի թեժացմանը, ինչն իր ուրույն դրսևորումը գտավ նաև քաղաքական խոսույթում, որն էլ իր հերթին բարձրացրեց հասարակության՝ ընտրություններին մասնակցելու քաղաքացիական գիտակցության մակարդակը: Հասարակության տարբեր շերտերը մեծ շահագրգռվածություն ցուցաբերեցին այդ ընտրություններում, որտեղ հասարակական-քաղաքական թեժ քննարկումների հետևանքով ձևավորված քաղաքական խոսույթի ազդեցությունը ընտրազանգվածի գիտակցության վրա բավականին մեծ էր: Արդյունքում գրանցվեց մինչ օրս ՀՀ-ում ընտրազանգվածի քաղաքական մասնակցության ամենաբարձր ցուցանիշը:

1991-2012 թթ. ՀՀ-ում ընտրազանգվածի քաղաքական մասնակցության փորձի ուսումնասիրության և վերլուծության արդյունքում կարելի է հանգել այն եզրակացությանը, որ ընտրությունների ընթացքում տեղեկատվության տարածումը, քաղաքական գործընթացների հրապարակայնությունը, հասարակական-քաղաքական քննարկումները ձևավորում են համապատասխան քաղաքական խոսույթ, որն իր դրսևորման ձևերով և առանձնահատկություններով որոշակի ազդեցություն է գործում ընտրազանգվածի վարքագծի վրա: Որքան հաճախակի են հասարակական-քաղաքական քննարկումները, որքան ընդարձակ է տեղեկատվության դաշտը և որքան հրապարակային է քաղաքական խոսույթը, այնքան մեծ է ընտրազանգվածի քաղաքական մասնակցության ակտիվությունը և հակառակը:¹⁴

Փաստորեն՝ ժողովրդավարական վարչակարգերում, ինչպես նաև ժողովրդավարացման ուղին որդեգրած պետություններում քաղաքական խոսույթի ազդեցությունը քաղաքական գործընթացների վրա

¹⁴ Օրդուխանյան Է. Իշխանություն և ընդդիմություն. քաղաքական խոսույթի վերլուծություն, «Լիմուշ» հրատ., Երևան 2010, էջ 125-130:

բավականին մեծ է, քանի որ այդ գործընթացների ձևավորման և զարգացման արդյունքում քաղաքական խոսույթը կարող է պայմանավորել նաև ընտրազանգվածի քաղաքական մասնակցությունը, ինչը քաղաքական մշակույթի բաղկացուցիչ տարրերից մեկն է:

Այսպիսով՝ մեր կողմից իրականացված հետազոտությունը ցույց է տալիս, որ Հայաստանում 1991-2012 թթ. ընտրությունների ժամանակ ընտրազանգվածի քաղաքական մասնակցությունը՝ որպես հասարակության քաղաքական մշակույթի բաղադրատարր, հիմնականում եղել է անկայուն և ուղղորդվել է կոնֆլիկտային քաղաքական խոսույթով: Միայն 2012թ. ԱԺ ընտրությունների նախընտրական և հետընտրական գործընթացներն են, որոնք առանձնանում են քաղաքական խոսույթի դրսևորման տեսանկյունից, քանի որ սույն ժամանակաշրջանում քաղաքական դաշտում հիմնականում նկատվել են ոչ թե կոնֆլիկտային, այլ համաձայնության խոսույթին ներհատուկ տարրեր:

2.2. Երիտասարդների քաղաքական մասնակցությունը քաղաքական խոսույթի համատեքստում

Անձի քաղաքական սոցիալականացման գործընթացը նախ և առաջ վերաբերում է երիտասարդներին, քանի որ նրանք են ամենից շատ իրենց վրա կրում շահերի, դիրքորոշումների, արժեքների և մշակույթի փոփոխությունները, որոնք առավելապես դրսևորվում են քաղաքական խոսույթի՝ որպես քաղաքական մշակույթի համատեքստում: Երիտասարդներն իրենց համարում են սեփական պետության կայունության և զարգացման գլխավոր գործոնը և հասարակական փոփոխությունների առաջատար շարժիչ ուժը:

Այսօր Հայաստանում ապրում են 800.000-ից ավելի երիտասարդներ, ինչը կազմում է երկրի ընդհանուր բնակչության 25%-ը: Հայաստանում գրանցված է 500 երիտասարդական կազմակերպություն,

որոնցից գործում է միայն 10%-ը:¹⁵ Այս ամենը վկայում է այն մասին, որ երիտասարդական կազմակերպությունների գերակշռող մեծամասնությունը չի տիրապետում այդ կազմակերպություններին բնորոշ հիմնական գործառնություններից մեկին՝ շահերի ագրեգացիային, որն այսօր մեծապես դրսևորվում է քաղաքական խոսույթում, ինչն էլ բարձրաձայնում է թերի քաղաքական մշակույթի գոյության մասին:

Երիտասարդները պետության և հասարակության զարգացման համար միշտ ունեցել են կարևոր նշանակություն, քանի որ պետության համար կարևոր է, թե որքանով է երիտասարդությունը ընկալում տվյալ հասարակության կենսագործունեությունը, կենսակերպը, ինչպես նաև պետության գործառնությունը: Երիտասարդների դիրքորոշումները, նրանց դերը պայմանավորում են հասարակության սոցիալական զարգացումը, իսկ նրանց բարոյական առողջությունը կանխորոշում է ժողովրդի ճակատագիրը և ապագան:

Գնահատելով վերջին տասնհինգ տարիներին երիտասարդների քաղաքական սոցիալականացման արդիականացվող գործընթացները քաղաքական խոսույթի համատեքստում՝ կառանձնացնենք Հայաստանում արդիականացման հետևյալ փուլերը՝ 1) 1990-1996 թթ. տեղի ունեցած արդիականացման գործընթացը կարելի է անվանել ազատական-ժողովրդավարական սկզբունքների ներդրմամբ քաղաքական համակարգի արդիականացում, որն ուղեկցվել է նաև բազմապիսի ներքաղաքական և արտաքին քաղաքական խնդիրներով ու մարտահրավերներով, 2) 1996-2001 թթ. կարելի է բնորոշել որպես բնակչության լայն զանգվածների գիտակցության արդիականացման փուլ, երբ ԶԼՄ-ները հետզհետե ձեռք բերեցին ավելի շատ ազատություններ, իսկ քաղաքական գործընթացները դարձան ավելի հրապարակային: Այդ տարիներին ՀՍԱ-ի (Հայկական սոցիոլոգիական ասոցիացիայի)¹⁶ կողմից անցկացված հետազոտությունները ցույց են տալիս, որ երիտասարդների զգալի մեծամասնությունը

¹⁵ Հայաստանի գրուցակից, թիվ 85, <http://www.sobesednik.am>, տե՛ս նաև <http://www.armstat.am> կայքում:

¹⁶ Հայկական Սոցիոլոգիական Ասոցիացիա, www.asa.sci.am

սկսեց ավելի շատ հարել ժողովրդավարական, քաղաքացիական հասարակության, խոսքի և ընտրության ազատության գաղափարներին, 3) 2005 թ.-ից սկսած՝ արդիականացման գործընթացը կարելի է բնորոշել որպես կայունացնող, քանի որ տեղի ունեցող տնտեսական, քաղաքական և սոցիալ-մշակութային գործընթացները որոշակիորեն կայունացրեցին հասարակական զարգացման բնականոն ընթացքը, 4) 2008-2011 թթ. տեղի ունեցած քաղաքական, տնտեսական, սոցիալական զարգացումները և փոփոխությունները նպաստեցին երիտասարդության շրջանում քաղաքականության հանդեպ ուշադրության կտրուկ աճին, ինչը հանգեցրեց երիտասարդների քաղաքական ակտիվացմանը, որն իր հետ բերեց նոր երիտասարդական կազմակերպությունների, նախաձեռնությունների և շարժումների ստեղծման պահանջ:

Այսօր ժամանակակից երիտասարդության համար առաջնահերթություններ են դարձել կրթությունը, աշխատանքը, մասնագիտական առաջընթացը: Սակայն ակնառու է նաև քաղաքական կազմակերպություններին անդամագրվելու երիտասարդների հավակնությունը, որի միջոցով հնարավորություն է ստեղծվում ապահովելու վերոհիշյալ առաջնահերթությունները:

Երիտասարդների արդիականացվող գիտակցությունը նախ և առաջ արտահայտվեց հավաքագրական քաղաքական մասնակցությունից անհատական ընտրության անցնելու գործընթացում: Կուսակցություններում ընդգրկվելու միջոցով երիտասարդների քաղաքական մասնակցության «համակարգային» մոտեցման ձևավորումը նպաստեց երիտասարդ ընտրազանգվածի արդյունավետ օգտագործմանը նրանց կուսակցական նախընտարական ցուցակներում ընդգրկելու միջոցով: Այսօր Հայաստանում երիտասարդների ամենամեծ քանակ ունեցող կուսակցությունները իշխող կուսակցություններն են՝ ՀՀԿ-ն և ԲՀԿ-ն, մինչդեռ մյուս քաղաքական ուժերում երիտասարդ կուսակիցների քանակը համեմատաբար քիչ է՝ չնայած այն փաստին, որ գրեթե բոլոր գործող քաղաքական ուժերն ունեն երիտասարդական կազմակերպություններ: Ընդդիմադիր կուսակցու-

թյունների թվում միայն ՀՅԴ-ն և ՀԱԿ-ն ունեն ակտիվ երիտասարդ հետևորդներ:

Այս իրավիճակը թույլ է տալիս պնդել, որ հիմնականում երիտասարդները քաղաքական կազմակերպություններում ընդգրկվում են ոչ թե գաղափարական հայացքների միասնականության և համապատասխանության մղումով, այլ տվյալ ժամանակաշրջանում քաղաքական ուժերի հզորության և քաղաքական համակարգում նրանց գրաված առաջնային դիրքի պատճառով: Սակայն, այնուամենայնիվ, երիտասարդությունը լիովին չի հավատում, որ կարող է լուրջ ազդեցություն ունենալ հասարակական-քաղաքական խնդիրների վերաբերյալ կայացվող քաղաքական որոշումների վրա՝ նույնիսկ ընդգրկված լինելով այս կամ այն քաղաքական կուսակցության շարքում: Այս տեսանկյունից երիտասարդները, լինելով հասարակության առավել ակտիվ զանգվածը, քաղաքական ուժերի համար իշխանության ձեռքբերման գործում հանդես են գալիս որպես գործիք:

Սակայն այսօր երիտասարդությունը, ինքնին, սկսում է գիտակցել այդ փաստը, ինչպես նաև քաղաքական լծակների օգտագործման կարևորությունը: Այսօր երիտասարդությունն իր նախաձեռնությամբ է մուտք գործում քաղաքականություն, և այս գործընթացն արդեն կրում է համընդհանուր բնույթ: Երիտասարդությունն ունի հզոր նորարարական ներուժ, ինչը հասարակական կյանքի այսօրվա և ապագա սոցիալական փոփոխությունների աղբյուրն է: Հասարակության մեջ երիտասարդների դերի և նշանակության բարձրացումը օրինաչափ երևույթ է, ինչը մեծապես դրսևորվում է հասարակության արդիականացման փուլում:

Արդի պայմաններում քաղաքական արդիականացման գործընթացում տեղի ունեցող զարգացումների տեսանկյունից հատուկ նշանակություն է ստանում երիտասարդների քաղաքական մասնակցությունը, որը կարող է հանդիսանալ քաղաքական համակարգում կառուցվածքային փոփոխությունների և նոր քաղաքական մշակույթի ձևավորման հիմքը: Քաղաքական գործընթացներում երիտասարդ-

ների ներգրավումը պետք է խրախուսվի պետության կողմից նրանց ստեղծագործական ներուժի բացահայտման նպատակով:

Որպես եզրակացություն՝ հարկ է նշել, որ այսօր երիտասարդները սոցիալ-քաղաքական արդիականացման հիմնական աղբյուրն են, քանի որ նրանք արդեն ձեռք են բերել որոշակի ընտրական փորձ, իսկ քաղաքական սերնդափոխությունը ժողովրդավարական պետություններում սոցիալական և քաղաքական փոփոխությունների գլխավոր շարժիչ ուժն է: Միայն այս սերնդափոխության բնականոն ընթացքի ապահովման միջոցով է հնարավոր ժողովրդավարական քաղաքական համակարգի հետագա զարգացումը Հայաստանում:

Կազմակերպված քաղաքական մասնակցությունն ապահովող հիմնական ինստիտուտը քաղաքական կուսակցություններն են: Դրանց հիմնական գործառույթների և նպատակների շարքում են հասարակության քաղաքական սոցիալականացումը, քաղաքական լիդերների առաջադրումը, քաղաքական արժեքների ու ավանդույթների տարածումը, իրենց անդամների քաղաքական պահանջմունքների բավարարումն ու շահերի պաշտպանությունը, իրենց քաղաքական ծրագրերի կենսագործման համար օրինական ճանապարհներով իշխանության ձեռքբերումը և այլն:

Հայաստանում քաղաքական կուսակցությունների վերաբերյալ հասարակության մեջ իշխում են հիմնականում ոչ բարյացակամ ու անհանդուրժողական տրամադրություններ, որոնք պայմանավորված են մի շարք գործոններով:

1. Նախ՝ տիրապետում է այն տեսակետը, ըստ որի՝ կուսակցությունների ճնշող մեծամասնությունը կտրված են հասարակությունից, անտեղյակ են նրա անդամների խնդիրներին: Թերևս միայն ընտրությունների ժամանակահատվածում են նրանք «հիշում» ժողովրդին՝ վերջինիս մատուցելով անիրական խոստումների հարուստ տեսականի:
2. Կուսակցությունները, ըստ էության, չեն ապահովում հասարակության քաղաքական սոցիալականացումը, այսինքն՝ հասարակության անդամների շրջանում չեն ձևավորում քաղաքական

մասնակցության համապատասխան որակներ ու հմտություններ, ինչպես նաև քաղաքական վարքագծի կոնկրետ դրսևորումներ:

3. Կուսակցությունների գաղափարախոսությունների, ծրագրերի և իրական գործելակերպի միջև առկա է լուրջ անհամապատասխանություն: Նրանց գործունեությունը առավելապես պոպուլիզմի տիրույթում է, որն էապես փոքրացնում է քաղաքական գաղափարներ ու արժեքներ տարածողի կուսակցությունների դերը:
4. Վերջապես, Հայաստանում կուսակցությունները, ըստ էության, չեն իրականացնում նոր լիդերների ընտրության և առաջադրման կարևոր գործառույթը: Փաստորեն, նրանց միջոցով չի լուծվում քաղաքական համակարգի կենսունակությունն ապահովող առանցքային խնդիրներից մեկը՝ քաղաքական սերնդափոխության խնդիրը: Այս հանգամանքն ուղղակի առնչվում է երիտասարդությանը, որը, ի դեմս կուսակցությունների՝ չի տեսնում իր քաղաքական կարիերայի առաջխաղացմանը նպաստող ինստիտուտի: Միայն այն հանգամանքը, որ 2003 թ. ԱԺ ընտրությունների արդյունքում ընտրվել են մինչև 30 տարեկան ընդամենը հինգ պատգամավոր, որոնցից միայն երկուսն են կուսակցական և 2007թ. ԱԺ ընտրություններում ընտրվել է մինչև 35 տարեկան ընդամենը 3 պատգամավոր, որոնցից երեքն էլ կուսակցություններից, թերևս ասվածի լավագույն վկայությունն է:¹⁷

Անդրադարձնալով տարբեր կուսակցություններում երիտասարդության ներգրավվածության խնդրին՝ նախ և առաջ պետք է տիրապետել դրանցում երիտասարդական կազմակերպված թևերի վերաբերյալ տեղեկատվությանը: Այս իմաստով հատկանշական է, որ ՀՀ-ում գործող 80-ից ավելի կուսակցություններից ընդամենը 30-ն ունեն երիտասարդական թևեր կամ մշտապես գործող երիտասարդական կառույցներ: Միանշանակ է, որ դրանց ճնշող մեծամասնությունը կանոնավոր, կազմակերպված կուսակցական գործունեություն չեն ծավալում, հետևաբար՝ կարելի է արձանագրել, որ դրանք առավելա-

¹⁷ Հայաստանի հանրապետության Ազգային ժողով. երրորդ և չորրորդ գումարումներ www.parliament.am

պես անվանական կառույցներ են: Թերևս քիչ թե շատ ակտիվ գործող երիտասարդական թևեր և կառույցներ ունեն իշխող կոալիցիայի կուսակցությունները (ՀՀԿ, նախկին կոալիցիոն՝ ԲՀԿ), ընդդիմադիր՝ ՀՅԴ-ն և ՀԱԿ-ը: Զուգահեռ սրան Հայաստանում գործում են երեք կուսակցություններ (Հայաստանի երիտասարդական կուսակցություն, Հայաստանի առաջադիմական կուսակցություն, «Արդարություն» կուսակցություն), որոնց թե՛ ղեկավար և թե՛ շարքային անդամների ճնշող մեծամասնությունը երիտասարդներ են: Սակայն այս քաղաքական միավորներին չի հաջողվել հավաքագրել երիտասարդությանը և խիստ վերապահումներով կարելի է շեշտել, որ նրանք ներկայացնում են երիտասարդության որոշակի ստվար զանգվածի շահերը, որոնք ցուցաբերում են քաղաքական ակտիվություն բացառապես նախընտրական ժամանակաշրջանում:

Փաստորեն՝ ակնհայտ է, որ երիտասարդներն իրենց քաղաքական «առաջխաղացումը», քաղաքական պահանջմունքների բավարարումը տեսնում են հիմնականում կուսակցություններից դուրս: Հատկանշական է, որ «Երիտասարդական ազգային զեկույցի»¹⁸ շրջանակներում անցկացված զանգվածային հարցումների տվյալները վկայում են, որ երիտասարդության միայն 3.6%-ն է որևէ կուսակցության անդամ, իսկ 5%-ը վստահում է որևէ կուսակցության:

Իրերի նման կարգը էապես արժեզրկում է կուսակցությունների դերն ու նշանակությունը քաղաքական սերնդափոխության գործում և երիտասարդությանը մղում այլընտրանքային, երբեմն նույնիսկ հասարակության մեջ իրենց կարգավիճակին և կոչմանը ոչ հարիր ճանապարհների ընտրությանը: Թերևս նաև սրանով կարելի է բացատրել, այսպես կոչված, ապաքաղաքական, «նոմենկլատուրային» երիտասարդության ընդգծված հավակնությունները, որոնք քաղաքականացված, առավել ևս կուսակցականացված երիտասարդությանը իրական հակակշիռ չեն դիտում քաղաքական սերնդափոխության գործում:

¹⁸ Հայաստանի երիտասարդության ազգային զեկույց, Երևան, 2005, էջ 152-155:

Քաղաքական մասնակցության տիրույթում առանցքային խնդիրներից է երիտասարդության ընտրական մասնակցությունը: Պետք է նշել, որ Հայաստանում երիտասարդությունը, որպես կանոն, ակտիվ մասնակցություն չի ունենում թե՛ տեղական, թե՛ համապետական ընտրական գործընթացներին: Երիտասարդների շրջանում խիստ մեծ է աբսենտիստների (ընտրություններին չմասնակցողներ) տեսակարար կշիռը: Նրանք իրենց չմասնակցությունը հիմնականում բացատրում են տարբեր դրդապատճառներով՝

- բացարձակ անտարբեր են քաղաքական գործընթացների և առհասարակ քաղաքականության նկատմամբ,
- իրենց մեկ ծայրը որոշիչ չեն համարում,
- չեն վստահում ընտրությունների արդարությանն ու թափանցիկությանը:

Ակնհայտ է, որ երիտասարդությունը քաղաքական մասնակցության առումով ունի ընդգծված խնդիրներ: Դրանք մի կողմից սահմանափակում են նրանց հնարավորությունները որոշումների կայացման գործընթացում որոշակի ազդեցություն ունենալու առումով, իսկ մյուս կողմից արգելակում են մեր երկրում բնականոն քաղաքական սերնդափոխության գործընթացը: Այն հանգամանքը, որ արդեն քսան տարի շարունակ Հայաստանում գործում է իշխանության ձևավորման (վերարտադրության), միևնույն անձանց պաշտոնների փոխատեղման շրջապտույտի մեխանիզմը, վկայում է քաղաքական մշակույթի լճացման մասին: Այս երևույթի հաղթահարման և Հայաստանում դինամիկ քաղաքական մշակույթ ունենալու համար կենսապահանջ է դառնում առավել գրագետ, կրթված, բարոյական բարձր արժանիքներ, պետական և ազգային մտածողություն ունեցող անձանց՝ քաղաքական դաշտ մուտք գործելը, այսինքն՝ մերիտոկրատական իշխանության ձևավորումը: Այս հարցում գործունե միջոց կարող է հանդիսանալ քաղաքական խոսույթը հասարակական գիտակցության մեջ համապատասխան պահանջ ձևավորելու տեսանկյունից:

Միանշանակ է, որ երիտասարդության ակտիվ ու ազդեցիկ քաղաքական մասնակցությունն առավելապես պայմանավորված է

մեր երկրում կուսակցությունների՝ որպես քաղաքական սոցիալականացման կարևորագույն օղակների դերի բարձրացումով: Դրան նպաստեցին ընտրական օրենսգրքում նախատեսված համամասնական (կուսակցական ցուցակներով) տեղերի ավելացումը և 2011թ.-ին ստեղծված Երիտասարդական խորհրդարանը: Սրան կարող է նպաստել նաև գաղափարաքաղաքական հստակ ուղղվածություն ունեցող կուսակցությունների գործունեությունը, որի պարագայում առաջին պլան կմղվի կենսունակ գաղափարների ու քաղաքական ծրագրերի միջև պայքարը:

Պակաս կարևոր չէ նաև երիտասարդության ակտիվ մասնակցությունն ընտրական գործընթացներին: Ընդ որում՝ պետք է նկատի ունենալ ոչ միայն քաղաքական ընտրությունների քվեարկության փուլին երիտասարդության մասնակցությունը, այլ նաև ընտրական գործընթացի կազմակերպմանը և կառավարմանը նրանց ակտիվ ներգրավումը (հանձնաժողովների անդամների կարգավիճակով, տարբեր դիտորդական առաքելություններին մասնակցությամբ, «Exit poll»-երի (2008 թ.-ի նախագահական ընտրություններում Populus-ի և Հայկական Սոցիոլոգիական Ասոցիացիայի կողմից կազմակերպված «Exit poll»-ին առավելապես ընդգրկվեցին երիտասարդներ) ներգրավմամբ և այլն:

Խիստ կարևոր է նաև մտավոր ու կազմակերպական բարձր ներուժով օժտված, քաղաքական լիդերի որակներ դրսևորող երիտասարդների ընդգրկումը կուսակցությունների համամասնական ցուցակների անցողիկ տեղերում: Անշուշտ, նման մոտեցումը, առավելապես պայմանավորված է թե՛ գործող իշխանությունների և թե՛ ընդդիմության քաղաքական կամքով: Մի բան ակնհայտ է, որ նման հասարակական պահանջ մեր երկրում առկա է:

2.3. Քաղաքական բանավեճը որպես քաղաքական մշակույթի տարր

Բանավեճը՝ որպես երևույթ, ունի բավականին հին պատմություն, և ըստ որոշ պատկերացումների՝ այն ձևավորվել է մարդկանց մոտ ի հայտ եկած առաջին տարածայնությունների հետևանքով: Ղեռևա Հին Հունաստանում այն համարվում էր ժողովրդավարության կարևոր բաղկացուցիչ, և այսօր նրա կիրառումը քաղաքական գործընթացներում վստահորեն պահպանում է իր արդիականությունը և կարևորությունը:

Բանավեճի էությունը երրորդ՝ չեզոք կողմին, սեփական փաստարկների՝ առավել ճշմարիտ լինելու փաստի ապացուցումն է՝ ի տարբերություն հակառակորդի փաստարկների: Չնայած, որ, ըստ էության, բանավեճի նշանակությունը պարզ է և մատչելի՝ այնուամենայնիվ, նրա կիրառման ռազմավարությունը և մեթոդները բավականին բարդ են:¹⁹

Չարգացած ժողովրդավարական երկրներում քաղաքական մշակույթի առանձնահատկություններից են նաև քաղաքական բանավեճերը, որոնք կարևոր նշանակություն ունեն հասարակության շրջանում քաղաքական վարքագծի ձևավորման գործում: Քաղաքական բանավեճերն առավելապես ներհատուկ են համապետական և համազգային հիմնախնդիրների բարձրաձայնմանը և քննարկմանը, ինչպես նաև ցանկացած տիպի նախընտրական գործընթացների փուլում թեկնածուների գաղափարական և հայեցակարգային մոտեցումների վերհանմանը, այդպիսով նաև հասարակական գիտակցության վրա ազդեցություն գործադրելուն: Արդի զարգացած ժողովրդավարական երկրներում այս երևույթը դարձել է քաղաքական մշակույթում կայացած մեխանիզմ: Քաղաքական գործիչներն իրենց նախընտրական քարոզարշավներում մեծ տեղ են հատկացնում քաղաքական բանավեճի մշակույթին, քանի որ ձևավորված քաղաքացիա-

¹⁹ *Куприянова В., Назаров А.* Дебаты: от теории к практике: руководство. Хабаровск: Изд-во ДВАГС, 2009, с. 7.

կան հասարակություն ունեցող երկրներում դրա հասարակական պահանջը բավականաչափ մեծ է:

Ի տարբերություն նախընտրական քարոզարշավների այլ մեխանիզմների (ուղերձներ, հեռուստառադիոհեռուցումներ, հանդիպումներ ընտրողների հետ և այլն), որոնք կառուցված են հիմնականում մենախոսական խոսույթի վրա՝ քաղաքական բանավեճերը ներկայացնում են բազմակողմ խոսույթ՝ հիմնված գաղափարական հենքի վրա, որն ընտրողին տալիս է իր համոզմունքներում կողմնորոշվելու առավել հստակ հնարավորություն:

Հետխորհրդային Հայաստանում քաղաքական բանավեճերի մշակույթը չունի լայն կիրառում, ինչը պայմանավորված է ցածր քաղաքական գիտակցության և վարքագծի մակարդակով: Քաղաքական բանավեճերի բացակայությունը կամ խիստ սահմանափակվածությունը պայմանավորված են մի քանի հիմնական հանգամանքներով՝

- հասարակական պահանջի բացակայություն,
- իշխանության շարունակական վերարտադրություն,
- ձևական գաղափարական այլուրալիզմի առկայություն,
- քաղաքական կուսակցությունների անձնավորվածություն:

Քաղաքական բանավեճերի հանդեպ հասարակական պահանջի բացակայությունը պայմանավորված է հասարակության քաղաքական սոցիալականացման ցածր մակարդակով: Հայ հասարակությունը, լինելով բավականին քաղաքականացված, այնուամենայնիվ, դեռևս գտնվում է քաղաքական սոցիալականացման նախնական՝ քաղաքականացման և անձնավորման փուլում: Սա ենթադրում է, որ իշխանության մասին պատկերացումները հասարակության մոտ կրում են անձնավորված բնույթ: Միայն ինստիտուցիոնալացման փուլում է հնարավոր հասնել հասարակական-քաղաքական գիտակցության այն աստիճանին, որն էլ կձևավորի քաղաքական բանավեճերի նկատմամբ բարձր հասարակական պահանջ:

Քաղաքական իշխանության շարունակական վերարտադրությունը, այնինքն՝ պաշտոնների փոխատեղումը, արգելակում է նոր գաղափարների մուտքը քաղաքական դաշտ՝ պահպանելով նախկին

իշխանական վերարտադրության մեխանիզմը, որտեղ քաղաքական բանավեճերի մշակույթը տեղ չունի:

Այսօր Հայաստանում գրեթե բացակայում է հայեցակարգային գաղափարական պլուրալիզմը, քանի որ քաղաքական դաշտում ակտիվ գործող կուսակցությունների ծրագրերը հիմնականում չեն տարբերվում միմյանցից: Այս պարագայում քաղաքական ուժերը շեշտը դնում են բացառապես առաջնորդի անձնական որակների վրա: Այն հանգամանքը, որ հասարակությունը դեռևս գտնվում է քաղաքական սոցիալականացման անձնավորման փուլում, հնարավորություն է տալիս քաղաքական ուժերին ներկայանալ առաջնորդ անձի կերպարով: Այդ պատճառով է, որ քաղաքական ուժի գոյությունը քաղաքական դաշտում գլխավորապես պայմանավորված է առաջնորդով: Այսպիսի կուսակցություններում լիդերային դետերմինիզմի բացասական և վտանգավոր կողմն է նաև այն, որ առաջնորդի անձնական վարքագծով է պայմանավորված քաղաքական ուժի կենսագործունեությունը:

Հարկ է նշել, որ Հայաստանում նախընտրական քարոզարշավի շրջանակներում քաղաքական հեռուստաբանավեճ տեղի է ունեցել 2003թ. նախագահական ընտրությունների երկրորդ փուլից առաջ երկու թեկնածուների՝ Ս. Ղեմիրճյանի և Ռ. Քոչարյանի միջև, որի արդյունքում այն լայն արձագանք է ստացել հասարակության կողմից և իրականում ունեցել է բավականաչափ մեծ ազդեցություն քվեարկության վերջնական արդյունքի վրա:

2012թ.-ին ևս ԱԺ ընտրություններից առաջ մի քանի հեռուստաընկերություններ՝ ԱրմՆյուզը և Կենտրոնը, կազմակերպեցին հեռուստաբանավեճեր քաղաքական ուժերի ներկայացուցիչների միջև, սակայն դրանք չի կարելի համարել արդյունավետ քաղաքական մշակույթի տեսանկյունից, քանի որ, ըստ էության, ակնկալվող գաղափարական բանավեճերը հիմնականում դուրս էին գաղափարների և ծրագրերի դաշտից և երբեմն նույնիսկ վերածվում էին անձնական վիրավորանքների և զրպարտությունների:

Նկատենք, որ քաղաքական բանավեճի մշակույթի զարգացումը մեզանում խիստ կարևոր է և անհրաժեշտ, քանի որ այս բացը ևս

բացասաբար է անդրադառնում մեր քաղաքական համակարգի արդյունավետ գործառնության վրա:

2.4 Քաղաքական ուժերի գաղափարական առանձնահատկությունները Հայաստանում

Անդրադառնանք քաղաքական ուժերի ծրագրերի խոսութային վերլուծությանը ՀՀ-ում, որը թույլ կտա ավելի հստակորեն պատկերացնել քաղաքական գործընթացներում նրանց դիրքորոշումները և քաղաքական կողմնորոշումը:

Ժողովրդավարական պետություններում քաղաքական կուսակցությունները մեծ դեր են խաղում հասարակական-քաղաքական ոլորտում: Լինելով քաղաքական պլյուրալիզմի երաշխիք՝ նրանք ներկայացնում են տարբեր սոցիալական խմբերի շահերը և կոչված են ապահովելու նրանց ձայները կառավարման մարմիններում: Այս տեսանկյունից մեծ հետաքրքրություն է առաջացնում քաղաքական ուժերի ծրագրերի խոսութային վերլուծությունը, որի միջոցով կարելի է պարզել քաղաքական համակարգում նրանց գաղափարախոսական ուղղվածությունը:

Հետագոտենք Հայաստանի պետական կառուցվածքը և կառավարման ձևը քաղաքական ուժերի ծրագրերի խոսութային վերլուծության միջոցով: Քաղաքական խոսույթը, հանդիսանալով քաղաքական հաղորդակցության միջոց, հնարավորություն է տալիս խորապես ուսումնասիրել վերը նշված երևույթները և բացահայտել դրանց առանձնահատկությունները քաղաքական մշակույթում:

Մեր կողմից ընտրված վեց քաղաքական ուժերը ներկայացված են 2012թ.-ին ձևավորված 5-րդ գումարման Ազգային ժողովում (Հայաստանի Հանրապետական կուսակցություն, «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն, «Օրինաց Երկիր» կուսակցություն, Հայ Յեղափոխական Դաշնակցություն, «Ժառանգություն» կուսակցություն և «Հայ Ազգային Կոնգրես» դաշինք):

Փորձենք վերոհիշյալ քաղաքական ուժերի ծրագրերում գտնել պետության կերտման մի շարք կարևոր հարցերի շուրջ նմանություններ և տարբերություններ:

Նախ և առաջ անդրադառնանք պետականությանը վերաբերող քաղաքագիտական որոշ հասկացություններին: Սահմանադրական իրավունքում պետությունը սահմանվում է որպես իշխանական կառույց, որը տիրապետում է պետության տարածքում հասարակության կազմակերպման ինքնիշխան լիազորություններին և սահմանում նրա գործակցությունն արտաքին աշխարհի հետ:²⁰ Պետության կառուցվածքը ենթադրում է պետականությանը բնորոշ հատկանիշներ՝ պետական կառուցվածքի ձև, քաղաքական վարչակարգ, կառավարման ձև:

Պետականության հատկանիշները բոլոր քաղաքական ուժերի ծրագրերի բաղկացուցիչ տարրերն են, քանի որ կուսակցությունների նպատակը իշխանության ձեռքբերումն է, իրականացումը և պահպանումը: Բնականաբար, դրանք արտացոլում են առաջատար պետությունների պետականաշինության փորձը, այդ իսկ պատճառով 20-րդ դարի երկրորդ կեսին ընդունված սահմանադրությունները բովանդակում են պետականության այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են՝ ժողովրդավարական, իրավական, սոցիալական և այլ հատկանիշները:

Պետական կազմակերպման ձևը²¹ վերաբերում է տարածքային կազմակերպմանը, ինչպես նաև կենտրոնական և տեղական քաղաքական մարմինների փոխհարաբերություններին: Ժամանակակից աշխարհում գոյություն ունեն պետական կառուցվածքի ունիտար (միատարր), դաշնային և համադաշնային ձևեր:

Քաղաքական վարչակարգը²² նեղ իմաստով մեթոդների և միջոցների ամբողջություն է, որի միջոցով իշխող դասն իրականացնում է իր

²⁰ Պողոսյան Վ., Միրումյան Կ., Բաբաջանյան Ա., Աստվածատուրով Ս. «Քաղաքագիտություն» հանրագիտական բառարան, Պետություն, Print Master, Երևան, 2004, էջ 337:

²¹ Նույն տեղում, էջ 333:

²² Նույն տեղում, էջ 438:

քաղաքական և տնտեսական տիրապետությունը, հասարակության մեջ իր իշխանությունը: Լայն իմաստով այն քաղաքական համակարգի հատկանիշ է, քանի որ քաղաքական վարչակարգն արտացոլում է հասարակության քաղաքական ոլորտի որոշակի վիճակը, որի բաղադրիչներն են քաղաքական հարաբերությունները, քաղաքական կազմակերպումը և քաղաքական գիտակցությունը: Տարբերակում են քաղաքական վարչակարգի երեք ձև՝ ժողովրդավարական, ավտորիտար և ամբողջատիրական (տոտալիտար):

Կառավարման ձևը²³ պետական իշխանության կազմակերպումն է, որը սահմանվում է պետական իշխանության գերագույն մարմինների կառուցվածքով և իրավական կարգավիճակով: Այն կախված է գերագույն պետական իշխանության կազմակերպումից, ավելի ստույգ՝ պետական իշխանության գերագույն մարմիններից մեկի իրավական կարգավիճակից, այսինքն՝ պետության առաջնորդից: Կառավարման երկու հիմնական ձևերի՝ միապետության և հանրապետության միջև տարբերությունն այն է, թե ով է կանգնած պետության գլխում:

Այժմ մանրամասն հետազոտենք պետական կառուցվածքի և պետական իշխանության վերաբերյալ մեր կողմից առանձնացված վեց քաղաքական ուժերի (ՀՀԿ, ԲՀԿ, ՀԱԿ, ՕԵԿ, ՀՅԴ, Ժառանգություն) դիրքորոշումները: Այս պարագայում բախվում են քաղաքական ուժերի հիմնական շահերը և պետության կառավարման գործում նրանց մոտեցումները:

Այսպես՝ օրենսդիր մարմնի գործունեությունն ամրապնդել առաջարկում է ՀՀԿ-ն՝ գտնելով, որ դա կարող է դրական ազդեցություն ունենալ Հայաստանի ներքին քաղաքականության վրա և նպաստել պետական կառույցներում տեղի ունեցող գործընթացների բարելավմանը:

Ինչպես նշվում է ՀՀԿ ծրագրում, այն ազգային պահպանողական կուսակցություն է: ՀՀԿ նպատակներն ու գործունեությունը բխում են

²³ *Սույն տեղում*, էջ 213:

ազգի և հայրենիքի հավիտենության գաղափարներից: Այդ նպատակի իրագործման գրավականը հայ ազգային գաղափարախոսությունն է:²⁴

Պետության գործունեության հիմնական սկզբունքների և ուղղությունների վերաբերյալ Հայաստանի Հանրապետական կուսակցությունն ունի իր մոտեցումները: Հայոց պետությունը հայության նպատակների իրականացման հիմնական և ամենաարդյունավետ միջոցն է: Պետական կառավարման ձևը, կախված իրականացվող նպատակների, ծրագրերի լուծման արդյունավետությունից, կարող է փոխվել պետության զարգացման տարբեր փուլերում, իսկ կառավարման համակարգի գործունեությունը պետք է հիմնված լինի իրավունքի գերակայության, օրենքի իշխանության, ազգային անվտանգության և զարգացման հայեցակարգերի ու ծրագրերի վրա: Պետությունը պետք է աջակցի քաղաքական համակարգի զարգացմանը, ժողովրդավարության կայացմանը, մասնակի և փուլային բարեփոխումների ճանապարհով՝ հասարակության անընդհատ բարելավմանը: Ցանկացած բարեփոխում պետք է համապատասխանի հասարակության ավանդական արժեհամակարգին՝ ուղղված լինելով դրա արդիականացմանը:²⁵

Խորհրդարանի գործունեությունն ամրապնդել առաջարկում է «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը՝ գտնելով, որ պետք է ստեղծել պայմաններ Ազգային ժողովի ընտրությունների հարյուր տոկոսանոց համամասնական ընտրական համակարգին անցում կատարելու համար: Դա նշանակում է, որ այդպիսով աճում է տարբեր քաղաքական կուսակցությունների՝ խորհրդարան մուտք գործելու հնարավորությունը, ինչը կուսակցական լիդերների միջև պայքարից բացի կհանգեցնի նաև գաղափարական պայքարի, որն ավելի գնահատելի է ժողովրդավարական պետություններում:²⁶ Ինչ վերաբերում է պետական կառավարման արդյունավետությանը, ապա ԲՀԿ-ն անհրաժեշտ է համարում՝ 1. բացառել նախարարությունների, գերա-

²⁴ ՀՀԿ ծրագիր, <http://hkh.am/arm/index.php?page=program>

²⁵ ՀՀԿ ծրագիր, <http://hkh.am/arm/index.php?page=program>

²⁶ ԲՀԿ ծրագիր, <http://bkh.am/arm/program.php>

տեսչությունների և պետական կառավարման այլ մարմինների կողմից միանման գործառնությունների իրականացումը, 2. ընդունել վարչական կանոնակարգ՝ սահմանելով ու հստակեցնելով որոշումներ ընդունելու կարգը և ժամկետները, ինչպես նաև փաստաթղթաշրջանառության և վարչարարության կանոնների խախտման համար պատասխանատվությունը, 3. բարձրացնել պետական մարմինների և պաշտոնատար անձանց գործունեության թափանցելիության աստիճանը՝ արմատավորելով հասարակական վերահսկողության միջազգային փորձը, 4. հնարավորինս կրճատել պետական պաշտոնյաների և ծառայողների թվաքանակը, բարձրացնել նրանց պատասխանատվությունը և կատարելագործել պետական ծառայողների վարձատրության համակարգը:²⁷

Ուշագրավ է նաև պետական կառուցվածքի մասին «Ժառանգություն» կուսակցության ծրագիրը, որտեղ նշվում է, որ տվյալ կուսակցության գաղափարախոսության կարևոր դրույթներից է ազգային գաղափարախոսության վրա հիմնված ազատական, ժողովրդավարական կառավարման համակարգը, որի նպատակն է իրավական, սոցիալական պետության ստեղծումը, որտեղ ազգային և պետական շահերը վեր են ամենից: Որպես ժողովրդավարական պետություն՝ Հայաստանում շատ կարևոր է իշխանության տարանջատման սկզբունքը, որը համարվում է քաղաքական գործողություններում ազատության և անկախության հիմք:²⁸

Պետական կառուցվածքի տեսանկյունից ՕԵԿ-ը նույնպես ժողովրդավարական արժեքների կողմնակից է: Կուսակցության ծրագրում կարևոր են համարվում հետևյալ կետերը՝ 1. ժողովրդավարական, սոցիալական, աշխարհիկ և իրավական պետության կերտումը, 2. իշխանության երեք թևերի՝ օրենսդիր, գործադիր, դատական, կայուն զարգացումը և նրանց միջև համագործակցության ու փոխադարձ հակակշռման ապահովումը, 3. ժողովրդավարական ինս-

²⁷ ԲՀԿ ծրագիր, <http://bhc.am/arm/program.php>

²⁸ «Ժառանգություն» կուսակցության ծրագիր, <http://heritage.am/documents/programarm.htm>

տիտուտների ձևավորմանը և արդյունավետ գործունեությանը նպաստելը²⁹ և այլն:

ՀԱԿ-ը նույնպես նմանատիպ դիրքորոշում ունի վերոհիշյալ հարցերի վերաբերյալ: Նրա ծրագրում նշվում է, որ դաշինքն ընտրել է պետականության, ժողովրդավարության, ազատականության, խաղաղության և սոցիալական արդարության գաղափարական սկզբունքները: Այդ սկզբունքների իրագործման համար դաշինքն անհրաժեշտ է համարում սոցիալ-տնտեսական քաղաքականության համակարգային վերափոխումը և բարեփոխումների հրատապ իրականացումը, գյուղատնտեսության խթանմանն ուղղված միջոցառումների ձեռնարկումը, արդյունաբերության զարգացումը, ազգային էկոլոգիական անվտանգության, դատաիրավական բարեփոխումների հայեցակարգերի ընդունումը և այլընտրաքային ծրագրերի մշակումը:³⁰

ՀՅԴ-ն տարբերվում է մյուս կուսակցություններից իր գաղափարախոսությամբ: Ծրագրում նշված ազգային, ժողովրդավարական և այլ նպատակներից բացի՝ ՀՅԴ-ն իրեն համարում է նաև հեղափոխական կուսակցություն: Այն իր բոլոր ուժերով պայքարում է հայ ազգի քաղաքական-տնտեսական, ընկերային-մշակութային բովանդակ շահերի պաշտպանության համար:³¹ ՀՅԴ-ն հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարը հիմնավորում է իր գաղափարաբանությամբ: Նա առաջադրում է անհատի ազատության, ազգային ինքնորոշման, անկախ պետականության, ընկերության համերաշխության և բարօրության ճանապարհով հայ մարդու և հայ ազգի անկաշկանդ, բազմակողմանի և ներդաշնակ զարգացման ապահովումը:

Այսպիսով՝ մեր կողմից ընտրված վեց քաղաքական ուժերի ծրագրերի խոսությային վերլուծությունից պարզ է դառնում, որ բոլոր ուժերը (ՀՀԿ, ԲՀԿ, ՕԵԿ, ՀԱԿ, ՀՅԴ, Ժառանգություն) միակարծիք են պետական կառուցվածքին և պետական իշխանությանը վերաբերող հետևյալ հարցերում՝

²⁹ ՕԵԿ ծրագիր, <http://www.oek.am/program.html>

³⁰ ՀԱԿ ծրագիր, <http://www.anc.am/am/60/>

³¹ ՀՅԴ ծրագիր, <http://www.arfd.am/arm/index.php?c=1&sc=1&id=2&p=0>

1. կառավարման ձևը պետք է լինի հանրապետական,
2. բոլոր քաղաքական ուժերը կողմ են միատարր պետական-տարածքային կառուցվածքին,
3. քաղաքական վարչակարգը պետք է լինի ժողովրդավարական,
4. Հայաստանը պետք է լինի ժողովրդավարական, աշխարհիկ, սոցիալական և իրավական,
5. պետական ապարատը պետք է կազմակերպվի իշխանության տարանջատման սկզբունքով. օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունները պարտավոր են միմյանց փոխլրացնել, փոխգապել և փոխվերահսկել,
6. քաղաքական ուժերի մեծամասնությունն անհրաժեշտ է համարում պայքարել իշխանական մարմիններում առկա կոռուպցիայի և բյուրոկրատիզմի դեմ (այս դրույթը հստակ սահմանված է ԲՀԿ³², Ժառանգության³³, ՕԵԿ³⁴ և ՀԱԿ³⁵ ծրագրերում): Նկատենք, որ այս մասին ոչինչ չի նշվում ՀՅԴ ծրագրում:

Վերլուծենք մեր կողմից ընտրված քաղաքական ուժերի դիրքորոշումներն արտաքին քաղաքականության ոլորտում, մասնավորապես՝ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի, Հայաստան-Սփյուռք հարաբերությունների և հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցերի վերաբերյալ, որոնք համարվում են ՀՀ արտաքին քաղաքականության գերակայություններ:

ԲՀԿ ծրագրում այս հարցերը ներկայացված են առանձին կետերով: Արցախյան խնդրի կապակցությամբ կուսակցության ծրագրում նշվում է, որ Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի միջազգային ճանաչման ապահովմամբ, հակամարտության երկու կողմերի՝ Արցախի և Ադրբեջանի կատարած փոխզիջումների հիման վրա, անվտանգության միջազգային երաշխիքների ամրագրմամբ Արցախի

³² ԲՀԿ ծրագիր, <http://bhc.am/arm/program.php>

³³ «Ժառանգություն» կուսակցության ծրագիր, <http://heritage.am/documents/programarm.htm>

³⁴ ՕԵԿ ծրագիր, <http://www.oek.am/program.html>

³⁵ ՀԱԿ ծրագիր, <http://www.anc.am/am/60/>

հիմնախնդրի խաղաղ, քաղաքական ճանապարհով կարգավորումը ՀՀ արտաքին քաղաքականության գերակայություններից մեկն է:³⁶ Կուսակցությունն անհրաժեշտ է համարում նաև ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում ընթացող բազմակողմ և ուղղակի բանակցություններին զուգընթաց համակողմանիորեն աջակցել Արցախի անվտանգության ապահովմանը, ժողովրդավարացմանը, սոցիալ-տնտեսական զարգացմանը և տարածաշրջանային ինտեգրմանը: ԲՀԿ-ի համար ընդունելի է արցախյան հիմնախնդրի այնպիսի կարգավորումը, որի բանակցային գործընթացում ԼՂՀ-ն հանդես կգա որպես լիիրավ կողմ, իսկ Արցախի կարգավիճակի հարցում կբացառվի որևէ լուծում՝ առանց Արցախի ժողովրդի համաձայնության: ԼՂՀ անկախությունն այլընտրանք չունի:³⁷

Ինչ վերաբերում է Սփյուռքին և հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը, ապա ԲՀԿ-ն անհրաժեշտ է համարում Հայաստան-Սփյուռք հարաբերությունների համակարգված զարգացումը և հետագա խորացումը միջազգային իրավունքի նորմերին համապատասխան, իսկ ցեղասպանության կապակցությամբ կուսակցության ծրագրում հստակ նշվում է հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցում Հայաստանի Հանրապետության մասնակցության չափն ազգային, պետական իրատեսական շահերով պայմանավորելու մասին: Կուսակցության ծրագրում հստակորեն նշվում է, որ հայոց ցեղասպանության դատապարտումն ու միջազգային ճանաչումն այլընտրանք չունի:³⁸

ՀՀԿ ծրագրում ստույգ չի խոսվում արցախյան խնդրի և հայոց ցեղասպանության մասին, այլ ուղղակի նշվում է, որ արտաքին քաղաքականության ոլորտում պետության գործունեությունը պետք է ուղղված լինի հարևան երկրների հետ բարիդրացիական և կայուն հարաբերությունների հաստատմանն ու պահպանմանը, միջազգային հանրությանը բնականոն ինտեգրմանը, նրանում Հայաստանի դերի

³⁶ ԲՀԿ ծրագիր, <http://bhc.am/arm/program.php>

³⁷ Նույն տեղում:

³⁸ Նույն տեղում:

մեծացմանը, աշխարհի բոլոր երկրների հետ փոխշահավետ քաղաքական, տնտեսական, մշակութային և այլ կապերի զարգացմանը:³⁹ Իսկ հայկական Սփյուռքի վերաբերյալ կուսակցության ծրագրում պարզ նշվում է, որ պետությունը պետք է բարենպաստ պայմաններ ստեղծի սփյուռքահայության ներուժի համախմբման համար՝ ի նպաստ Հայոց պետության հզորացման և Սփյուռքի արժանապատիվ գոյատևման՝ հիմնական նպատակ ունենալով սփյուռքահայության վերադարձը հայրենիք:

«Ժառանգություն» կուսակցության ծրագրում ևս առկա են արցախյան խնդրի կարգավորման և Սփյուռքի մասին դրույթներ: Արցախի կապակցությամբ կուսակցության ծրագրում սահմանված են Արցախի անկախության միջազգային ճանաչման ապահովման և Հայաստանի հետ նրա միավորման դրույթները: Իսկ ինչ վերաբերում է Սփյուռքին, ապա կուսակցությունն անհրաժեշտ է համարում նրա հետ արդյունավետ և բազմակողմանի հարաբերությունների ամրապնդումը և խորացումը՝ Սփյուռքում հայապահպանությանը նպաստելու համար:⁴⁰ Հարկ է նշել, որ «Ժառանգություն» կուսակցության ծրագրում բացակայում է հայոց ցեղասպանության մասին դրույթը:

Արտաքին քաղաքականության ոլորտում ՀՅԴ-ն նախ և առաջ ձգտում է Հայ Դատի լուծմանը և ողջ հայության համար ամբողջական հայրենիքի ստեղծմանը: Նրա արտաքին քաղաքականությունն ուղղված է այս նպատակի իրականացմանը: Կուսակցությունը կարեվորում է արցախյան խնդրի կարգավորումն Արցախի (ԼՂՀ) միջազգային ճանաչմամբ՝ առանց հայկական կողմից միակողմանի զիջումների:

Ինչ վերաբերում է ՕԵԿ-ին, ապա կուսակցության ծրագրում ևս առկա են արցախյան խնդրի և Հայաստան-Սփյուռք կապերի մասին դրույթներ: Կուսակցության ծրագրում անհրաժեշտ է համարվում գործուն պետական, հասարակական և իրավական մեխանիզմների ստեղծման, գործարար և մշակութային կապերի ակտիվացման

³⁹ ՀՀԿ ծրագիր, <http://hkh.am/arm/index.php?page=program>

⁴⁰ «Ժառանգություն» կուսակցության ծրագիր, <http://heritage.am/documents/programarm.htm>

ճանապարհով Հայաստան-Սփյուռք-Արցախ ներուժի համախմբումը: Արցախյան խնդրի լուծման համար պետք է հիմնվել համակարծության և ազգային շահերի վրա: Իսկ Սփյուռքի հետ հարաբերությունների ամրապնդումն անհրաժեշտ է ոչ միայն ազգային քաղաքական շահերի պաշտպանման, այլև ազգային արժեքները միջազգային ասպարեզում ներկայացնելու համար:⁴¹ ՕԵԿ ծրագրում ևս բացակայում է հայոց ցեղասպանության մասին դրույթը:

Վերլուծենք արտաքին քաղաքականության ոլորտում վերոհիշյալ հարցերի վերաբերյալ ՀԱԿ-ի մոտեցումները: Դաշինքի ծրագրում նշվում է, որ արտաքին քաղաքականության բնագավառում փակուղի են մտել Հայաստանի համար գերկենսական նշանակություն ունեցող խնդիրները՝ հայ-թուրքական հարաբերությունների և Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացները:⁴² Սակայն նկատենք, որ դաշինքի ծրագրում չեն նշվում վերը նշված հարցերի կարգավորման մեխանիզմները կամ միջոցները: Ուշագրավ է նաև, որ ՀԱԿ-ի ծրագրում չկան դրույթներ Հայաստան-Սփյուռք հարաբերությունների, հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման, տարածաշրջանային քաղաքականության և եվրոպական կառույցներին անդամակցության և դրանց հետ համագործակցության վերաբերյալ: Ի տարբերություն մյուս հինգ քաղաքական ուժերի՝ ՀԱԿ-ի ծրագիրն առանձնանում է իր ներքաղաքական բնույթով և մեծապես ուղղված է ներքին քաղաքական հիմնախնդիրների լուծման համար նոր մեխանիզմների և մոտեցումների մշակմանը:

Ստորև բերված աղյուսակում համակարգված կերպով ցույց տանք ներքին և արտաքին քաղաքականության ոլորտներում մեր կողմից ուսումնասիրված հարցերի վերաբերյալ վեց քաղաքական ուժերի ծրագրային դրույթների համեմատական պատկերը:

⁴¹ ՕԵԿ ծրագիր, <http://www.oek.am/program.html>

⁴² ՀԱԿ ծրագիր, <http://www.anc.am/am/60/>

Աղյուսակ 2.

<u>Ծրագրային դրույթներ,</u> պետական կա- ռուցվածքի, պե- տական իշխանու- թյան, արտաքին քաղաքականու- թյան մասին	ՀՀԿ	ԲՀԿ	ՕԵԿ	ՀՅԴ	Ժառան- գություն	ՀԱԿ
Ժողովրդավարա- կան վարչակարգ	առկա	առկա	առկա	առկա	առկա	առկա
Հանրապետական կառավարման ձև	առկա	առկա	առկա	առկա	առկա	առկա
Ազատական, իրավական պետություն	առկա	առկա	առկա	առկա	առկա	առկա
Պայքար կոռուպ- ցիայի, բյուրոկրա- տիզմի դեմ	առկա	առկա	առկա	չկա	առկա	առկա
Արցախյան հիմնախնդիր	չկա	առկա	առկա	առկա	առկա	չկա
Հայաստան - Սփյուռք կապեր	առկա	առկա	առկա	առկա	առկա	չկա
Ցեղասպանության միջազգային ճանաչում	չկա	առկա	չկա	առկա	չկա	չկա

Այսպիսով՝ քաղաքական ուժերի ծրագրերի խոսությամբ վերլու-
ծության արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացություններին:

Մեր կողմից ընտրված վեց քաղաքական ուժերը կողմ են այն
դրույթին, որ հայկական պետությունը պետք է լինի իրավական,
ժողովրդավարական և միատարր, պետք է ունենա ժողովրդավա-
րական քաղաքական վարչակարգ և հանրապետական կառավար-
ման ձև (խառը, խորհրդարանական-նախագահական կամ նախագա-
հական-խորհրդարանական), պետք է գործեն իշխանության եռաձյուղ

բաժանման և ՀՀ բոլոր սուբյեկտների իրավահավասարության սկզբունքները: Սակայն վեց քաղաքական ուժերից միայն մի քանիսի ծրագրերում են առկա իշխանական մարմիններում կոռուպցիայի և բյուրոկրատիզմի դեմ պայքարի մասին դրույթներ (ԲՀԿ, ՕԵԿ, Ժառանգություն և ՀԱԿ):

Արտաքին քաղաքականության ոլորտում վեց քաղաքական ուժերից չորսի ծրագրերում (ԲՀԿ, ՕԵԿ, ՀՅԴ, Ժառանգություն) նշվում է արցախյան խնդրի լուծման կարևորության մասին տարածաշրջանում քաղաքական իրավիճակի կայունացման և հարևան պետությունների հետ հարաբերությունների բարելավման նպատակով: Բացի ՀԱԿ-ից՝ մյուս հինգ քաղաքական ուժերի ծրագրերում կարևորվում են Հայաստան-Սփյուռք հարաբերությունները, քանի որ դրանց միջոցով կարելի է նպաստել միջազգային ոլորտում ազգային քաղաքական շահերի ներկայացմանը, ընդլայնմանը և պաշտպանմանը (օրինակ՝ արցախյան հիմնախնդրի լուծում, հայոց ցեղասպանության միջազգային ճանաչում): Ինչ վերաբերում է հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը, ապա այս դրույթն առկա է մեր կողմից վերլուծության ենթարկված կուսակցություններից միայն երկուսի ծրագրերում: ՀՅԴ-ն և ԲՀԿ-ն իրենց ծրագրերում հատուկ ուշադրություն են դարձրել այդ հարցին՝ հայոց ցեղասպանության ճանաչումը համարելով ազգային-պետական շահ:

Այսպիսով՝ կարելի է պնդել, որ վերոհիշյալ քաղաքական ուժերի ծրագրերում գոյություն չունեն խիստ գաղափարախոսական տարբերություններ, քանի որ բոլորն էլ առաջնորդվում են ժողովրդավարական գաղափարներով: Սակայն հարկ է նկատել, որ գոյություն ունեցող տարբերությունների մեծամասնությունը արտաքին քաղաքականության ոլորտում է, մասնավորապես՝ արցախյան խնդրի և հայոց ցեղասպանության հարցերի շուրջ:

Այս ամենը փաստում է, որ հայաստանյան քաղաքական մշակույթում քաղաքական ուժերի խիստ գաղափարական նմանությունները հիմնականում ներքին քաղաքականության ոլորտում պայմանավորում և նպաստում են քաղաքական ուժերի անձնավորված բնույթի պահպանմանը:

2.5. Քաղաքական մշակույթի առանձնահատկությունները Հայաստանում

Այսօր Հայաստանի քաղաքական համակարգում տեղի են ունենում տարատեսակ գործընթացներ, որոնք, բնականաբար, իրենց ուրույն ներգործությունն ունեն քաղաքական համակարգի կենսունակության և փոխակերպման վրա: Անվիճելի փաստ է, որ քաղաքական գործընթացների ծավալը և ընդգրկունությունը ընդլայնվում են հատկապես նախընտրական շրջանում: Այս պարագայում, բացի գործող իշխանական և ընդդիմադիր քաղաքական ուժերից, որոշակի կենսունակություն են սկսում ցուցաբերել նաև այնպիսի ուժեր, որոնք մինչ այդ գտնվում էին խորը քաղաքական քնում: Սա վկայում է այն մասին, որ նախընտրական շրջանը պատեհ և նպաստավոր առիթ է քաղաքական պայքարին անդամագրվելու և որոշակի ճանաչում և քարոզչություն իրականացնելու համար: Բնականաբար, որպես այս պայքարը պայմանավորող գործոն և մեծապես որպես դրա միջնորդ և գործիք՝ առաջնային պլան է մղվում քաղաքական խոսույթը:

Մերօրյա իրականությունը, լինելով հարուստ քաղաքական իրադարձություններով և զարգացումներով, հետաքրքիր օբյեկտ է դառնում խոսութային վերլուծության համար, ինչը հնարավորություն է տալիս բացահայտել և վերհանել ինչպես առանձին քաղաքական զարգացումների, այնպես էլ ամբողջական քաղաքական մշակույթի առանձնահատկությունները: Հանդիսանալով հետազոտության մեթոդ՝ քաղաքական խոսույթը, դիտարկվելով զանազան տեղեկատվական հոսքերի շրջանակներում, դառնում է ինչպես քաղաքական իրականության հիմք, այնպես էլ նրա արդյունք: Սա նշանակում է, որ քաղաքական խոսույթը ձևավորում է քաղաքական մշակույթ և միևնույն ժամանակ հանդիսանում է նրա հայելին: Այս հայեցակարգը հնարավորություն է տալիս գնահատել ցանկացած տեսակի քաղաքական գործընթաց, տեղեկատվական հոսքերի միջնորդությամբ ձևավորել քաղաքական գիտակցություն, ներագդել քաղաքա-

կան վարքագծի և մասնակցության վրա՝ պայմանավորելով նույնիսկ ընտրությունների արդյունքները:

Մեր կողմից կատարված հետազոտությունները օբյեկտիվորեն ցույց են տվել 1991-2012թթ. Հայաստանում տեղի ունեցած քաղաքական գործընթացների, մասնավորապես՝ ընտրական գործընթացների իրական պատկերը՝ հինավորելով մեր երկրում կոնֆլիկտային խոսույթի գերակայությունը համաձայնության խոսույթի նկատմամբ, ինչը, ցավալիորեն, ունեցել է խիստ դրսևորումներ:⁴³ Այդ հետազոտությունը վկայում է, որ Հայաստանում քաղաքական մշակույթը կրել է անկազմակերպ և քաղաքական խոսույթի տեսանկյունից կոնֆլիկտային բնույթ՝ ունենալով ուժային դրսևորումներ: Սակայն այս երևույթը չի կարելի համարել արհեստածին, քանի որ հետխորհրդային շրջանում ստեղծված քաղաքական իրավիճակը դարձել էր քաղաքական ուժերի և առաջնորդների կոպիտ և անզիջում պայքարի թատերաբեմ: Այս համատեքստում ՀՀ առաջին և երկրորդ նախագահների օրոք քաղաքական հակադիր ուժերի՝ իշխանության և ընդդիմության միջև գործել են կոնֆլիկտի արժեքային, ինքնանույնականացման և սոցիալ-տնտեսական ձևերը:⁴⁴

Այսօր քաղաքական մշակույթի ձևավորման և զարգացման դինամիկան ցույց տալու համար անհրաժեշտ է նաև քաղաքական խոսույթի համատեքստում վերլուծել ՀՀ երրորդ նախագահ Ս. Սարգսյանի օրոք տեղի ունեցող քաղաքական գործընթացները՝ մասնավորապես իշխանություն-ընդդիմություն փոխհարաբերությունների տեսանկյունից:

Հետազոտության շրջանակներում իրականցված երկարատև դիտարկման արդյունքում բացահայտվում են սույն ժամանակահատվածում տեղի ունեցած քաղաքական գործընթացների էությունը և առանձնահատկությունները: Այսպես՝ 2008թ.-ից մինչև այսօր մեր երկրում քաղաքական իրադարձությունները զարգացել են ավելի

⁴³ *Օրդուխանյան Է.* Իշխանություն և ընդդիմություն. քաղաքական խոսույթի վերլուծություն, «Լիմուշ» հրատ., Երևան 2010, 228 էջ:

⁴⁴ *Նույն տեղում*, էջ 221:

հանդուրժողական մթնոլորտում: Իշխանության հետ ընդդիմության կողմից մղվող պայքարում չեն նկատվել խիստ կոնֆլիկտային դրսևորումներ: Իշխանության կողմից նույնիսկ փորձեր են արվել ընդդիմության հետ համագործակցության որոշակի եզրեր որոնելու և վաղուց ձևավորված խիստ հակամարտությունը մեղմացնելու համար: Չնայած այդ քայլերին՝ այնուամենայնիվ, արտախորհրդարանական ընդդիմության հետ որևէ հարցի շուրջ որևէ էական համաձայնություն ձեռք չի բերվել: Միայն որպես ազատականության, որպես մարդու իրավունքների պաշտպանության դրսևորում և քաղաքական դաշտի լարվածությունը մասամբ թուլացնելու ձգտում՝ արտաքին ուժերի հետևողական միջնորդության արդյունքում կալանքից ազատ են արձակվել 2008թ.-ի մարտյան դեպքերի ժամանակ ձերբակալված ընդդիմադիր գործիչները: Հատկանշական է նաև այն փաստը, որ 2008թ. նախագահական ընտրություններից հետո տեղի ունեցած 2009թ. Երևանի ավազանու ընտրություններում արտախորհրդարանական ընդդիմությունը՝ ի դեմս ՀԱԿ-ի, հրաժարվեց ստացած բոլոր մանդատներից՝ մեծամասնություն չձևավորելու պատճառաբանությամբ: Այսինքն՝ այսպիսի ընդդիմության հավակնություններն ավելի մեծ էին, քան որևէ ներկայացուցչական մարմնում ուղղակի որոշակի ներկայություն ապահովելը: Այսպիսով՝ իշխանության և ընդդիմության միջև հերթական անգամ երկխոսության եզրերի որոնման և ձեռքբերման ձախողումը հասարակությանը կարծես թե ավելի հիասթափեցրեց և հեռացրեց քաղաքականությունից: Այս ամենը վկայում է այն մասին, որ մեր երկրում, չնայած այն բանին, որ իշխանության և ընդդիմության միջև քաղաքական խոսույթում նկատվեց որոշակի ապակոնֆլիկտացման միտում, հասարակությունը դեռևս շատ հեռու է քաղաքական խոսույթի ինքնուրույն սուբյեկտ դառնալու իրողությունից, ինչը կրկին փաստում է Հայաստանում թերի քաղաքական մշակույթի առկայության մասին:

Այսպիսով՝ ՀՀ երրորդ նախագահ Ս. Սարգսյանի օրոք իշխանության և ընդդիմության միջև տեղի ունեցող քաղաքական գործընթացներում նկատվում է կոնֆլիկտային իրավիճակի զգալի մեղմացում,

քաղաքական ուժերի ինքնանույնականացման խնդրում որոշակի դրական տեղաշարժ, սակայն ինչ վերաբերում է սոցիալ-տնտեսական ոլորտին, ապա այս տիրույթում նկատվում է խնդիրների որոշակի աճ: Հասարակության շրջանում ներքաղաքական իրադարձությունների նկատմամբ ակտիվության հարաբերական անկումը, պայմանավորված սոցիալ-տնտեսական խնդիրներով, մասնավորապես՝ շարունակական գնաճով, նոր տեխնոլոգիաների և ավտոմատացման համակարգերի ներդրման արդյունքում գործազրկության աճով, ինչպես նաև արտագաղթի բարձր տեմպերով, դրա ապացույցն են:

Հասարակական-քաղաքական ոլորտում տեղի ունեցող գործընթացների կարգավորման համար կարևոր դերակատարություն ունեն նաև հանրության շահերը, իրավունքները ներկայացնող և պաշտպանող միավորումները և կազմակերպությունները: Այլ բան է, երբ դրանք կազմավորվում են հասարակությունից, այսինքն՝ ունեն ոչ կառավարական կազմակերպության կարգավիճակ, որոնց հիմնական գործառույթը հասարակության տարբեր սոցիալական խմբերի շահերի պաշպանությունն ու նրանց գործունեության համար անհրաժեշտ միջոցների և պայմանների ստեղծումն է: Այդ պարագայում նրանց կողմից իրականացվող քաղաքականությունը տարբերվում է պետական պաշտոնական քաղաքականությունից: Իսկ ինչ վերաբերում է միևնույն նպատակին ուղղված, սակայն արդեն պետական քաղաքականությանը, ապա այս դեպքում հանրության ուշադրությունը սևեռվում է պետության կողմից կամ նրա նախածեռնությամբ ստեղծված ինստիտուտների վրա, որոնք ևս օժտված են հանրության շահերը, իրավունքները ներկայացնելու և պաշտպանելու գործառույթներով: Խոսքը վերաբերում է Մարդու իրավունքների պաշտպանի և Հանրային խորհրդի ինստիտուտներին, որոնց գործունեությունն ուղղված է վերը նշված նպատակների իրականացմանը: Այս ինստիտուտները ևս քաղաքական մշակույթի կարևոր տարրեր են, որոնց գործունեության վերլուծության արդյունքում կարելի է կարծիք կազմել Հայաստանում քաղաքական մշակույթի մասին, քանի որ նրանք ևս հանդիսանում են իշխանություն-

ընդդիմություն-հասարակություն քաղաքական խոսույթը միջնորդավորող օղակներ:

Հայաստանում Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքն ընդունվել է 2003թ.ին, սակայն ուժի մեջ է մտել 2004թ.-ի հուլիսի 1-ից⁴⁵, իսկ 2005թ. Սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի արդյունքում այն ամրագրվել է նաև ՀՀ Սահմանադրության⁴⁶ մեջ: Սույն օրենքում հստակ սահմանված են օմբուդսմենի լիազորությունները և նրա գործունեության շրջանակները: Օմբուդսմենի նպատակներում կարևորվում են պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց կողմից մարդու խախտված իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունը և վերականգնումը, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պետական պաշտպանության երաշխիքների ստեղծումը և այլն: Իսկ նրա առջև դրված խնդիրների շարքում առաջնահերթ են համարվում երկրում մարդու իրավական և իրավաբանական պաշտպանվածության աստիճանի բարձրացումը, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների օրենսդրական ապահովման կատարելագործմանը և միջազգային իրավունքի համընդհանուր սկզբունքներին և նորմերին ՀՀ օրենսդրության ներդաշնակեցմանը նպաստելը, Պաշտպան-իշխանություն և Պաշտպան-հասարակություն կառուցողական համագործակցության նախաձեռնումը և այդ համագործակցության զարգացմանը նպաստելը, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության հնարավորություններն ու մատչելիությունը ապահովելը:⁴⁷

Այս ինստիտուտի առկայությունն արդեն կարևոր հանգամանք է Հայաստանում ժողովրդավարական արժեքների զարգացման համար, ինչը խոսում է քաղաքական մշակույթի բարելավման մասին:

⁴⁵ ՀՀ օրենքը «Մարդու իրավունքների պաշտպանի մասին», <http://www.ombuds.am/>.

⁴⁶ ՀՀ Սահմանադրություն, 2005թ. նոյեմբերի 27:

⁴⁷ <http://armeniandb.com/>, Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպան:

Սակայն հարկ է նշել, որ օմբուդսմենի ինստիտուտը, ունենալով վերոհիշյալ նպատակները և խնդիրները, չի կարողանում ամբողջ ծավալով իրականացնել իր առջև դրված խնդիրների լուծումը: Ի սկզբանե կոչված լինելով պայքարել պետական մարմինների և պաշտոնյաների կողմից մարդու իրավունքների խախտումների դեմ՝ այս ինստիտուտը բախվում է բազմաթիվ խոչընդոտների, քանի որ չի կարողանում լիարժեքորեն և հավասար դիրքերից պայքարել պետական ապարատի դեմ: Ցանկացած խնդրի շուրջ բախվելով իշխանական օղակների հետ՝ մարդու իրավունքների պաշտպանը ստիպված է լինում, թեկուզ և ոչ բացահայտ, նահանջել: Այս ամենը վկայում է այն մասին, որ պետական օղակների կողմից մարդկանց իրավունքների խախտումների դեմ պայքարը դեռևս լիարժեք արդյունքներ չի կարող տալ: Պետական մարմինները դեռևս պատշաճ լրջությամբ չեն վերաբերվում այս ինստիտուտին, ինչի արդյունքում տուժում է ոչ միայն օմբուդսմենի հեղինակությունը, այլև արդարացի լուծում չեն ստանում առկա խնդիրները, և չեն վերականգնվում մարդկանց խախտված իրավունքները: Այս երևույթը ևս վկայում է Հայաստանում քաղաքական մշակույթի ցածր մակարդակի մասին:

Հայաստանյան քաղաքական մշակույթում նոր երևույթ է պետության կողմից նախաձեռնված Հանրային խորհուրդը, որը ստեղծվեց 2008 թվականի հուլիսի 12-ին: 2009 թվականի մարտի 11-ին հաստատվեց Հանրային խորհրդի կանոնադրությունը և առաջին 12 անդամների կազմը: Այնուհետև ձևավորվեցին 12 ոլորտային հանձնաժողովները /հանձնաժողովներում ընդգրկված անդամների թիվը՝ 1940/, ընտրվեցին հանձնաժողովների նախագահներ: 2009 թվականի մայիսի 29-ին ՀՀ Հանրային խորհուրդը ստացավ իր վերջնական տեսքը, ինչն ամրագրվեց ՀՀ Նախագահի հրամանագրով: Հանրային խորհրդի շրջանակներում սկսեցին գործել 66 ենթահանձնաժողովներ, որոշակի հարցեր քննարկելու համար՝ աշխատանքային խմբեր:⁴⁸

⁴⁸ Հանրային խորհուրդ, <http://www.publiccouncil.am/hy/history/> .

Ի տարբերություն օմբուդսմենի ինստիտուտի՝ այս ինստիտուտն ունի խորհրդատվական մարմնի կարգավիճակ, որտեղ կարևորվում է երկրի ներքաղաքական համերաշխությունը և քաղաքացիական հասարակության ձևավորումը՝ հաշվի առնելով ժողովրդի տարբեր շերտերի ցանկությունները:

Կարևորելով Հանրային խորհրդի դերը երկրի հանրային կյանքում՝ որոշակի փոփոխություններ կատարվեցին ՀՀ Ազգային ժողովի և Կառավարության կանոնակարգերում՝ հնարավորություն տալով Հանրային խորհրդին մասնակցել այդ մարմինների աշխատանքներին և ներկայացնել իր դիրքորոշումը:

Այս նոր ինստիտուտի առջև դրվեցին հետևյալ նպատակները՝ ՀՀ քաղաքացիների, հասարակական միավորումների շահերի ներկայացումը պետական քաղաքականության մշակման և իրականացման գործում, պետական և հասարակական կյանքի տարբեր ոլորտներում ծառայած խնդիրների վերհանումը, քննարկումը, առաջարկությունների ներկայացումը թե՛ պետական մարմիններին և թե՛ հասարակությանը, քաղաքացիական հասարակության կայացմանը նպաստող ավանդույթների ձևավորումը, ՀՀ քաղաքացիների, հասարակական միավորումների օրինական շահերի, իրավունքների ու ազատությունների պաշտպանությանն ուղղված քաղաքացիական նախաձեռնությունների իրականացման աջակցումը: Այսպիսով՝ կարելի է պնդել, որը այս մարմինը կոչված է ստանձնել միջնորդի դերը իշխանություն-հասարակություն փոխհարաբերություններում:

Հանրային խորհրդի լիազորությունները նրան թույլ են տալիս իրականացնել ՀՀ օրենքների և այլ նորմատիվ ակտերի փորձաքննություններ, հանրային հնչեղություն ունեցող խնդիրների, օրենքների և որոշումների վերաբերյալ անցկացնել խորհրդակցություններ և լսումներ՝ ներգրավելով քաղաքացիներին, հասարակական միավորումների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներին:⁴⁹

⁴⁹ Հանրային խորհուրդ, <http://www.publiccouncil.am/hy/purpose/>.

Երեք տարիների գործունեության ընթացքում այս ինստիտուտը ևս չի կարողանում ապահովել իր գործառնությունների իրականացումը և շատ հաճախ ձեռնպահ է մնում հասարակական հնչեղություն ունեցող խնդիրներում ներգրավվելուց: Այսպիսի ոչ արդյունավետ գործունեության համար կարելի է առանձնացնել երկու պատճառ. առաջին՝ այս ինստիտուտի մասին օրենքով ամրագրված ազդեցության լծակների բացակայությունը, որը զրկում է վերջինիս օրենքի ուժով իր նպատակների համար պայքարելու հնարավորությունից և երկրորդ՝ լինելով պետական նախաձեռնությամբ ստեղծված մարմին՝ այն որոշակիորեն կաշկանդված է իշխանության դեմ իր իրավասությունների շրջանակներում պայքարելուց: Այս պարագայում, թերևս, Հանրային խորհրդի աշխատանքը չի կարելի համարել արդյունավետ: 2011թ. ամփոփիչ նիստում Հանրային խորհրդի նախագահ Վ. Մանուկյանը նշեց, որ հայ հասարակությունը հեռու է քաղաքացիական հասարակություն կոչվելուց:⁵⁰ Հետևաբար՝ դեռևս չձևավորված քաղաքացիական հասարակության համար իր պատասխանատվության որոշակի չափաբաժինն ունի նաև Հանրային խորհուրդը:

Ամփոփելով վերոհիշյալ նյութը՝ կարելի է պնդել, որ Հայաստանում պետական նախաձեռնությամբ ստեղծված հանրության շահերը և իրավունքները ներկայացնող, պաշտպանող կառույցները արդյունավետ չեն գործում, քանի որ նրանք հիմնականում կաշկանդված են իշխանության դեմ որևէ խնդրի շուրջ բացահայտ պայքար մղելուց և նրա կամքին, տեսակետին հակադրվելուց: Իսկ նման հասարակական-քաղաքական իրավիճակը վկայում է ժողովրդավարացման ուղին որդեգրած մեր երկրում դեռևս որոշակի իշխանավախության և ավտորիտար տարրերի առկայության մասին: Հիմնականում միայն հասարակական /ոչ կառավարական/ կազմակերպություններն են, որ կարողանում են պայքարել պետական մարմինների կողմից խախտվող մարդու իրավունքների և ազատությունների պաշտպա-

⁵⁰ *Առավոտ օրաթերթ*, 28 փետրվարի 2012թ.
<http://www.aravot.am/2012/02/28/42920/>

նության համար, այսինքն՝ այսօր քաղաքացիական հասարակության ձևավորման իրական դերակատարները, բացառապես, շարունակում են մնալ հասարակական կազմակերպությունները: Այս հանգամանքը ևս ցածր քաղաքական մշակույթի ապացույցն է, որի հաղթահարման համար անհրաժեշտ է բարձրացնել մարդկանց քաղաքական գիտակցությունը և քաղաքական սոցիալականցման մակարդակը, ինչը հնարավոր է իրագործել միայն քաղաքական խոսույթի միջոցով համապատասխան գիտելիքների ուսուցանմամբ:

Այսօր իշխանություն-ընդդիմություն-հասարակություն եռակողմ քաղաքական խոսույթի բացակայությունը հնարավորություն չի տալիս ձևավորել կայուն քաղաքական մշակույթ, ինչը պետության թե՛ ներքին, թե՛ արտաքին քաղաքականության արդյունավետության և կայունության հիմքն է: Այսօր հայ հասարակությունը կարծես թե զրկված է քաղաքական գործընթացներում և որոշումներում ստույգ դիրքորոշում հայտնելու հնարավորությունից: Նա կորցրել է պետական քաղաքական մարմինների հանդեպ հավատը և հիմնականում մասնակցում է քաղաքական գործընթացներին՝ առանց հստակ ձևավորված քաղաքական գաղափարախոսական դիրքորոշման, ինչը վկայում է վերջինիս մոտ ցածր քաղաքական գիտակցության և սոցիալականացման ցածր մակարդակի մասին:

Քաղաքական մշակույթը մեծապես հիմնվում է նաև ազգային ավանդույթների, պատմական հիշողության, ազգային վարքագծի և այլ կարևոր գործոնների վրա: Դարեր շարունակ զրկված լինելով պետականությունից և գտնվելով օտար տերությունների տիրապետության տակ՝ հայ ազգը օբյեկտիվորեն զրկված է եղել սեփական քաղաքական մշակույթը ստեղծելու հնարավորությունից: Ներկայումս տիրող քաղաքական իրավիճակը ինչպես կարծրատիպային մտածողության, այնպես էլ վերոհիշյալ սնանկության արդյունքն է: Սակայն դա չի նշանակում, որ մեր հասարակությունը ունակ չէ ձևավորել կայուն, ինքնատիպ քաղաքական մշակույթ, քանի որ նույնիսկ պետականության բացակայության պայմաններում տեսական դաշտում չի դադարել զարգանալ հայ հասարակական-քաղաքական միտքը շնորհիվ՝ Շ. Շահամիրյանի, Մ. Բաղրամյանի և

այլոց ուսմունքների: Այժմ հնարավորություն է ստեղծվել գործնական դաշտ ներմուծել տեսական արժեքները, քանի որ այսօր մենք ունենք անկախ պետություն: Քաղաքական մշակույթն ուղիղ համեմատական է հասարակության քաղաքական գիտակցության մակարդակին, որը բարձրացնել հնարավոր է եռակողմ քաղաքական խոսույթի ձևավորման պարագայում: Մինչև իշխանական և ընդդիմադիր ուժերը չգործեն հօգուտ հասարակության և չհաղորդակցվեն հասարակական և պետական շահերի հետ, քաղաքական կայուն մշակույթի կառուցումը կմնա խրթին և խիստ երկարատև գործընթաց:

Քաղաքական ապակառուցողական գործընթացները կանխելու, իշխանություն-ընդդիմություն հակամարտությունը կարգավորելու, հասարակությանը քաղաքական իշխանության ձևավորման լիիրավ սուբյեկտի դերը վերադարձնելու համար այսօր պետք է դեմքով շրջվել դեպի հայրենական քաղաքական գիտությունը, քանի որ այն կոչված է մասնագիտորեն վերլուծելու քաղաքական իրականությունը և այդպիսով իսկ գաղափարական, ռազմավարական և մարտավարական հիմք ծառայելու իշխանության համար թե՛ ներքին, թե՛ արտաքին քաղաքականության տեսանկյունից: Այս հանգամանքը ևս քաղաքական մշակույթի բաղադրատարրերից է: Քաղաքական գիտակցությունը ինչպես զարգացած քաղաքական մշակույթ ունեցող երկրներում, այնպես էլ Հայաստանում պետք է կարևորվի և ընդունվի պետական իշխանության կողմից: Քաղաքական իշխանության և քաղաքական գիտության միջև փոխգործակցության բացակայությունը ևս հայաստանյան քաղաքական մշակույթի առանձնահատկություններից է, որը ոչ թե դրական, այլ բացասական երևույթ է քաղաքական կյանքում:

Վերջին ժամանակաշրջանում հայաստանյան քաղաքական մշակույթում կարելի է նկատել մեկ այլ առանձնահատուկ երևույթ ևս: Խոսքը վերաբերում է ոչ թե խորհրդարանական և արտախորհրդարանական ընդդիմությանը, այլ, այսպես կոչված, «ներիշխանական ընդդիմությանը», որը բացառապես նոր երևույթ է մեր քաղաքական համակարգում: 2012թ.-ին կայանալիք խորհրդարանական ընտրությունների նախաշեմին նկատվեց իշխանական երկու կուսակցու-

թյունների՝ ՀՀԿ-ի և ԲՀԿ-ի միջև պայքար, որը ստացավ լայն հասարակական արձագանք՝ ավելացնելով ներքաղաքական լարվածությունը հենց իշխանական դաշտում: Միջկուսակցական տեղաշարժերը, ուժերի վերադասավորումը, ինչպես նաև այսպես կոչված «կուսակցական միգրացիան» կալիցիոն կուսակցությունների շրջանում դարձել էին անվիճելի իրողություն: Խորհրդարանական կալիցիայի խարխուլումը նախընտրական շրջանում ևս մեկ անգամ բացահայտեց հայաստանյան քաղաքական ուժերի անձնավորված բնույթը: Մամուլում շրջանառվող իշխանական ուժերի միջև արտահոսքը և ներհոսքը⁵¹ վկայում էր այն մասին, որ կուսակիցները և հետևորդները առաջնորդվում էին ոչ թե զաղափարախոսական մղումներով, այլ բացառապես անձերի հեղինակության, ուժի և ընտրությունների արդյունքների վրա նրանց հավանական ազդեցության գործոններով: Դա նշանակում է, որ խորհրդարանական ընտրություններից առաջ որոշ կուսակցություններ, վերլուծելով առաջիկա քաղաքական զարգացումները, արդյունքում անցնում էին հավանական լիդերի կողմը՝ այդպիսով իսկ փորձելով կանխավ ապահովել իրենց հավանական ներկայությունը հաջորդ գումարման Ազգային ժողովում: Կուսակցության նոսրացող շարքերը համալրելու և նրա վարկանիշը բարձրացնելու համար այս պարագայում քաղաքական ուժի ղեկավար մարմնին մնում էր միայն կուսակցությունում ներգրավել հայտնի քաղաքական և պետական գործիչների, ինչպես նաև համագործակցել այլ քաղաքական ուժերի հետ: Այս մարտավարությանը դիմեց ԲՀԿ-ն խորհրդարանական ընտրություններից առաջ, ինչը ոչ միայն կանխորոշիչ էր խորհրդարանական ընտրությունների համար, այլև այն կարող է որոշակի հիմք պատրաստել 2013թ. նախագահական ընտրությունների համար: Այս երևույթը ևս հայաստանյան քաղաքական մշակույթի առանձնահատկություններից է, որի հիմքում դեռևս շարունակում է իր ուրույն տեղը պահպանել քաղաքական ուժերի անձնավորվածության գործոնը: Այսօր, ինչպես հասարակ քաղաքա-

⁵¹ 1. <http://www.hraparak.am/2012/01/23/artahosq-e-sk svel/>,
2. <http://haynews.am/hy/gagik-tsarukysan>.

ցիները, այնպես էլ քաղաքականությամբ զբաղվող անձինք դեռևս շարունակում են համախմբվել ոչ թե գաղափարների, այլ անձերի շուրջ:

Հայաստանյան քաղաքական մշակույթի առանձնահատկություններից է նաև իշխանության և բիզնեսի սերտաձուլը, որի արդյունքում սեփական նյութական շահերը պաշտպանելու նպատակով հաճախ քաղաքական դաշտ մուտք են գործում ոչ թե կոմպետենտ գործիչներ, այլ ուղղակի զուտ գործարարներ: Հայտնի ճշմարտություն է, որ ժողովրդավարության զարգացման, կայուն և գործունյա պետական ապարատի, ինչպես նաև արհեստավարժ օրինաստեղծ մարմնի ձևավորման համար անհրաժեշտ է առանձնացնել բիզնեսը իշխանության հետ նույնականացվելուց: Բնականաբար, իշխանության ճյուղերում, հատկապես՝ օրենսդիր մարմնում բիզնեսի առկայությունը և ազդեցությունը ոչ թե գործում են հօգուտ հասարակական-պետական, այլ մասնավոր շահի: Այս հանգամանքի անտեսումը բացասական ազդեցություն է թողնում նաև ազատ տնտեսական մրցակցության պայմանների ստեղծման վրա, քանի որ օրենսդիր մարմնում ներկայացված բիզնես շրջանակները օրենսդրական միջամտությամբ նպաստավոր պայմաններ են ստեղծում ոչ թե համընդհանուր տնտեսական ոլորտի, այլ մասնավոր գործարար շահերի պաշտպանության և պայմանների բարելավման համար: Նմանատիպ գործելաոճը հետզհետե հանգեցնում է ոչ բացահայտ մենաշնորհային պայմանների առաջացմանը, որից առավելապես օգտվում են իշխանական մարմիններում ընդգրկված անձինք: Արդյունքում, հավասար տնտեսական մրցակցության պայմանների ձևավորման քաղաքականությունը դառնում է ուղղակիորեն անհնար:

Այն երկրները, որոնք արդեն գիտակցել են բիզնեսի և իշխանության սերտաձման վտանգը պետական-ազգային շահի, հասարակական բարեկեցության, սոցիալական արդարության ապահովման հարցում, կառուցել են կուռ և արդյունավետ պետական համակարգ, կոնսոլիդացված հասարակություն և հեռանկարային տնտեսություն: Հայաստանը ևս պետք է գիտակցի բիզնես-իշխանություն սերտաձման անթույլատրելիությունը, քանի որ հետզհետե ձևավորվող

մենաշնորհային համակարգը լուրջ ճնշում է գործադրում հասարակության սոցիալական պահանջների բավարարման վրա:

Ոչ ակնհայտ մենաշնորհը պարենային ապրանքների, ծառայությունների բնագավառում հանգեցնում է կանոնավոր գնաճի, իսկ իշխանությունը «չի կարողանում» այդ խնդրի կարգավորման համար ձեռնարկել արդյունավետ միջոցներ ինքնին բիզնեսում ներգրավվածության պատճառով: Միայն բիզնեսի և իշխանության փոխթափանցելիության սահմանազատման արդյուքում է հնարավոր կառուցել կայուն և արդյունավետ քաղաքական մշակույթ, որը մրցունակության գրավականն է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականության ոլորտներում:

Այսօր Հայաստանում տեղի ունեցող քաղաքական գործընթացներում կարելի է նկատել նաև որոշ դրական փոփոխություններ, որոնք քաղաքական մշակույթի ձևավորման և կայացման գործում ունեն հեռանկարային բնույթ:

Կարևոր է արձանագրել, որ այսօր քաղաքական ուժերի խոսույթում նկատվում է կոնֆլիկտային տարրերի դրսևորման խիստ նվազում, ինչն առողջացնում է քաղաքական պայքար և հիմքեր է ստեղծում ներքաղաքական կայունության ձեռքբերման և ամրապնդման համար: Որպես այս երևույթի դրսևորում՝ կարելի է նշել արմատական ընդդիմության՝ ՀԱԿ-ի մուտքը խորհրդարան, ինչպես նաև առանձնացնել քաղաքական ուժերի ինքնանույնականացման գործընթացի սկզբնավորումը: Մասնավորապես՝ ԲՀ-ն այսօր փորձում է ազատվել նախկին կոալիցիոն «շղարշից» և ձգտում է քաղաքական ինքնուրույնության ձեռքբերման՝ հավակնելով դառնալ իշխանության համար իրական հակակշիռ և այլընտրանք նախագահական ընտրություններից առաջ: Վերջին ԱԺ ընտրություններից հետո ԲՀ-ի՝ իշխանական կոալիցիայի կազմ չմտնելը կարող է ասվածի ապացույցը դառնալ: Քաղաքական դաշտում տեղի ունեցող այսպիսի փոփոխությունները կարող են էապես ազդել քաղաքական ուժերի հավասարակշռության վրա և, ինչպես բազմիցս նշել է հայ

քաղաքագետ Լևոն Շիրինյանը⁵², հանգեցնել երկկուսակցական քաղաքական համակարգի ձևավորման: Այս պարագայում հնարավոր կլինի հայաստանյան քաղաքական մշակույթում նկատել քաղաքագիտության օրենքներից մեկի՝ Մ. Դյուվերժեի օրենքի գործածությունը, ըստ որի՝ եթե ընտրությունների արդյունքում որևէ քաղաքական ուժ ստանում է ընդհանուր ձայների մեծամասնությունը, ապա ձևավորվում է երկկուսակցական քաղաքական համակարգ,⁵³ ինչը Հայաստանում (չնայած այն բանին, որ խորհրդարանական ընտրություններում որևէ քաղաքական ուժ ստացել է քվեների մեծամասնությունը) միշտ հանգել է կոալիցիոն կառավարության ձևավորման:

⁵² Շիրինյան Լ. <http://www.aysor.am/am/news/2012/05/12/levon-shirinyan/?sw>.

⁵³ Դյուվերժե Մ. <http://ru.wikipedia.org/> Закон Дюверже.

ԳԼՈՒԽ 3.
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ

3.1. Քաղաքական մշակույթի առանձնահատկությունները
տեղեկատվական հասարակությունում

Նորագույն տեղեկատվական-հեռադրոդակցական տեխնոլոգիաները, ակտիվորեն ներդրվելով քաղաքականության ոլորտում, փոխում են հին պատկերացումները, չափանիշները, կարծրատիպերը, քաղաքական վարքագծի, քաղաքական մասնակցության ձևերը, իշխանության և հասարակության, քաղաքական ինստիտուտների և անհատների միջև փոխհարաբերությունների նախկին մոդելները: Նորովի են իմաստավորվում քաղաքական հաղորդակցության և քաղաքական տեղեկատվական տարածության հասկացությունները: Պետական կառավարման ամբողջ համակարգը ենթարկվում է գլոբալ փոխակերպումների, որի վկայությունը վերջին տարիներին Հայաստանում էլեկտրոնային կառավարման և էլեկտրոնային ժողովրդավարության հիմնախնդիրների աշխույժ քննարկումն ու աստիճանաբար (հիմնականում դանդաղ) ներդրումն է գործնական կյանքում: Այս և նմանատիպ տեղեկատվական համակարգերի ներդրումը քաղաքականության ոլորտում ենթադրում է արմատապես նոր գաղափարախոսության և որակապես նոր քաղաքական մշակույթի ներթափանցում մեր քաղաքական կյանք:

Տեղեկատվական հասարակության առաջին տեսաբաններն առանձնահատուկ ուշադրություն էին դարձնում քաղաքական հարաբերություններում ակնկալվող փոփոխություններին: Ըստ Թոֆլերի՝ քաղաքականության ոլորտում արմատական փոփոխությունները պայմանավորված են իշխանության երեք հիմնական ռեսուրսների՝ *ուժի, հարստության և գիտելիքի* փոխարկելիությամբ: Պատմաքաղաքակրթական զարգացման երեք ալիքներից յուրաքանչյուրում՝ ագրարային, արդյունաբերական, տեղեկատվական, այդ հիմնային ռեսուրսները միաժամանակ կարևոր դեր էին խաղում: Սակայն

տարբեր փուլերում դրանց ծավալներն ու ազդեցության ոլորտները եղել են տարբեր: Առաջին՝ ագրարային ալիքի ժամանակաշրջանում, մարդկային քաղաքակրթության արշալույսին, իշխանության գլխավոր ռեսուրսը ֆիզիկական ուժն էր, որը միաժամանակ նաև իշխանության ձևավորման աղբյուրն ու պաշտպանության միջոցն էր: Քաղաքական մարդաբանության տվյալները մեզ տալիս են բավականին հարուստ նյութ, որով հիմնավորվում է այս եզրակացությունը: Տոհմատիրական հասարակություններում առաջին առաջնորդները կարողացան իշխանություն ձեռք բերել և այն պահպանել բացառապես ֆիզիկական ուժի շնորհիվ: Ժամանակի ընթացքում ֆիզիկական ուժը սկսեց լրացվել իշխանության այլ աղբյուրներով, ինչով էլ պայմավորված էր քաղաքական մշակույթը: Քաղաքակրթական երկրորդ՝ արդյունաբերական ալիքի ժամանակ, ֆիզիկական ուժը շարունակում էր պահպանել իր կարևոր նշանակությունը: Սակայն այն արդեն սկսեց զիջել առաջատարի դիրքերը հարստությանը և նոր ձևավորվող իրավունքին, որն արդյունաբերական հասարակություններում ռացիոնալ կերպով արդարացնում էր օրենքի միջոցով քաղաքական բռնության կիրառումը: Քաղաքակրթական երրորդ՝ տեղեկատվական ալիքում իշխանության գերակա ռեսուրս է դառնում գիտելիքը, որին քաղաքական բռնությունը և կապիտալը զիջում են իրենց առաջնայնությունը: Ըստ Թոֆլերի՝ այսօր, չնայած եկամուտների և բարիքների անարդարացի բաշխմանը՝ արագորեն փոփոխվող հարուստ երկրներում հանուն գերակայության գալիք պայքարը հետզհետե ավելի ու ավելի կվերածվի գիտելիքների բաշխման և դրանց հասու լինելու համար պայքարի: Մինչև մենք չհասկանանք՝ ինչպես կամ ում մոտ են լողում գիտելիքները, մենք չենք կարող պաշտպանվել իշխանության չարաշահումներից, ոչ էլ կարող ենք ստեղծել ավելի լավ, ժողովրդավարական հասարակություն, որը մեզ խոստանում են վաղվա օրվա տեխնոլոգիաները: Գիտելիքների նկատմամբ վերահսկողությունն է հանուն իշխանության ապագա համաշխարհային ճակատամարտի բուն էությունը մարդկության բոլոր

ինստիտուտներում:⁵⁴ Սա նշանակում է, որ յուրաքանչյուր հասարակական-տնտեսական ֆորմացիա ձևավորում է իրեն ներհատուկ քաղաքական մշակույթ:

Քաղաքականության սահմանումներից շատերը ավանդաբար պտտվում են իշխանության՝ որպես «բռնություն կիրառելու մենաշնորհային իրավունքի» վրա հիմնված հասարակական գործընթացների հրապարակային կառավարման համակարգի վեբերյան ըմբռնման շուրջ: Համաձայն Մ. Վեբերի՝ քաղաքականությունը իշխանության մեջ մասնակցության ձգտումն է կամ իշխանության բաշխման վրա ազդելու հնարավորության ձեռք բերումը, լինի դա պետությունների միջև, պետության ներսում, մարդկանց խմբերի միջև, որոնք ընդգրկված են քաղաքական գործընթացներում:⁵⁵ Ակտիվորեն ներդրվելով քաղաքականության ոլորտում՝ տեղեկատվական-հաղորդակցական նոր տեխնոլոգիաները, ինտերնետ-տեխնոլոգիաները որակապես ձևափոխում են ոչ միայն հին պատկերացումները, սահմանված չափորոշիչները, կարծրատիպերը, այլև ստեղծում են քաղաքական ինստիտուտների, քաղաքացիական հասարակության և անհատների միջև փոխհարաբերությունների նոր մոդելներ, հետևաբար՝ նոր քաղաքական մշակույթ:

Ինտերնետի միջոցով քաղաքական մասնակցության նոր հնարավորությունները բավականին բազմազան են՝ տեղեկատվական-քաղաքական ակցիաներից, քարոզարշավներից մինչև իշխանական մարմիններում պաշտոնական քվեարկության կազմակերպում: Քաղաքական պրակտիկան համացանցում դինամիկ կերպով զարգանում է տեխնոլոգիաների զարգացմանը և կատարելագործմանը համընթաց, որոնք ընդլայնում են քաղաքականության սուբյեկտների փոխներգործության ծավալները և ձևերը վիրտուալ տարածությունում: Արդեն ավելի հաճախ են համացանցի միջոցով ծավալվող քաղաքական գործունեությունն առանձնացնում որպես նոր տարա-

⁵⁴ *Трифлер Э.* Метаморфозы власти. Знание, богатство и сила на пороге XXI века. Москва, ООО "АСТ", 2003, с. 66.

⁵⁵ *Вебер М.* Политика как призвание и как профессия. Москва, "Избранные произведения". "Аст.", 1990, с. 646.

կարգ՝ «ցանցային քաղաքականություն»։ Այսպիսով՝ տեղեկատվական հասարակությունում քաղաքական հարաբերությունների և գործընթացների փոխակերպումների վերլուծությունը քաղաքական գիտությունների համար հրատապ խնդիր է տեղեկատվական հասարակության զարգացման ժամանակակից փուլում քաղաքացիների՝ ընդհանուր քաղաքական մշակույթի ձևավորման առումով։⁵⁶

Ցանցի օգտագործման քաղաքական հետևանքները հակասական են և ոչ միանշանակ։ Մի կողմից՝ համացանցը թույլ է տալիս.

- հաղթահարել աշխարհագրական և կառուցվածքային սահմանափակումները քաղաքական անմիջական մասնակցության համար,

- կազմակերպել կոլեկտիվ գործողություններ տեղական, տարածաշրջանային և գլոբալ մակարդակներում,

- վերացնել անջրպետը քաղաքացիների և որոշում կայացնող անձանց միջև,

- ընդլայնել քաղաքացիական հասարակության հորիզոնները,

- մասնակից դարձնել լայն զանգվածներին հասարակական և միջազգային զարգացման ու կառավարման համար կարևոր խնդիրների քննարկումներին,

- բարձրացնել մասնակցության քաղաքական մշակույթը։

Դրա հետ մեկտեղ հարկավոր է հաշվի առնել, որ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներն առօրյա կյանքում իրենց գործածության ոլորտների ընդլայնմանը զուգահեռ՝

- հասարակությունը դարձնում են ավելի խոցելի ուժեղացող քաղաքական վերահսկողության հանդեպ,

- նպաստում են քաղաքական տիրապետության գործիքակազմի հագեցմանն ու կատարելագործմանը,

- ստեղծում են ավտորիտար սոցիալականացման և անձի վրա մանիպուլյատիվ ներգործության նոր տեխնոլոգիաների առաջացման իրական հնարավորություն,

⁵⁶ *Սուփասյան Հ.* Տեղեկատվական հասարակություն. սոցիալ-քաղաքական հիմնախնդիրներ. Երևան, «Սարվարդ հրատ», 2009, էջ 90-91։

• ստեղծում են հասարակական և անհատական անվտանգության շահերի արտաքին նոր մարտահրավերներ և սպառնալիքներ:

Եվ, այնուամենայնիվ, չնայած գոյություն ունեցող ոչ միանշանակ և հակասական միտումներին՝ ծայրահեղ լավատեսությունից մինչև ծայրահեղ կասկածամտություն, ինտերնետի համընդհանուր ընկալումը՝ որպես սկզբունքորեն նոր հասարակարգի կազմավորման միջոց, որը հասարակության համար բացում է բազմաթիվ հեռանկարներ և արթնացնում ամենատարբեր ոլորտներում որակական ճեղքումներ կատարելու հույսեր, նախկինի պես լայնորեն տարածված է:

Նախ՝ ոչ ոք արդեն չի կասկածում, որ հաղթել իշխանության համար պայքարում՝ չօգտվելով էլեկտրոնային և տպագիր ՁԼՄ-ներից, անհնար է: Բազմաթիվ երկրներում ընտրական արշավների փորձը ցույց է տալիս, որ ընտրազանգվածի գիտակցության վրա ազդելու նոր, անհամեմատ ավելի արդյունավետ միջոցը «Ինտերնետն» է: Այս միջոցն ունի մի շարք առավելություններ, որոնցից գլխավորներն են՝ ցանկացած տեղեկատվության հրապարակման դյուրինությունը և գործնական ակնթարթայնությունը, ժամանակատարածական սահմանների բացակայությունը, իրավիճակի մոնիտորինգի նպատակով թեմատիկ որոնման և արագ կապի հնարավորությունը: Քաղաքականության մեջ Ինտերնետի միջոցով վիրտուալ տեղեկատվական բաղադրիչի տեսակարար կշիռը աճի կայուն միտում է դրսևորում: Ըստ ամենայնի՝ այս գործընթացը կշարունակվի նաև ապագայում. քաղաքական կուսակցությունների և շարժումների կայքերի քանակը կավելանա, Ինտերնետի տեղեկատվական դերակատարությունը կմեծանա: Բացառված չէ, որ իր ինտեգրողական բնույթի շնորհիվ վեբ-ցանցը մոտ ապագայում կվերածվի քաղաքական տեղեկատվության առաջատար աղբյուրի՝ երկրորդ պլան մղելով ավանդական ՁԼՄ-ներին:

Այս պնդման օգտին՝ որպես լրացուցիչ փաստարկ, նշենք, որ զանգվածային տեղեկատվության ավանդական միջոցները աշխատում են առավելապես տեղեկատվության մենախոսական ռեժիմով

(միակողմանի հաղորդակցություն), որի միջոցով համապատասխան կառույցները ներգործում են գիտակցության վրա և պահպանում վերահսկողությունը իշխանությանը ստորադաս սուբյեկտների նկատմամբ: Իսկ համակարգչային տեխնոլոգիաները հնարավորություններ ստեղծեցին բազմակողմանի հաղորդակցության համար: Ցանցին հասու յուրաքանչյուր մարդ կարող է դառնալ ինչպես տեղեկատվություն ընդունող, այնպես էլ՝ տեղեկատվություն թողարկող:

Բազմաթիվ խորաթափանց քաղաքական գործիչներ վաղուց արդեն ուշադրություն են դարձրել Ինտերնետում քաղաքական քարոզչության առավելությանը: Ցանցում տեքստերը և տեսաֆայլերը կարող են պահպանվել ամիսներով, նույնիսկ տարիներով, առավել ևս, որ նախընտրական քարոզարշավների ժամանակ ավանդական ՋԼՄ-ներում՝ գովազդային ծառայությունների թանկացման և ընդհանուր ֆինանսական վերահսկողության խստացման պայմաններում Ինտերնետը ձեռք է բերում բավականին շոշափելի առավելություններ:

Գլոբալ ցանցը հնարավորություն է տալիս իշխանության և քաղաքացիների միջև էլեկտրոնային փոխադարձ կապի շնորհիվ իրական ժամանակում ապահովել մշտական հասարակական-քաղաքական խոսույթ՝ ընձեռելով իշխանական կառույցների հիերարխիկ բուրգի հաղթահարման իրական հնարավորություն: Հետևաբար՝ քաղաքացիների կախվածությունը ինստիտուցիոնալ միջնորդներից, կուսակցական կազմակերպություններից և շահերի խմբերից տեսականորեն պետք է նվազի և փաստացի կարող է հասնել նվազագույնի:

Ինտերնետը կարող է նպաստել քաղաքական մասնակցության մակարդակի նվազման միտումների հաղթահարմանը, քանի որ պարզեցնում է քաղաքացու և կառավարության միջև ուղղակի շփումների հնարավորությունը: Ինտերնետը նվազեցում է քաղաքական գործունեության հնարավոր ուղիների համաձայնեցման ծախսերը համանման հայացքների տեր, սակայն իրական աշխարհում միմյանց հետ չհամագործակցող անհատների միջև: Այսօր վիրտուալ

քաղաքականությունը թեև կոխել է սկզբունքորեն նոր փուլ: Խոսքը վիրտուալ քաղաքական կառույցների ստեղծման մասին է: Ինտերնետը վաղուց արդեն օրակարգային է դարձրել ամենատարբեր քաղաքական կողմնորոշումների, հետաքրքրությունների տեր մարդկանց միավորման հարցը: Հայաստանում քաղաքական տեղեկատվության տարածումը ինտերնետի միջոցով աստիճանաբար արմատավորվում է հասարակության և քաղաքական ուժերի միջև փոխհարաբերություններում՝ այդպիսով դառնալով սկզբունքորեն նոր քաղաքական մշակույթի առանձնահատուկ տարր:

Ինտերնետը նկատելիորեն ընդլայնում է անհատների և հասարակական կազմակերպությունների քաղաքական գործունեության շառավիղը: Շնորհիվ օնլայն ռեժիմով հաղորդակցության և դրա ոչ բարձր գնի՝ կարելի է ձևավորել ամբողջ աշխարհին ընդգրկող վիրտուալ կոալիցիաներ, այսպես կոչված՝ «չտարբերակված հանրույթներ»: Դրանք կարող են միավորել համախոհներին և նրանց, ովքեր իրենց առջև դնում են միանման նպատակներ: Դրանց անդամները կարող են օգնել միմյանց՝ փոխանակելով տեղեկություններ, մշակելով կամ գործնականում իրականացնելով գործողությունների ռազմավարություն: «Համաշխարհային սարդոստայնի» օգտագործման շնորհիվ քաղաքական գործընթացի ցանկացած մասնակից գործնականում կարող է ուղարկել իր հաղորդագրությունները անսահմանափակ թվով պոտենցիալ հասցեատերերի: Արդյունքում ձևավորվում է մի իրավիճակ, որը ստիպում է վերաիմաստավորել անձի քաղաքական մասնակցության դերի և հնարավորությունների մասին հնացած պատկերացումները: Նման մասնակցությունը ընկալվում է որպես առանձին անձանց՝ քաղաքական որոշումների ձևակերպման և ընդունման գործընթացի վրա ազդելու նախաձեռնություն: Ինտերնետի կիրառմամբ ստեղծվում են այսպիսի մասնակցության աննախադեպ հնարավորություններ:

Տեղեկատվական տեխնոլոգիաները փոփոխում են ոչ միայն ժողովրդավարական ընթացակարգերի իրականացման ձևը, այլև դրանց ներդրմամբ փոխվում է նաև սոցիալական գործընթացների

զարգացման բուն էությունը, ինչպես նաև առաջանում են քաղաքական մշակույթի նոր տարրեր:

3.2. Ժողովրդավարությունը տեղեկատվական հասարակությունում

Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների արագ զարգացման հետևանքով՝ հասարակական-քաղաքական գիտություններում ծագեցին սուր բանավեճեր Ինտերնետի՝ ժողովրդավարական ինստիտուտների և գործընթացների վրա ազդեցության բնույթի շուրջ: Բանավեճերը հիմնականում տեղեկատվական հասարակությունում քաղաքացիական հասարակության և պետության միջև փոխհարաբերությունների փոխակերպման մեխանիզմների, ժողովրդավարության և հանրային ոլորտի, ուղղակի և ներկայացուցչական ժողովրդավարության վերաբերյալ են: Ժողովրդավարության տեսաբանների շրջանում հատուկ ուշադրության են արժանանում էլեկտրոնային ժողովրդավարության և էլեկտրոնային կառավարման խնդիրները: Ընդ որում՝ հեղինակներն առավելապես ուշադրությունը սևեռում են ժողովրդավարացման գործընթացների վրա տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցության այս կամ այն յուրահատկության վրա, որոնցից յուրաքանչյուրը տարբեր կերպ է բնորոշում այդ ազդեցությունը:

Հեղինակներից ոմանք, օրինակ, «Ինտերնետ և ժողովրդավարություն» հիմնախնդրի մեջ էականը համարում են անձի՝ կառավարության և քաղաքականության վրա ազդելու հնարավորությունը: Որքան ավելանում են քաղաքացիների՝ կառավարության հետ անմիջական, ուղղակի կապի հնարավորությունները, այնքան ավելի են նրանք ներգրավվում քաղաքականության մեջ, որը հասարակական կյանքի ժողովրդավարական փոխակերպման հիմնական չափանիշներից մեկն է: «Ինտերնետ և ժողովրդավարություն» հիմնախնդրի մյուս մոտեցումը հանգում է քաղաքական հաղորդակցությունների ձևերի և որակի փոփոխության շեշտադրմանը: Ֆիզիկական տարածության

սահմանափակումների վերացման շնորհիվ ցանցային հանրությանը նոր ձևերը ստեղծվում են ընդհանուր նպատակների շուրջ միավորված համախոհների կողմից, որի շնորհիվ շփումը ցանցային հանրությունում նպաստում է նրանց միջև ամուր կապերի ձևավորմանը: Այս հիմքի վրա առաջանում է ժողովրդավարական սպասումների բավականին լայն դաշտ՝ փոխըմբռնման մակարդակի բարձրացում, մյուս մարդկանց կարծիքի նկատմամբ ավելի մեծ հարգանքի դրսևորում, ռասայական կամ սեռային խտրականության վերացում, ընդհանուր արժեքների ստեղծում:

Ժողովրդավարության ամենախոշոր տեսաբաններից մեկը՝ Ռ. Դահլը, մանրամասնորեն դիտարկում է ուղղակի (մասնակցային) և ներկայացուցչական ժողովրդավարությունների փոխհարաբերությունների հարցը:⁵⁷

Դահլի գլխավոր միտքն այն է, որ ժողովրդավարությունը որպես այդպիսին, հնարավոր էր միայն Հին Աթենքում՝ իբրև մասնակցության ուղղակի ժողովրդավարություն: Սակայն փոքր համայնքների կամ քաղաքների՝ պոլիսների սահմաններից դուրս, տարածքների ընդլայնման հետևանքով մասնակցային ուղղակի ժողովրդավարությունը կորցրեց իր նշանակությունը՝ տեղը զիջելով ներկայացուցչական ժողովրդավարությանը: Սակայն վերջինս, թեպետ անխուսափելիորեն, սակայն ունի մի շարք թերություններ, ուստի և, համաձայն Ռ. Դահլի, աշխարհում ոչ մի երկիր սկզբունքորեն չի կարող համարվել իրապես (կամ կատարելապես) ժողովրդավարական: Դահլն առաջարկում է առհասարակ փոխարինել «ժողովրդավարությունը» «պոլիարխիա» եզրույթով, որպեսզի ցույց տա այս կամ այն հասարակության ժողովրդավարական լինելու ոչ թե որակը, այլ աստիճանը: Ժողովրդավարությունը Դահլի հայեցակարգում ներկայացվում է որպես իդեալ, որին պետք է ձգտեն բոլոր հասարակությունները, իսկ հասարակու-

⁵⁷ Դահլ Ռ. Ընդհանուր խմբագրությունը և ներածական հոդվածը՝ Գրիգորյան Հ., Գրիգորյան Գ: 20-րդ դարի հասարակական-քաղաքական մտքի դասականներ. Ժողովրդավարության սահմանները և հնարավորությունները: Երևան, «Ջանգալ - 97», 2006, էջ 41:

թյունների ժողովրդավարական լինելու աստիճանը հենց պոլիարխիայի աստիճանն է:

Իսկ մասնակցային ժողովրդավարության կողմնակիցների կարծիքով տեղեկատվական հասարակությունում ինտերնետ-հանրույթների նորագույն ձևերը բավականին շատ հիմքեր են ստեղծում ուղղակի (մասնակցային) ժողովրդավարության դասական ձևերի վերակենդանացման համար: Ներկայացուցչական ժողովրդավարությունում քաղաքական կյանքի վրա ազդեցության աստիճանը որոշվում է սոցիալական և ֆինանսական ռեսուրսները տնօրինելու չափով: Մասնակցային (ուղղակի) ինտերնետ-ժողովրդավարությունում քաղաքական որոշումների ընդունման գործընթացին մասնակցության հնարավորությունը կապամանավորվի զուտ անհատի անձնական շահագրգռվածության և իրազեկվածության աստիճանով, որից էլ կախված կլինի նրա՝ խորհրդարանի, կառավարության կամ առանձին քաղաքական գործիչների՝ համապատասխան կայքեր այցելելու հաճախականությունն ու որակը: Այս առումով առավելագույն հետաքրքրություն է առաջացնում էլեկտրոնային ժողովրդավարության (է-ժողովրդավարության) հիմնախնդիրը:⁵⁸

3.3. Էլեկտրոնային ժողովրդավարություն. առավելությունները և թերությունները

Այս եզրույթն առավել հաճախ սկսեցին գործածել նրանք, ովքեր քաղաքական գործընթացներում օգտագործում են համակարգչային տեխնոլոգիաներ: «Է-ժողովրդավարություն» նշանակում է, ամենից առաջ, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառում տարբեր, և, առաջին հերթին, իշխանության և հասարակության միջև ժողովրդավարական փոխգործակցության ինտերակտիվ ձևերում:

⁵⁸ Մուֆհայան Հ. Տեղեկատվական հասարակություն. սոցիալ-քաղաքական հիմնախնդիրներ. Երևան, «Սարվարդ հրատ», 2009, էջ 106-119:

«Է-ժողովրդավարությունը» կառավարման ձև է, որտեղ համակարգիչները և համակարգչային ցանցերը օգտագործվում են ժողովրդավարական գործընթացի կարևորագույն գործառույթների իրականացման համար: Այդ գործառույթների թվին են պատկանում քաղաքական տեղեկատվության և հաղորդակցության տարածումը, քաղաքացիների շահերի միավորումը և որոշումների ընդունումը (խորհրդակցության և քվեարկության եղանակով): Այս հայեցակարգերը շեշտը դնում են ժողովրդավարական կառավարման ուղղակի կամ ներկայացուցչական ձևերի օգտագործման հնարավորությունների և պետության մեջ քաղաքացիների ակտիվության բարձրացման վրա:

Ձանգվածային քաղաքական մասնակցության ապահովումը Ինտերնետի միջոցով ժողովրդավարական քաղաքականության բազմաթիվ առանցքային գործառույթներից մեկն է:

Ինտերնետը մեծ հնարավորություններ է ընձեռում ընդդիմադիր հայացքներ արտահայտելու և քաղաքական տարաբնույթ հարցերի վերաբերյալ բողոքական վարքի դրսևորման համար: Դա ակնհայտորեն դրսևորվում է Առևտրի Համաշխարհային Կազմակերպության, Արժույթի Միջազգային Հիմնադրամի, Համաշխարհային Բանկի համաժողովների ընթացքում: Այս առումով Ինտերնետը նոր արդյունավետ գործիք է, որն օժտված է միջազգային և գլոբալ ներուժով: Հաշվի առնելով առաջադրված խնդիրը և ցանցային ընդգրկման ծավալները՝ այս ներուժը հնարավորություն է ընձեռում, համաշխարհային հանրության և հնարավորինս շատ երկրների կառավարությունների վրա ճնշում բանեցնելով, արգելափակել կամ, ընդհակառակը, օգնել իրականացնելու այս կամ այն քաղաքականությունը: Ավտորիտար վարչակարգերի գործունեության պայմաններում իշխանության չարաշահման փորձերը և տարբեր բռնի գործողությունների սաստկացումը վայրկենապես արժանանում են միջազգային հանրության գնահատականին՝ շնորհիվ տեղեկատվության տարածման էլեկտրոնային միջոցների: Ասվածի վառ վկայությունը այսօր արաբական մի շարք երկրներում տեղի ունեցող իրադարձություններն են: Եվ սա վկայում է էլեկտրոնային ժողովրդավարության

հսկայական ներուժի մասին հակաժողովրդավարական և բռնիչխան վարչակարգերի դեմ զսպման և միջազգային ճնշման գործընթացներ ծավալելու հարցում: Անշուշտ, այս գործընթացը դեռ նոր է սկզբնավորվել, սակայն արդեն իսկ տեսանելի են դրա հսկայական հեռանկարներն ապագայում:

Ինտերնետի ստեղծումից հետո սկսեցին խոսել ոչ միայն վիրտուալ քաղաքականության, այլ նաև վիրտուալ կուսակցությունների ստեղծման մասին՝ հիմնված ժամանակակից քաղաքական համակարգին անհայտ անդամակցության սկզբունքների վրա: Այլևս կարիք չկա, որպեսզի կուսակցության անդամները ամեն անգամ հավաքվեն որոշակի վայրում կուսակցության խնդիրների քննարկման կամ քվեարկությանը մասնակցելու համար: Ինտերնետն էլեկտրոնային փոստի, տեսակոնֆերանսների և ցանցային կուսակցական էլեկտրոնային կազմակերպությունների այլ ձևերի միջոցով կարող է հնարավորություն տալ անցկացնելու խորհրդակցություններ, համագումարներ, կոնֆերանսներ, հանդիպումներ ընտրողների հետ և իրականացնելու ինտերակտիվ կուսակցական աշխատանքների այլ ձևեր արանց լրացուցիչ ճանապարհային, գործուղման, հյուրանոցային և այլ ծախսերի, ընդ որում՝ բազմապատիկ մեծացնելով տեղեկատվության փոխանակման, սեփական կարծիքի պաշտպանության և քաղաքական հաղորդակցության այլ ձևերի հնարավորությունը: Եթե տեսականորեն հնարավոր է օնլայն ռեժիմով տեսակոնֆերանսների անցկացումը գործնականում կուսակցության անսահմանափակ թվով անդամների մասնակցությամբ, որոնք գտնվում են տարբեր վայրերում, ապա հեռու չէ այն ժամանակը, երբ կուսակցական վիրտուալ համագումարները կփոխարինեն որոշակի վայրում ֆիզիկապես պարտադիր ներկայությանը և ավանդական համագումարներին մասնակցելու ծախսատար և ժամանակատար գործընթացին: Ինտերնետի իմաստն այն է, որ հանդիպման վայրի՝ որպես մարդկային հաղորդակցության տարածական կետի հասկացությունը վերանում է: Ժամանակակից տեխնոլոգիաներն արդեն իսկ թույլ են տալիս դա անել, թեև հոգեբանորեն ոչ բոլորն են պատրաստ աշխատանքի նման ձևին: Սա պահանջում է սկզբունքորեն նոր

տեղեկատվական և քաղաքական մշակույթ: Սակայն հաղորդակցության փոխանակման արդյունավետությունը և ծախսերի կտրուկ նվազումը վաղ թե ուշ կանեն իրենց գործը, և էլեկտրոնային վիրտուալ համագումարները կդառնան կուսակցական աշխատանքի սովորական ձև:

Այսօր քաղաքական հաղորդակցության այս մոդելը Հայաստանի քաղաքական կյանքում կարող է լինել առավել արդյունավետ՝ հատկապես ընդդիմության նկատմամբ իշխանության վարած տեղեկատվական բլոկադայի (հատկապես՝ հեռուստատեսության) պայմաններում:

Տեղեկատվական հասարակության հետազոտողների հատուկ հետաքրքրության առարկան է ինտերնետ-տեխնոլոգիաների օգտագործմամբ էլեկտրոնային քվեարկության խնդիրը: Դա կապված է այն բանի հետ, որ բազմաթիվ երկրներում ընտրական արշավները ուղեկցվում են սոցիալական լարվածության կտրուկ աճով, հասարակական կյանքի ապակայունացմամբ՝ առանձին դեպքերում սոցիալական պայթյունների դրսևորումներով: Այդ բացասական հետևանքներից չկարողացավ խուսափել նաև Հայաստանը, որտեղ գործնականում բոլոր ընտրարշավները, սկսած 1996թ., ուղեկցվել են լրջագույն խախտումներով, զանգվածային կեղծարարություններով, վարչական ռեսուրսների չարաշահմամբ, կոռուպցիայով և անցանկալի այլ գործողություններով: Ամեն անգամ սոցիալական լարվածությունը հանգեցրել է հասարակական կյանքի լուրջ ապակայունացման, բայց սոցիալական լարվածության ծայրահեղ դրսևորումը, որն ուղեկցվեց արյունահեղությամբ, զոհերով և մեծ թվով վիրավորներով, գրանցվեց 2008թ. նախագահական ընտրության ժամանակ: Տեսականորեն ընտրական գործընթացներից բխող նման անցանկալի հետևանքներն օրինաչափորեն հանգեցնում են այն հարցին, թե կարո՞ղ են արդյոք ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները նվազագույնի հասցնել ընտրակեղծիքների հնարավորությունները: Այլ կերպ ասած՝ կարո՞ղ է արդյոք համակարգչային տեխնոլոգիան սկզբունքորեն բացառել մարդկային գործոնի դերը, և այդպիսով ապահովել ազնիվ ու արդար ընտրություններ, առանց որի ժողովրդ-

դավարության վերաբերյալ բոլոր խոսակցությունները ձևականություններ են: Այդ հարցին հաստատուն պատասխանի դեպքում էլեկտրոնային ժողովրդավարության նշանակությունը կմեծանա՝ հասնելով որակապես նոր և այլընտրանք չունեցող մակարդակի: Այսօր մշակվել են քվեների հաշվարկի և քվեարկության այլ տարրերի համար անհրաժեշտ ստանդարտ էլեկտրոնային տեխնոլոգիաներ, սակայն դրանք դեռևս չունեն համընդհանուր միջազգային կիրառում: Այնուամենայնիվ, այդ ուղղությամբ տարվում են եռանդուն աշխատանքներ:

Բնական է, որ քվեների հաշվման ժամանակ մարդկային գործոնի բացառումից զատ, դրանք պետք է պաշտպանված լինեն արտաքին միջամտությունից կամ համակարգչահենների (հակերների) ներգործությունից մի քանի մակարդակներով: Ինչ վերաբերում է ֆինանսական կողմին, ապա միջազգային բազմաթիվ դիտորդների գործողումներին հատկացվող քիչ արդյունավետ ծախսերի փոխարեն ինտերնետ տեխնոլոգիաները հնարավորություն կընձեռեն տարածության վրա վերահսկել ընտրությունները:

Դրա համար, բնականաբար, կպահանջվեն համապատասխան համաձայնություններ և իրավական կարգավորում, սակայն, եթե ստեղծվի քվեների օբյեկտիվ հաշվարկման միջազգային տեխնոլոգիական ստանդարտ, ապա ո՛չ ֆինանսական ծախսերը, ո՛չ էլ այլ պատկերացումներ չեն կարող խոչընդոտել էլեկտրոնային տեխնոլոգիաների հետագա ազդեցությանը ընտրությունների ժողովրդավարացման գործընթացի վրա:

Այսուհանդերձ ներկա պահին անհնար է միանշանակորեն պնդել, թե նման տեխնոլոգիաների զարգացումը ինչպես կազդի ընտրական գործընթացների վրա: Սակայն, ընդհանուր առմամբ, պետք է ընդունենք, որ զարգացման նշյալ ուղղությունը հսկայական ներուժ ունի, որն ունակ է արմատապես փոխելու ժողովրդավարական կառավարման մասին բազմաթիվ պատկերացումներ: Անկասկած, ապագայում քաղաքական գործիչները ստիպված կլինեն լրջորեն ուշադրություն դարձնել Ինտերնետի միջոցով քվեարկության խնդրին և գտնել մեխանիզմներ, որոնք կնպաստեն ընտրողների մասնակցության,

բնակչության քաղաքական ակտիվության աճին՝ միաժամանակ կանխելով կեղծարարություններն ու նենգափոխությունները, որոնք սպառնում են ժողովրդավարական կառավարման հիմքերին՝ այդպիսով ձևավորելով նոր քաղաքական մշակույթ:

Տեղեկատվական տեխնոլոգիան ունակ է քաղաքական ակտիվ կյանքի մեջ ներգրավելու բնակչության լայն շերտերի, վեր հանելու ժամանակի հրատապ հարցերի վերաբերյալ հասարակական կարծիքը, քաղաքացիներին իրազեկելու պետական մարմինների, կուսակցական և այլ կազմակերպությունների գործունեության մասին: Քաղաքական որոշումների ընդունման գործընթացում ինտերնետ-տեխնոլոգիաների օգտագործումը, չփոխելով պրակտիկ գործունեության նպատակաուղղվածությունը, կարող է նպաստել այլընտրանքային հնարավորությունների բացահայտմանը և քաղաքական վարքի առավել հիմնավորված ընտրությանը:

Տեղեկատվական տեխնոլոգիաների բարերար ազդեցությունը ժողովրդավարացման գործընթացի վրա այնքան մեծ է, որ հաճախ խոսում են հեռահաղորդակցական ժողովրդավարության մասին, այսինքն՝ հաղորդակցական միջոցներին միացման միջոցով ուղղակի ժողովրդավարության հաստատման մասին:

Սակայն գոյություն ունեն նաև ճիշտ հակառակ կարծիքները, որոնք հիմնավորում են պետական վերահսկողության դերի ուժեղացումը՝ շնորհիվ այդ նույն տեղեկատվական տեխնոլոգիաների:

Պետական վերահսկողության սահմանների ճշգրտման դժվարությունները առաջացնում են ժողովրդավարական արժեքների խթարման իրական սպառնալիք: Որոշ հետազոտողներ պնդում են, որ տնտեսության ոլորտի ապակենտրոնացումը կնպաստի քաղաքական իշխանության կենտրոնացմանը: Ջ. Բժեզինսկին նշում է, որ հասարակության քաղաքական կառավարման մեջ տեղեկատվական տեխնիկայի կիրառումը հանգեցնում է համակարգային-տեխնիկական մեթոդների ձևավորմանը և հետո կհանգեցնի համակարգային տեխնոկրատիայի կազմավորմանը՝ որպես ժողովրդավարության հակոտնյայի: «Ըստ երևույթին, համակարգավարման (սիստեմակրատիայի) միտումները ապագայում յուրատեսակ և հետզհետե ավելի

ուժեղացող մարտահրավերներ կնետեն ժողովրդավարական հասարակությանը՝ որպես բյուրոկրատիայի բոլոր ձևերի և ուղղությունների միասնություն, որի իմաստն այն է, որ պետք է կատարվի սոցիալական դերերի և գործառույթների ավելի հստակ բաշխում հասարակության լիակատար տեխնիկականացման, ավտոմատացման և համակարգչայնացման հիմքի վրա:⁵⁹

Համակարգիչների կիրառումը կարող է նպաստել պետության հարկադրողական (ռեպրեսիվ) գործառույթների ամրապնդմանը, քաղաքացիների քաղաքական ազատության սահմանափակմանը և, ի վերջո, «համակարգչային ահաբեկչության» հաստատմանը:

Ժամանակակից տեղեկատվական տեխնիկայի օգնությամբ քաղաքական և ոստիկանական վերահսկման վտանգը դառնում է ավելի ու ավելի իրական: Այսպես, 1970-ական թթ. ամերիկյան հասարակությանը հայտնի դարձավ, որ Կենտրոնական հետախուզական վարչությունը իր համակարգչային տվյալներում ներառել է 3000 «անվտառիտի» համերկրացիների անուններ: Բազմաթիվ քաղաքական գործիչների վերաբերյալ տեղեկատվություն է հավաքվել էլեկտրոնային թղթապանակներում: Բջջային հեռախոսներից օգտվող շվեյցարացիների բոլոր տեղաշարժերին հետևում է հզոր համակարգիչը: Այն կարող է օգտագործվել աշխատողների և ծառայողների ամենօրյա գործունեությանը հետևելու համար: Ռուսաստանում կապի նախարարությունը որոշում է կայացրել տեխնիկական միջոցների համակարգ տեղադրել բոլոր հեռախոսային ցանցերի էլեկտրոնային հեռախոսային կայաններում՝ օպերատիվ-հետախուզական գործողությունների ապահովման նպատակով: Նման փաստերի թվարկումը կարելի է շարունակել: Բայց հատկապես վտանգավոր է այն, որ այդ տեղեկատվության նկատմամբ վերահսկողությունը հաճախ օգտագործվում է քաղաքական չարաշահումների նպատակով՝ սկսած տեղեկատվությունը գաղտնի պահելուց մինչև այն

⁵⁹ *Бжезинский* З. Великая шахматная доска. Москва, “Международные отношения”, 2005, с. 74.

ապօրինաբար գաղտնագերծելը և քաղաքական պայքարի այլ ձևերի ժամանակ այս կամ այլ անձանց արատավորելը:

Որոշ սոցիոլոգներ հիմնավոր կերպով նշում են, որ ներկայումս տեղեկատվական տեխնիկայի միջոցով անձանց ուստիկանական և քաղաքական վերահսկման վտանգը դառնում է ավելի ու ավելի սկնհայտ: ԱՄՆ կոնգրեսի նախկին սենատոր Ս. Էրվինը նշում է, որ երկրի՝ գործնականում բոլոր քաղաքացիների վերաբերյալ գոյություն ունեն հսկայական թղթապանակներ, որոնք պահվում են մեծ քանակությամբ պետական տվյալների բանկերում: Այդ մասին տեղեկություն տրամադրող 54 գործակալություններ զեկուցել են 858 տվյալների բանկերի գոյության մասին, որոնք պարունակում են անհատներին վերաբերող 1.25 մլրդ ձայնագրություններ: ԱՄՆ-ում էլեկտրոնային լրտեսություն է իրականացվում համակարգչային աշխատողների մոտ 75%-ի նկատմամբ:⁶⁰

Այսպիսով՝ տնային համակարգիչը, ինչպես նաև բջջային հեռախոսը կարող են հանդես գալ որպես աշխատողների «էլեկտրոնային հսկիչ»: Դա ընկերություններին թույլ է տալիս իրենց աշխատողներին և ծառայողներին պահել մշտական լարվածության և վախի մեջ: 2012թ-ից Հայաստանի որոշ շրջաններում և հատկապես՝ մայրաքաղաքում ճանապարհատրանսպորտային երթևեկի վերահսկման և կարգավորման համար տեղադրված նկարահանման սարքերը, ինչպես նաև սպասվելիք էլեկտրոնային անձնագրերի ներդրումը նույնպես կարող են ծառայել մարդկանց տեղաշարժերի էլեկտրոնային վերահսկմանը թույլ քաղաքացիական հասարակության պայմաններում: «էլեկտրոնային աչքի» մշտական վերահսկողության զգացողությունը կարող է մարդուն դուրս բերել հոգեկան հավասարակշռությունից, հանգեցնել զանգվածային պարբերական ընկճվածության, անձի ապաստանականացման, նախաձեռնողականության, զանգվածային հնազանդության և ստեղծագործական խթանի կորստի: Արդյունքում, ավելանում են «տեխնոսթրեսները», աշխատողների

⁶⁰Смолян Г. Сетевые информационные технологии и проблемы безопасности личности. “Информационное общество” №1, 1999, с. 21-25.

պահանջները վերադառնալու անհատականացված վերահսկողությանը՝ որպես «երկխոսություն թույլատրող», աշխատանքային կյանքի «մասնավոր ոլորտ» ներխուժելու դեմ բողոքները, բազմապատկվում են սոցիոլոգների կոչերը՝ վստահելու աշխատողների նոր սերնդին, նրանց ինքնակարգապահությանն ու ինքնավերահսկմանը:

Տեխնիկական առաջընթացն արդեն հանգեցրել է այնպիսի անտեսանելի «հրաշքների», երբ բջջային հեռախոս ունեցող յուրաքանչյուր մարդ կարող է զգալ հատուկ ծառայությունների «շունչը»: Օրինակ՝ Անգլիայում, Շվեյցարիայում և Ինդոնեզիայում ոչ միայն մշակվել, այլև արդեն շահագործվում են այնպիսի համակարգեր, որոնք թույլ են տալիս հետևել բջջային հեռախոսներ կրող մարդկանց տեղաշարժերին, անկախ այն բանից՝ միացված են դրանք, թե ոչ:

Տեղեկատվության նկատմամբ վերահսկողությունը ավելի հաճախ վերածվում է չարաշահումների, սկսած տեղեկատվությունը գաղտնի պահելուց, մինչև դրա անօրինական կամ անցանկալի հրապարակումը: Պետության կողմից այդ վերահսկողությունը ձեռք է բերում ավելի ու ավելի ընդգծված քաղաքական բնույթ: Տեղեկատվական համակարգը թույլ է տալիս ոչ միայն թելադրել հավաքվող սոցիալական տվյալների հավաքման կանոնները և բնույթը համակարգչի գործառնությունների տեսանկյունից, այլ նաև համապատասխանեցնել օրենսդրության և օրենքների կիրառումը ծրագրավորման լեզվի կողմից թելադրվող պահանջներին, ինչը նպաստում է անձի և հասարակության նկատմամբ տեխնոկրատական համընդհանուր վերահսկողության հաստատմանը: Անձնական կյանքի ոլորտում առկա, ինչպես նաև տեղեկատվական գաղտնիքի հրապարակման սպառնալիքները խթանեցին անձնական տվյալները չարտոնված օգտագործումից պաշտպանելու իրավական խնդրի զարգացմանը, ինչն ունի ոչ միայն բարոյական, իրավական, այլ նաև քաղաքական նշանակություն: Այսպես, տեխնիկական խնդիրները էլ ավելի են միահյուսվում քաղաքական խնդիրների հետ: Առավել զարգացած երկրներում անօրինական էլեկտրոնային վերահսկողության դեմ պայքարը կարգավորվում է օրենսդրությամբ և քաղաքացիական տարբեր տեսակի նախաձեռնություններով, հակաժողովրդավարա-

կան լիակատար էլեկտրոնային վերահսկողության տարատեսակ դրսևորումների դեմ պայքարով ու բողոքի հրապարակային գործողություններով:

Սակայն որոշել այն սահմանը, որտեղից պետությունը պարտավոր է էլեկտրոնային վերահսկողության միջոցով ապահովել իր քաղաքացիների անվտանգությունը կիբեռհանցագործներից, ահաբեկիչներից, թշնամական տեղեկատվական հարձակումներից և ազգային շահերին սպառնացող այլ աղբյուրներից, ներքաղաքական նպատակներով էլեկտրոնային վերահսկողության գործադրումից, քաղաքական հակառակորդներին և առանձին քաղաքացիների շանտաժի կամ ճնշումների ենթարկելուց և հակաժողովրդավարական այլ նպատակներից, բավականին բարդ է: Առավել ևս, որ քիչ չեն ոչ պետական էլեկտրոնային վերահսկողության դեպքերը բիզնես-գործընկերների, կուսակցական կամ ոլորտային մրցակիցների շրջանում:

Տեխնոլոգիան կարող է օգնել ժողովրդավարությանը, եթե այն նպատակաւացորեն ծրագրավորված լինի դրա համար, և միայն այդ ծրագրերում քաղաքական հարացույցների և տեսությունների ներառման դեպքում:

Նա, ով տեխնոլոգիաներ կիրառելիս գիտակցաբար ձգտում է ավելի կշռադատված, կայուն մասնակցային ժողովրդավարության և նոր ուժեղ քաղաքացիական հասարակության, ի դեմս հեռահաղորդակցական նորարարությունների՝ կարող է ձեռք բերել բացառիկ արդյունավետ դաշնակցի: Տեխնոլոգիայի մեջ ժողովրդավարական ազատության գործիքը փնտրող լավատեսների հիմնական խնդիրը ոչ թե այն է, որ նրանք սխալ են հասկանում տեխնոլոգիայի էությունը, այլ այն, որ նրանք չեն հասկանում ժողովրդավարության էությունը: Նրանք պնդում են, որ շուկայի ծնունդ տեխնոլոգիան կարող է ինքնըստինքյան, առանց մարդկանց կամքի գործադրման և առանց քաղաքական փոխազդեցության, վերարտադրել ազատությունը, սոցիալական պատասխանատվությունը և քաղաքացիական ինքնագիտակցումը:

Ինտերնետ-տեխնոլոգիաների քաղաքական հետևանքները, այսպիսով, երկակի են. մի կողմից՝ քաղաքական անհատական ինքնաարտահայտման նոր միջոցների հայտնագործումը, մյուս կողմից՝ քաղաքացիների վերաբերյալ տեղեկատվության ավելի մեծ ծավալի հասանելիությունը, որոնք հնարավորություն են տալիս կատարելագործել քաղաքական վերահսկողության տեխնոլոգիաները: Սակայն ուշադրություն չդարձնել ժողովրդավարությանը վնասող բացասական հետևանքներին, որոնք ծնուն են տեղեկատվական տեխնոլոգիաները, «Ինտերնետ և ժողովրդավարություն» հիմնախնդրի ցանկացած հետազոտություն դարձնում են միակողմանի:

Այսպիսով՝ տեղեկատվական հասարակությունում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը ստեղծում է ոչ միայն նոր հնարավորություններ հասարակական կյանքի ժողովրդավարացման, որակապես նոր քաղաքական մշակույթի ձևավորման և պետության զարգացման համար, այլև ստեղծում է սկզբունքորեն նոր տեղեկատվական սպառնալիքներ անհատի, հասարակության և ամբողջ պետության համար: Այս և նմանատիպ խնդիրների արդյունավետ կառավարման և կարգավորման համար հարկ է մշակել համապատասխան պետական տեղեկատվական քաղաքականություն Հայաստանում տեղեկատվական հասարակության ներդաշնակ զարգացման համար:

3.4. Տեղեկատվական հասարակության զարգացման ցուցանիշները Հայաստանում

Համաձայն տարբեր միջազգային կազմակերպությունների և փորձագիտական տվյալների՝ Հայաստանում տեղեկատվական հասարակության ձևավորումը կրում է հակասական բնույթ:

Ըստ Հեռահաղորդակցության Միջազգային Միության հրապարակած «Տեղեկացված հասարակության հաշվարկում 2011» վիճակագրական տվյալների՝ պետությունների տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) զարգացման ցուցանիշի և

ՏՀՏ միջին գնային զամբյուղի համաթվով Հայաստանը 152 երկրների շարքում ՏՀՏ զարգացման ցուցակում 2010-ին զբաղեցրել է 72-րդ տեղը: Այս կերպ Հայաստանը առաջ է անցել Ադրբեջանից և Վրաստանից, որոնք զիջում են դիրքերը՝ զբաղեցնելով 74-րդ և 77-րդ տեղերը ցուցակում:

Նույն ժամանակամիջոցում մի շարք զարգացող երկրներ էականորեն առաջընթաց են ապրել ՏՀՏ տարածման և զարգացման տեսանկյունից: Հայաստանը զբաղեցնում է առաջին տեղը ՏՀՏ ոլորտում աշխարհի ամենադինամիկ զարգացող երկրների տասնյակում՝ երկու տարվա մեջ աճելով 31%-ով: Այս ցուցանիշով Հայաստանը լավագույնն է: Ադրբեջանն ու Վրաստանը զիջում են Հայաստանին: Ադրբեջանը 4-րդն է ցուցակում, իսկ Վրաստանը՝ 6-րդը:⁶¹

Միավորված Ազգերի Կազմակերպության Տնտեսական և սոցիալական զարգացման վարչությունը հրապարակել է «Էլեկտրոնային կառավարության 2012-ի ուսումնասիրություն. էլ-կառավարություն մարդկանց համար (E-Government Survey 2012: E-Government for the People)» զեկույցը: Այն իրենից ներկայացնում է աշխարհի 193 երկրների վարկանիշային աղյուսակը՝ ըստ էլեկտրոնային կառավարության պատրաստվածության մակարդակի:

Զեկույցը գնահատում է տարբեր երկրների պետական մարմինների պատրաստվածությունը, պատրաստակամությունն ու հնարավորությունները պետական ծառայությունների մատուցման գործում տեղեկատվական-հեռահաղորդակցական տեխնոլոգիաներ (ՏՀՏ) կիրառելու հարցում:

Աղյուսակում երկրները դասակարգվում են 3 հիմնական ցուցիչների հիման վրա՝ առջանց ծառայությունների մասշտաբի և որակի, ՏՀՏ ենթակառուցվածքի զարգացվածության և մարդկային կապի-

⁶¹ *International Telecommunication Union*,
http://www.itu.int/ITU-D/ict/publications/idi/2011/Material/MIS_2011_without_annex_5.pdf.

տալի: Տարածաշրջանի երկրներից առաջատարը Վրաստանն է՝ 72-րդ տեղում, Ադրբեջանը 96-րդն է, Հայաստանը՝ 94-րդը:⁶²

Ըստ «2010-2011թթ. Համաշխարհային տեխնոլոգիական զեկույցի» տվյալների՝ Հայաստանը ցանցային պատրաստվածության ցուցանիշով գտնվում է 109 տեղում Էկվադորի և Բոսնիա և Հերցեգովինայի միջակայքում: Նշենք, որ 2009-2010թթ. համեմատ այս ցուցանիշի տեսանկյունից Հայաստանը նահանջել է ութ աստիճանով: Հարևան երկրները, ի տարբերություն Հայաստանի, գտնվում են ավելի շահեկան դիրքերում՝ Ադրբեջան՝ 70-րդ, Վրաստան՝ 98-րդ, Թուրքիա՝ 71-րդ, Իրան՝ 101:

Նմանատիպ հակասական ցուցանիշները վկայում են Հայաստանում տեղեկատվական հասարակության ձևավորման գործում պետական նպատակաուղղված քաղաքականության բացակայության մասին: Միայն համապատասխան պետական տեղեկատվական քաղաքականության առկայության պարագայում է հնարավոր Հայաստանում ձևավորել տեղեկատվական հասարակություն՝ հաշվի առնելով հասարակական կյանքի փոխակերպման գործընթացում տեղի ունեցող բոլոր դրական և բացասական հետևանքները:

Այսպիսով՝ վերը նշված ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ տեղեկատվական հասարակության ներդրումը բացառապես նոր երևույթ է հայաստանյան քաղաքական մշակույթում, որը պահանջում է գիտական և պետական լուրջ մոտեցում:

⁶² *United Nations*, E-Government Survey 2012 /E-Government for the People/ unpan1.un.org/intradoc/groups/public/.../un/unpan048065.pdf.

ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն հետազոտության նպատակը Հայաստանում քաղաքական մշակույթի առանձին տարրերի ուսումնասիրությունն ու վերլուծությունն է: Ուսումնասիրության արդյունքում հնարավոր եղավ բացահայտել Հայաստանում քաղաքական մշակույթի որոշ առանձնահատկություններ:

Այսպիսով՝ քաղաքական խոսույթի համատեքստում ուսումնասիրելով Հայաստանում 1991-2012 թթ. ընտրությունների ժամանակ ընտրազանգվածի քաղաքական մասնակցությունը՝ որպես հասարակության քաղաքական մշակույթի բաղադրատարր՝ կարելի է պնդել, որ Հայաստանում քաղաքական մասնակցությունը հիմնականում եղել է անկայուն և ուղղորդվել է կոնֆլիկտային քաղաքական խոսույթով: Միայն 2012թ. ԱԺ ընտրությունների նախընտրական և հետընտրական գործընթացներն են, որոնք առանձնանում են քաղաքական խոսույթի դրսևորման տեսանկյունից, քանի որ սույն ժամանակաշրջանում քաղաքական դաշտում հիմնականում նկատվել են ոչ թե կոնֆլիկտային, այլ համաձայնության խոսույթին ներհատուկ տարրեր:

Որպես քաղաքական մշակույթի տարր՝ Հայաստանում գրեթե բացակայում է քաղաքական բանավեճի մշակույթը, ինչը կարևոր պայման է երկրում քաղաքական մշակույթի մակարդակի գնահատման համար: Քաղաքական բանավեճի մշակույթի զարգացումը մեզանում խիստ կարևոր է և անհրաժեշտ, քանի որ այս բացը ևս բացասաբար է անդրադառնում մեր քաղաքական համակարգի արդյունավետ գործառնության վրա: Քաղաքական բանավեճի բացակայությունն առաջին հերթին պայմանավորված է Հայաստանում հայեցակարգային գաղափարական պլուրալիզմի բացակայությամբ, քանի որ քաղաքական դաշտում ակտիվ գործող կուսակցությունների ծրագրերը հիմնականում չեն տարբերվում միմյանցից: Այս պարագայում քաղաքական ուժերը շեշտը դնում են բացառապես առաջնորդի անձնական որակների վրա: Այն հանգամանքը, որ հասարակությունը դեռևս գտնվում է քաղաքական սոցիալականացման անձնավորման

փուլում, հնարավորություն է տալիս քաղաքական ուժերին ներկայա-
նալ առաջնորդ անձի կերպարով: Այդ պատճառով է, որ քաղաքա-
կան ուժի գոյությունը քաղաքական դաշտում գլխավորապես պայմա-
նավորվում է առաջնորդով: Այսպիսի կուսակցություններում լիդերա-
յին դետերմինիզմի բացասական և վտանգավոր կողմն է նաև այն, որ
առաջնորդի անձնական վարքագծով է պայմանավորված քաղաքա-
կան ուժի կենսագործունեությունը:

Հետագոտելով քաղաքական մշակույթը տեղեկատվական հա-
սարակության համատեքստում՝ Հայաստանի քաղաքական մշակույ-
թում կարելի է առանձնացնել քաղաքական ինստիտուտների փոխ-
գործակցության, ինչպես նաև քաղաքական տեղեկատվական տա-
րածության նոր մոդելի ձևավորում, այն է՝ էլեկտրոնային կառավար-
ման համակարգի ներդրումը, որը նոր հնարավորություններ է ստեղ-
ծում քաղաքական տեղեկատվության տարածման, քաղաքական
ուժերի և հասարակության միջև հաղորդակցության, էլեկտրոնային
ժողովրդավարության զարգացման համար: Այս մոդելն իրական հնա-
րավորություն է ստեղծում տեղեկատվական դաշտում քաղաքական
ուժերի միջև հավասար պայքար մղելու տեսանկյունից, ինչի զար-
գացման համար անհրաժեշտ է Հայաստանում ձևավորել նոր տեղե-
կատվական քաղաքական մշակույթ: